Էջմիածին



1961

ՌՆԺԱ
ԺԸ ՏԱՐԻ

Օգոստոս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ը

1961

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ. ՍԵՐԻ
ՏՈՒՆԱՏԵՍԵՆՍԻԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Սրբազան կտակը	3
Հաղորդագրություն	7
Հանգիստ Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանի. Սրբազան Պատրիարքի Կոստանդնուպոլսի հայոց	8
ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ	10
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Թուրքիայի հայության	12
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ— Օրմանյան և իր ժամանակը	48
Հանգիստ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի	62

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1961 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՍՐԲԱԶԱՆ ԿՏԱԿԸ

(ՀՈԳԵԼՈՒՅՍ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ)

Հայ ևս է Կոստանդնուպոլսի Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հայրը, հայ եկեղեցականության արի և բարի նահապետը:

Հունիսի 22-ին, Ստամբուլի Հայոց Պատրիարքանից ստացված հեռագիրը գուժում էր մահը Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի, երկրորդ անգամ կրկնվող սրտի հանկարծական և սուր տագնապի հետևանքով:

Պատրիարք Սրբազանը աչքերը փակում էր աղոթքը շրթներին, Աստուծո Տանը, ուր եկել էր ոգեկոչելու հիշատակը հայ գրի և դպրության երկու մեծ երախտավորների՝ Ս. Սահակ Պարթև Հայրապետի և Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետի:

Մեծ է կորուստը Հայ Եկեղեցու և խոր վիշտը մեր ժողովրդի:

Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռը կորցնում էր իր արժանավոր, գրագետ Պատրիարքին, Հայ Եկեղեցին՝ նշմարիտ հոգևորականի բոլոր արժանիքներով օժտված քաջ և անձնդիր Հովվին, որի կյանքը եղել է նվիրում և «պատարագ ի վերայ Սեղանոյ Սրբութեան սպասու Եկեղեցւոյ», երիտասարդ տարիքից մինչև խոր ծերությունը:

Հանգուցյալ Պատրիարքը անցել է ծառայության և գործունեության պատասխանատու, մերթ դժվարին և մերթ հաղթական ուղի, փայլուն արդյունավորությամբ:

Հավատի և խորունկ համոզմունքների մարդն է հանգուցյալը: Նա, իր եկեղեցասեր և ժողովրդանվեր գործունեությամբ, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, իր նկարագրի ազնվությամբ, մտքի և հոգու նշմարիտ հարստությամբ, իր գրական վաստակով և մեր դասական հոգևորականների տեսլականով բարի անուն և անմոռաց հիշատակ է թողնում Հայ Եկեղեցու կյանքի մեջ և մեր ժողովրդի երախտագետ սրտում:

«ԵՐԱՆԻ ՄԵՌԵԼՈՅՆ, ՈՐՔ Ի ՏԷՐ ՆՆՋԵՑԻՆ, ՉԻ ԳՈՐԾՔՆ ԻԻՐԵԱՆՑ ՉՈՔԱՆ ՉՀԵՏ ՆՈՅԱ» (Յայտնք. ԺԴ 13):

Գարեգին Պատրիարքի մահը խոր վիշտ է պատճառում նաև Ազգիս Վեհափառ Հայրապետին, որը բարեհաճում է անձամբ ներկա լինել Հոգելույս Պատրիարքի վերջին օծման և թաղման հանդիսություններին, մեղմելու համար Ստամբուլի Իր հոգևոր զավակների մեծ վիշտը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից տանելով օրհնություն և սփոփանք:

Վեհափառ Հայրապետի Ստամբուլ կատարելիք մխիթարական այցելության բարի լուրը սրտագին գոհունակությամբ է ընդունվում Ստամբուլի հայ համայնքի կողմից:

Կոստանդնուպոլսի Պատրիարքության սկզբնավորությունից հետո, երկրորդ անգամն է, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցելություն էր տալիս Ստամբուլում ապրող Իր հոգևոր զավակներին:

1679 թվականի վերջերին, Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը (1655—1680), երեք եպիսկոպոսներով և երեք պատգամավոր իշ-

խաններով, գնում էր Կոստանդնուպոլիս, կարգադրելու համար «Եղիազարի (Այնթապցու) հակաթոռ կաթողիկոսության և Կոստանդնուպոլսո Պատրիարքական Աթոռի շփոթությանց խնդիրները»,— գրում է Օրմանյան Սրբազանը («Ազգապատում», Բ. էջ 2611):

Ջուղայեցին ջերմորեն է ընդունվում Կոստանդնուպոլսում. «Եկին ի տեսութիւն նորա բազումք ի մեծամեծացն հայոց, և թեպէտ գրեթէ ամենեքին նոքա ի կողմն Եղիազարու էին, բայց յորժամ տեսին զքաղցր բարս և զառաքինազարդ քաղաքավարութիւն նորա, որում չէին յայնչափ տեղեակ յառաջմէն, յարեցան ի նա ի սրտէ և բազումք դարձան ի կողմն նորա» (Հ. Մ. Զամչյան, «Պատմութիւն Հայոց», Գ, էջ 714):

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը երկրորդ կաթողիկոսն էր, որ 1961 թվականի հուլիսին այցելում էր Կոստանդնուպոլիս:

Մի տխուր առիթով և շատ ծանր, բայց սրտագին մի պարտականություն կատարելու առաքելությամբ էր, որ այս անգամ Ամենայն Հայոց Հայրապետը գնում էր Ստամբուլ:

Իր մեծ սուգի և վշտի մեջ, Ստամբուլի հայ համայնքը, միասիրտ և միակամ, գիտեցավ արժանավոր հանդիսությամբ, վեհությամբ և խանդավառորեն դիմավորել իր Հոգևոր Հորը, Ազգիս Վեհափառ Հայրապետին:

Վեհափառ Հայրապետը, Ստամբուլում և Անգարայում, Իր շնորհաբեր այցելության 20 օրերին, խորապես մխիթարվում է Իր հոգևոր զավակների փառաեղ և սրտառուչ ընդունելությամբ: Ստամբուլի հայությունը ապրում է հոգեկան հուզումների, կրոնական խոհերի երանելի, անմոռանալի օրեր:

Ամենայն Հայոց Հայրապետը Թուրքիայում բացառիկ սիրով ու հարգանքով դիմավորվում է քրիստոնեական քույր եկեղեցիների, դավանությունների պետերի, կառավարական բարձրաստիճան անձնավորությունների և դիվանագիտական մարմինների կողմից:

Վեհափառը Իր շնորհաբեր այցելությամբ, Իր պերճախոս քարոզներով, հայրապետական պատգամներով, հայրական քաղցր վերաբերմունքով անմոռանալի և անջնջելի տպավորություն է թողնում ամենուրեք:

Կրոնական և ազգային սրտագին ավանդություններով սնված ու ապրած Ստամբուլի հայ համայնքը, առաջին իսկ ոտքից, սիրում է իր Վեհափառ Հայրապետին և իր ջերմ սրտի մեջ պահում Նրան Նրա այցելության ամբողջ տևողության ընթացքին, որովհետև, Ստամբուլի հայության համար ևս, Ս. Էջմիածինը գերագույն և համազգային միակ սրբավայրն է. Միածնի հրաշալի իջման խորհրդով և Ս. Լուսավորչի կանթեղի լույսով խոր արմատ գցած հայ հոգիների մեջ:

Վեհափառ Հայրապետը նվաճեց բոլորի սրտերը և առարկան եղավ բոլորի հիացմունքին և երախտագիտության: Արդարև, պատմական է մնալու Վեհափառ Հայրապետի այս ուղևորության հոգևոր բարոյական նշանակությունը Ստամբուլի մեր ժողովրդի եկեղեցական ամբողջ տարեգրության մեջ:

Ամսագրի հաջորդ էջերում կա լայն արձագանքը Վեհափառ Հայրապետի այդ բարեբաստիկ ուղևորության պատճառած հոգևոր բերկրանքի, ցնծության և մխիթարության:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ էր վերադառնում խորապես մխիթարված, լավատես, որ Ստամբուլի հայ համայնքի ծոցում «այսքան կենդանի է մեր նախնյաց սուրբ հավատքը, որ այսքան ծաղկեալ են ձեր եկեղեցիները, որ դուք այսքան կազմակերպված կերպով կապրիք կրոնական համայնքներու մեջ, իբրև նշմարիտ զավակները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո: Կվերադառնանք դեպի սուրբ էջմիածին բազում խոր ապրումներով, զորս ունեցանք այստեղ, Ոսփորի գեղածիծաղ այս ափերուն վրա, ապրումներ, որոնք քաղեցինք ձեր հոգիներեն, ձեր հուզումներեն, ձեր արտահայտություններեն»,— ասում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հրաժեշտի Իր խոսքի մեջ Ստամբուլում:

1950 թվականի նոյեմբերի 26-ին Կոստանդնուպոլսի Պատրիարքական Աթոռի վրա էր բարձրանում Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը: Այս արժանավոր ընտրությամբ վերջ էին գտնում հոգելույս Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանի մահից հետո Կոստանդնուպոլսի Աթոռի շուրջ և Ստամբուլի հայ համայնքի ծոցում ստեղծված վեճերն ու երկպառակությունները:

Նորընտիր Պատրիարքը խաղաղություն է ստեղծում իր Գահի շուրջը և իր ժողովրդի ծոցում, մխիթարություն, լույս և սեր բաշխում իր ժողովրդին, վերանորոգվում են եկեղեցիները, վերաբացվում են վարժարանները, ծաղկում է հոգևոր կյանքը, հրատարակվում է «Շողակաթ» ամսագիրը և Ստամբուլում ապրող ավելի քան 80 000 հայությունը ամփոփվում է իր Պատրիարքի շուրջ և կարծես վերադառնում են Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության փառքի հին օրերը:

Այստեղ երախտագիտությամբ պետք է նշել, որ հանգուցյալ Պատրիարքի օրով Ստամբուլում գործում են 30 հայ եկեղեցիներ շուրջ 40 հայ հոգևորականներով, մինչ երեք եկեղեցիներ գործում են Տիգրանակերտում, Կեսարիայում և Իսկենդերունում:

Գրագետ Պատրիարքը հայրական իր հոգեվոր հովանավորության տակ էր առել նաև Ստամբուլի 22 հայկական դպրոցները, 11 սանուց միությունները և 14 եկեղեցական երգչախմբերը: Իսկ համազգային մեծ նշանակություն ունեցող հաստատությունները, հենչպիսիք են Ս. ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԸ, ԳԱԼՖԱՅԱՆ և ԳԱՐԱԿՅՈՉՅԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐԸ, հանգուցյալ Պատրիարքի սրտի մոտ և հանապազ ուշադրության կենտրոնում եղող հաստատություններ հանդիսացան:

Հանգուցյալ Պատրիարքը իր տասնամյա պատրիարքության օրերին, սրտագին հարաբերություններ է պահում պետության հետ, ջերմորեն վայելելով նրա վստահությունն ու համակրանքը, իր իմաստուն և շրջահայաց պաշտոնավարությամբ, հոգատ Հայ եկեղեցու և հայ համայնքի հոգևոր կյանքի շինության և պայծառության:

«Գիտցավ լավագույն հարաբերություններ մշակել Թուրքիո Հանրապետության պետական բարձր իշխանությանց հետ, գիտցավ վստահությունը շահիլ այդ իշխանությանց և իր անձով ցույց տալ իր հոտին քաղաքացիական հավատարմության հանապարհը»,— նշում էր Վեհափառ Հայրապետը Իր դամբանական խոսքի մեջ:

Սակայն հանգուցյալ Պատրիարքի գործունեության փարքն է կազմում Սկյուտարի բարձունքի վրա, «կրոնական մաքուր մբոլորտի մը մեջ» բացած Ս. Խաչ դպրեվանքը: Որպես ուսման և կրթության մարդ, նրա մեծագույն մտահոգությունը եղավ ստեղծել, նոր պայմանների մեջ և նոր պահանջների համաձայն, իր Արմաշը: Նա, որպես արմաշական, միշտ իր հոգում ուներ Արմաշի քաղցր հեռապատկերը, Դուրյանի անձով և հմայքով գեղեցկացած, ոգեղինացած: Եվ ահա Գարեգին արքեպիսկոպոսը, Պատրիարքական Գահ բարձրանալուց հետո, պատասխանատվության խորունկ զգացմունքով, ձեռնամուխ է լինում Ս. Խաչ դպրեվանքի ստեղծմանը:

Նա հոգով փարում է Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքին, պայծառ հույսեր կապելով նրա նպատակի և ապագայի հետ՝ հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ծառայության հանապարհի վրա:

1953 թվականին բացվում է Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը, մեծ ուրախություն պատճառելով Պատրիարքին: Այսօր դպրեվանքը բոլորել է իր գոյության արդեն ութերորդ տարին: Դպրեվանքում 158 աշակերտներ, որքեր, որոնցից 130-ը Թուրքիայի ներքին գավառներից, սովորում են հայոց լեզուն, դաստիարակվում են հայեցի և քրիստոնեական շնչով, մի օր Հայ եկեղեցուն և հայ ժողովրդին ծառայելու ազնիվ մտադրությամբ, բարի վճռակամությամբ:

Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը այսօր նախախնամական դեր է կատարում Ստամբուլի հայ կյանքում: Ինչպես հանգուցյալ Պատիարքն է նշել, դպրեվանքը «լուսավորության վառարան-տունն է Ստամբուլի հայ համայնքին», որտեղ պատրաստվում են մեր ապագա ուսուցիչներն ու հոգևորականները:

Ափսո՜ս, որ հանգուցյալը մխիթարությունը չունեցավ իր իսկ ձեռքով օծելու հակատները իր հոգևոր սաների:

Մահվան վերջին տարիներին, նա մտածում էր դպրեվանքի մասին:

Նրա սրբազան կտակն է՝ ապրեցնել Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը:

Արդարև, դպրեվանքի պահպանության և գոյության հարցը ՀԱՎԱՏԻ, ՊԱՏՎի, ԽՂՃի ԽՆԴԻՐՆ է ՈՉ ՄԻԱՅՆ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ, ԱՅԼ ՆԱԵՎ ՍՓՅՈՒՌՔԻ ԲՈՎԱՆԴԱԿ ՀԱՅՈՒԹՅԱՆ:

Չկա Պատրիարքը, բայց կա Աթոռը և աթոռակալի սկսած գործը՝ Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը:

Վեհափառ Հայրապետը Գումգափուի Մայր եկեղեցում հունիսի 7-ին արտասանած Իր բովանդակալից դամբանականի մեջ, խոսելով հանգուցյալ Պատարիարքի լուսավոր կյանքի և փառավոր գործունեության վրա, ամենայն կարևորությամբ շեշտում էր նաև Դպրեվանքի գոյության հարատևման հարցը. «ԿԵՌՐՀԻՆՔ, ԹԵ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՎԱՏԱՅՅԱԼՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ, ՍՐԲՈՒԹՅԱՄԲ ՊԻՏԻ ՊԱՀՊԱՆԵՆ ԱՅՍ ՀԱՍՏԱՏՈՒԹՈՒՆԸ ԱՅՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ԹԵ ԱՅՍ ԿԵՐՊՈՎ ՀԱՐԳԱՆՔԻ ԴԵՐԱԳՈՒՅՆ ՏՈՒՐՔԸ ՏՎԱԾ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ»:

Ստամբուլի հայ համայնքը արժանի հարգանքը մատուցեց իր Պատարիարքին, արցունքով և երախտագիտությամբ գերեզման դնելով նրան, և խոստացավ սրբությամբ ապրեցնել նրա մեծ գործը և հիշատակը:

Արդարև, հանգուցյալ Պատարիարքի հիշատակը և բարի անունը հավերժացնելու սրտագին միջոցն է ԱՊՐԵՑՆԵԼ ԴՊՐԵՎԱՆՔԸ: Դա կլինի միաժամանակ լավագույն մեծարանքը գրագետ Պատարիարքի անմոռանալի հիշատակին:

Անցյալ տարի այս օրերին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ, նշվում էր Գարեգին Պատարիարքի ծննդյան 80 և գրականեկեղեցական գործունեության 60-ամյակը:

Հոբելյանական հանդիսությունների արձագանքը դեռ չլռած, ահա հողին է հանձնվում մեծանուն Պատարիարքի անյուրը:

Անցյալ տարի, «Էջմիածին» ամսագրի օգոստոսի համարից սկսած, բովանդակալից մի ուսումնասիրության մեջ, սպառիչ կերպով անդրադարձել ենք արդեն հանգուցյալի կյանքին, գործունեության և գրական մեծ վաստակին:

Այժմ, խմբագրականի այս սեղմ տողերի մեջ, մեր հարգանքի տուրքն ենք բերում հանգուցյալի հիշատակին այն համոզմունքով, որ նա իսկապես եղել է «օրինակ նշմարիտ, ազնիվ, ոգեշնչված հոգևորականի, օրինակ՝ բարոյական մեծ նկարագրի և Ս. Եկեղեցվո անխոնջ ու տքնաջան ծառայի, հանախ տառապանքի գնով», և որը «քաջարի և անշփոթ կեցվածք մը ունեցավ, վերջին տարիներս մեր Եկեղեցիին ներս ծայր տված տագնապներու նկատմամբ: Մենք խորունկ հիացում ունինք իրեն հանդեպ իր այդ բարոյական նկարագրին համար, և այս տուրք պանուն մեր հարգանքի տուրքը անգամ մը ևս կմատուցանենք»,— ասել է Վեհափառ Հայրապետը հուլիս 7-ի Իր դամբանական քարոզի մեջ, նշգրտորեն բնութագրելով հանգուցյալ Պատրիարքի տեղն ու դերը հայ ժողովրդի ազգային-եկեղեցական կյանքում:

Հարգա՜նք հանգուցյալ հոգելույս Պատրիարքի հիշատակին:

Հայ երախտագետ ժողովուրդը կապրեցնի Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը Լուսավորչի լումաներով, ինչպես ապրեցրել է երբեմնի մեր բոլոր մշակութային, հոգևոր կենտրոններն ու գիտության օջախները:

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ»:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Հայրապետը հուլիսի 4-ից 20-ը եղավ Ստամբուլում: Նորին Սրբությունը հուլիսի 7-ին կատարեց վերջին օծումը հանգուցյալ Գարեգին Սրբազան Պատրիարքի և ապա, մինչև Իր մեկնումը, սրբազան արարողություններով և կենդանի խոսքով մխիթարեց և օրհնեց թուրքահայ հավատացյալ ժողովրդին:

Հուլիսի 18-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Թուրքիայի Հանրապետության Նախագահ գեներալ Ջեմալ Գյուրսելին: Եղավ սիրալիր ընդունելություն:

Նորին Վեհափառությունը սրտագին հանդիպումներ ունեցավ Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասի հետ՝ առավել ամրապնդելով դարավոր բարեկամական կապերը քույր եկեղեցիների միջև:

Վեհափառ Հայրապետը վերադարձին, հուլիսի 20—25-ին, այցելեց Վիեննայի հայ համայնքին՝ Իր օրհնությունները բաշխելով հավատացյալ ժողովրդին: Հուլիսի 21-ին Նորին Ս. Օծությունը այցելեց Ավստրիայի վարչապետ դոկտ. Գորբախին: Ընդունելությունը եղավ ջերմ:

Հուլիսի 22-ին Վեհափառ Հայրապետը Աբբահոր հրավերով հյուրը եղավ Վիեննայի Մխիթարյան ուխտին և Իր օրհնությունը տվեց միաբանության և նրա կատարած ազգանվեր գործին:

Նորին Ս. Օծություն Վազգեն Ա Կաթողիկոսը հուլիսի 27-ին Իր շքախմբով վերադարձավ Ս. Էջմիածին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

29 հուլիսի 1961 թ.
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՆԳԻՍ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ, ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ

(1880—1961)

Հունիսի 22-ին, հինգշաբթի օրը, Ստամբուլում վախճանվեց Թուրքիայի Հայոց Պատրիարք Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանը, 81 տարեկան հասակում։

Հանգուցյալը, ավազանի անունով Խաչիկ, ծնվել է 1880 թվականի նոյեմբերի 6-ին, Տրապիզոնում, ուր և ստանում է իր նախնական կրթությունը։ Այնուհետև ծնողների հետ փոխադրվում է Կոստանդնուպոլիս, ուր հաճախում է ազգային վարժարան և ապա աշակերտում Մխիթարյաններին։

1896 թվականին ուսման ծարավը նրան տանում է Վենետիկի Մուրատ Ռաֆայելյան վարժարանը։

1898 թվականին վերադառնում է Կոստանդնուպոլիս, Արմաշի դպրեվանքը ընդունվելու և կուսակրոն հոգևորական դառնալու վճռականությամբ։

1901 թվականի մայիսի 22-ին, Դպրեվանքի դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո, Դպրեվանքի վերատեսուչ գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկոպոս Դուրյանի ձեռքով, աբեղա է ձեռնադրվում Տ. Մեսրոպ Նարոյան, Տ. Սահակ Օդապաշյան, Տ. Երվանդ Փերտահճյան, Տ. Արտավազդ Գալեմքյարյան, Տ. Ղևոնդ Դուրյան աբեղաների հետ, վերանվանվելով Տ. Գարեգին աբեղա։

Այնուհետև Տ. Գարեգին աբեղայի առաջ բացվում է ուսուցչական, գրական, վանական, վարչական, առաջնորդական պատասխանատու գործունեության ասպարեզ Սսում, Մարաշում, Արաբկիրում, Գոնիայում, Տրապիզոնում և Բաղդադում։

1898—1900 թվականներին Արմաշի դրպրեվանքում դասավանդում է հայոց լեզու և հայ ժողովրդի պատմություն։ Ուսուցչության այս առաջին տարիներին պատրաստում է «Իսրայելի պատմություն» անտիպ դասագիրքը։

1900—1905 տարիներին քարոզիչ է նշանակվում Կոստանդնուպոլսում Պեշիկթաշի, Խասգյուղի և Կետրկփաշայի եկեղեցիներում։

1906 թվականին Տ. Սահակ կաթողիկոս Խապայանից հրավիրվում է Սիս, որպես վերատեսուչ Ժառանգավորաց վարժարանի։

1909 թվականին վերադառնում է Կոստանդնուպոլիս և խմբագրում «Տարոն» կրոնաթերթը։

Այնուհետև նորից Արմաշում է Տ. Գարեգին վարդապետը, Մեսրոպ Նարոյան վարդապետի վերատեսչության օրով, որպես ներքին տեսուչ Դպրեվանքի։

1912 թվականին հովվական այցելություններ է կատարում Արաբկիր և Մուշ և իր հուշերն ու տպավորությունները ամփոփում է գրական գեղեցիկ մի հատորում, «Տարոնաշունչ» խորագրով։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, Տ. Գարեգին վարդապետը լինում է Հալեպում և Երուսաղեմում։ 1916—1917 թվականներին դասավանդում է Երուսաղեմի հայոց Ժառանգավորաց վարժարանում։

1922 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնում, հոգելույս Տ. Գևորգ Ե կաթողիկոսից։ 1923 թվականին վերադառնալով Կոստանդնուպոլիս, զբաղվում է ուսուցչությամբ. Կենտրոնական վարժարանում, կատարելով նաև քարոզչական և գրական աշխատանք։ 1922 թվականին թարգմանում է «Նարեկ»-ը Կոստանդնուպոլսում։ Նշա-

ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԱԶԱՏՈՒՐՅԱՆ,
ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՊԱՏՐԻԱՐՔ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ

«ՀՈՒՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐ»
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

նակվում է Կրոնական ժողովի ատենապետ Նարոյան պատրիարքի օրով։

1928—1935 թվականներին առաջնորդական պաշտոն է կատարում Կալիֆոռնիայում, ծավալելով գրական, քարոզչական բեղուն գործունեություն։

1935—1938 թվականներին ընտրվում է Հայրապետական պատվիրակ Հարավային Ֆրանսիայի հայոց, կենտրոն ունենալով Մարսելը։

1938—1950 թվականներին գործում է իբր Հայրապետական պատվիրակ Հարավային Ամերիկայի հայոց։ Այստեղ նա թարգմանում է և հրատարակում «Եղնիկ»-ը, ինչպես նաև Հին Կտակարանի մի շարք գրքեր և Նոր Կտակարանը ամբողջությամբ։

1950 թվականի նոյեմբերի 26-ին ընտրվում է Թուրքիայի հայոց Պատրիարք։

1951 թվականի մարտից մինչև 1961 թվականի հունիսի 22-ը, մոտ 10 տարի, մեծ արդյունավորությամբ վարում է պատրիարքական իր պաշտոնը, վայելելով իր ժողովրդի սերը և իշխանությանց վստահությունն ու համակրանքը։ Ստամբուլում 1953 թվականին բացում է Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը և հրատարակում Պատրիարքարանի պաշտոնական թերթ «Շողակաթ»-ը։

1961 թվականի հուլիսի 7-ին, Ազգիս վեհափառ Հայրապետը, Գումգափուի Մայր եկեղեցում, կատարում է հանգուցյալ Պատրիարքի վերջին օծումը։ Նույն օրը երեկոյան հանգուցյալի աճյունը ամփոփվում է Շիշլիի հայոց գերեզմանատանը, Նարոյան Մեսրոպ պատրիարքի շիրմի կողքին։

Հանգուցյալը թողնում է գրական մեծ և հարուստ ժառանգություն, արժանի գնահատության։

Խո՜նկ ու աղո՜թք իր հիշատակին, հանգի՜ստ ոսկորներին և խաղաղությո՜ւն հոգուն։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ կ-ողիցի»։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, ՎԱՐԴԱՎԱՌ։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և քարոզեց «Բարւոք է մեզ աստ լինել» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էին Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Իրաքից ժամանած ուխտավորներ, որոնք հաղորդվեցին։

***

ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։ Հավարտ սուրբ պատարագի Հոգեհանգստյան պաշտոն կատարվեց վասն հոգվոց համայն ննջեցելոց Ազգիս Հայոց։

***

ՀՈՒԼԻՍԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, նորընծա չորս աբեղաները, Մայր Աթոռում իրենց քառասունքը անցկացնելուց հետո, իրենց անդրանիկ պատարագները մատուցեցին։

Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը պատարագեց և քարոզեց Երևանի Ս. Զորավոր եկեղեցում, «Որդի Մարդոյ ոչ եկն պաշտօն առնել, այլ պաշտել» բնաբանով։

Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը պատարագեց Մայր Տաճարում և քարոզեց «Զի՞նչ են հաւատք եթէ ոչ յուսացելոց իրաց հաստատութիւն և յանդիմանութիւն որոց ոչն երևին» բնաբանով։

Հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պոզապալյանը պատարագեց և քարոզեց Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում «Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» բնաբանով։

Հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը պատարագեց Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում և քարոզեց «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» բնաբանով։

ՀՈՒԼԻՍԻ 21-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը, Վեհափառ Հայրապետի հրամանով, մեկնեց Մոսկվա՝ ժամանակավոր կերպով ծառայելու հայոց եկեղեցում։

***

ՀՈՒԼԻՍԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը «Զի որ ոչ բառնայ զխաչ իւր և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել» բնաբանով։

***

ՀՈՒԼԻՍԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պոզապալյանը «Եթէ մոռացայց զքեզ, Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ, կցեսցի լեզու իմ ի քիմս իմ» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էին մեծ թվով սփյուռքահայ ուխտավորներ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 3-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր ճեմարանի ուսանողությունը, վերատեսուչ սրբազան հոր գլխավորությամբ, միօրյա զբոսապտույտի մեկնեց դեպի Բյուրական և Ամբերդ։ Ուսանողները ուշ երեկոյան վերադարձան Մայր Աթոռ։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը «Այլ երեքեան սոքա հաւատք, յոյս, սէր» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Վերափոխումն Ս. Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց Խաղողօրհնեք։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Հարութիւն վարդապետ Պատենջյանը։

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց տառասունքի Հոգեհանգստյան պաշտոն վասն հոգվո Կոստանդնուպոլսի հանգուցյալ պատրիարք երջանկահիշատակ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի։ Միաժամանակ հոգեհանգստյան պաշտոն կատարվեց նորոգ հանգուցյալ փարիզահայ տիկին Ռընե-Մարի Գալուստյանի, ղազվինաբնակ Վարուժան Հասուությունյանի և Ազգիս համօրեն ննջեցելոց հոգիների համար։

Հոգեհանգստյան արարողության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 16-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ գերաշնորհ Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանի, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի երեք անդամների, գնեկնեց Դիլիջանի շրջանում գտնվող Հաղարծնի վանքը, տեղում քննարկելու համար վանքի վերանորոգման հետ առնչվող հարցերը։

Այս պտույտին մասնակցեց նաև Վեհափառ Հայրապետի հյուր բանաստեղծ-գրագետ Կոստան Զարյանը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ՇԱԲԱԹ, Վեհափառ Հայրապետին հյուր եղան գրագետ Կոստան Զարյանը և Ամերիկայի Միացյալ Նահանգներից պրոֆ. Մանասե Սևակը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, որը հյուրաբար եկել էր Թբիլիսիից մի քանի օրով։

Սուրբ պատարագին ներկա էին սփյուռքահայ ուխտավորներ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։

Քարոզը խոսեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով Աստվածորդու «Ահա Մայր քո» խոսքերը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 21-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Աթոռում գումարվեց ճարտարապետների հանձնաժողովի նիստը։ Քննարկվեցին վերջին երկու ամիսների ընթացքում կատարված շինարարական աշխատանքները։ Ապա տեղի ունեցավ հյուրասիրություն, որին մասնակցեցին նաև գրագետ Կոստան Զարյանը և պրոֆ. Մանասե Սևակը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 22-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մոսկվայից Մայր Աթոռ վերադարձավ ժամանակավոր կերպով Մոսկվայում ծառայությամբ գտնվող հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀՈՐ ՄԱՀԸ

Մունիսի 22-ին, հինգշաբթի օրը, «Սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ» ազգային մեծ տոնին, Ստամբուլում, Գումգափու թաղի հայոց Ս. Երրորդություն եկեղեցում, առավոտյան ժամերգության ընթացքին, աղոթքն ու երգը շրթներին, երկրորդ անգամ կրկնվող սրտի հանկարծական և սուր տագնապի հետևանքով, մահանում էր Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանը։

Նորին Ամենապատվության հանկարծական մահը խոր վիշտ պատճառեց Մայր Աթոռին, անձամբ Վեհափառ Հայրապետին և համայն հայ ժողովրդին։

Ազգային մեծ կորստի ծանր տպավորության տակ, Ազգիս Վեհափառ Հայրապետը, վշտահար սրտով, Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքարանին հեռագրում էր.

«Սուգի մեջ են Հայ Եկեղեցին և Ս. Էջմիածինը։ Վշտահար է Մեր սիրտը։ Ոչ ևս է Կոստանդնուպոլսո Պատրիարք Մեր սիրեցյալ եղբայրը՝ Գարեգին Արքեպիսկոպոս։ Կորսնցուցինք հավատավոր ու ոգեշնչված մեծ եկեղեցական մը։ Հանգի՛ստ և խաղաղություն իր տանջված հոգիին և ափ մը լույս՝ Փրկչի Իշման Ս. Սեղանեն իր լույս հոգիին։

Հատուկ բարձր պատվիրակություն Էջմիածնեն կմեկնի դեպի Ստամբուլ, մասնակցելու թաղման արարողություններուն։

Կառաջարկենք հետաձգել թաղումը, սպասելով Մայր Աթոռիս պատվիրակության ժամանման։

Լրացուցիչ կհեռագրենք պատվիրակության մեկնումի թվականը»։

Թուրքիայի հայոց Պատրիարքարանը որոշում է հետաձգել հոգելույս Տ. Գարեգին Պատրիարքի թաղման հանդիսությունը, սպասելով Մայր Աթոռի և թեմերի պատգամավորությունների ժամանմանը։

Անփոխարինելի էր Հայ Եկեղեցու կորուստը և շատ ծանր Վեհափառ Հայրապետի վիշտը։ Նորին Ս. Օծությունը եղբայրական սրտագին բարեկամությամբ կապված էր նորոգ հանգուցյալ Ամենապատիվ Սրբազան Պատրիարքի հետ, հարգում և սիրում էր նրան որպես տիպար, տեսլապաշտ, ժողովրդանվեր հոգևորականի։

Նորին Ս. Օծությունը բարեհաճում է անձամբ գլխավորել Սրբազան Պատրիարք Հոր թաղման հանդիսությանց մասնակցող Մայր Աթոռի բարձր պատվիրակությանը, սփոփելու, մեղմելու համար մանավանդ Թուրքիայի հայության մեծ վիշտը, տանելու նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները Թուրքիայի հայ հավատավոր իր զավակներին։

Վեհափառ Հայրապետի Ստամբուլ ուղևորության բարի լուրը սրտագին գոհունակությամբ և մեծ խանդավառությամբ է դիմավորվում Ստամբուլի համայն հայ համայնքի կողմից։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Հուլիսի 3-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը իջնում է Մայր Տաճար, և աղոթելուց հետո, ուղևորվում Երևանի օդանավակայանը ու ժամը 10-ին, «Իլ—18» ինքնաթիռով, մեկնում է Մոսկվա։

Այս տխուր առիթով Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Վրաստանի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը և Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են Մայր Աթոռի սգավոր միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, վանքի պաշտոնեությունը և այլ պաշտոնական անձնավորություններ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ՍՏԱՄԲՈՒԼ

Հունիսի 4-ին, երեքշաբթի, ժամը 19.44-ին, ավտոթռիչական ինքնաթիռով Ստամբուլ է ժամանում Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով։

Ստամբուլի Եշիլգյուղի օդանավակայանում հավաքված բազմահազար հայ ժողովուրդը, անհամբեր և սրտատրոփ, սպասում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի դալստյան։

Բովանդակ հայ համայնքը, եկեղեցական վարչության գլխավորությամբ, նախապատրաստվել էր արժանավայել մեծարանքով, պատշաճորեն դիմավորելու Վեհափառ Հայրապետին։

Վեհափառ Հայրապետի ժամանման առթիվ հայոց Պատրիարքարանում կազմվել էր Ընդունելության հատուկ հանձնախումբ՝ բաղկացած Պոլսի ականավոր ազգայիններից։

Պատրաստվում և գործադրության է դրվում Վեհափառ Հայրապետի ընդունելության հատուկ մի ծրագիր, գնահատելի կանոնավորությամբ։

Որոշյալ ժամին, սրտատրոփ և անձկագին սպասումից հետո, ինքնաթիռը հուշիկ իջնում է վերջապես Ստամբուլի Եշիլգյուղի օդանավակայանը։ Հուզումը պատում է բոլորին, ալեկոծվում է բազմությունը և թնդում է ուրախ, ցնծագին ծափերի որոտը։

Եվ ահա Նորին Ս. Օծությունը, ինքնաթիռի կամրջակի վրա կանգնած, տխուր ու հանդիսավոր, օրհնում է Իր հավատացյալ հոտին։

Վեհափառ Հայրապետին դիմավորում են եկեղեցական վարչության եկեղեցական և աշխարհական անդամները՝ գլխավորությամբ գերաշնորհ Տ. Շնորհք եպիսկոպոս Գալուստյանի։

Պատրիարքական փոխանորդ արժանապատիվ Տ. Արամ ավագ քահանա Պասմաճյանը, արծաթե ափսեի մեջ, Վեհափառ Հայրապետին է մատուցում ավանդական աղն ու հացը։

Վեհափառ Հայրապետին ողջունում են նաև հանգուցյալ Տ. Գարեգին Պատրիարքի թաղման հանդիսության մասնակցելու համար Ստամբուլ ժամանած գերաշնորհ Տ. Խաչ, Տ. Մամբրե, Տ. Տիրան արքեպիսկոպոսները, հոգեշնորհ Տ. Սահակ, Տ. Շահան, Տ. Գևորգ, Տ. Գյուտ, Տ. Խոսրով վարդապետները, քահանայից դասը, պաշտոնական այլ անձնավորություններ, համայնքային մարմիններ և մամուլի ներկայացուցիչներ։

Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորելու համար օդանավակայան էին եկել նաև Ստամբուլում քույր եկեղեցիների և հարանվանության ներկայացուցիչներ։

Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Աթենագորաս Արքեպիսկոպոսի անունից Ամենայն Հայոց Հայրապետին բարի գալուստ է մաղթում պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Տ. Է. Էմիլիանոս միտրոպոլիտը հույն երկու վարդապետների հետ։

Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Ստամբուլում սովետական հյուպատոսն ու փոխ-հյուպատոսը։

Հանուն Ստամբուլի կուսակալ Նորին Վսեմություն Ռեֆիկ Տուլգայի, ընդհանուր կարգապահության հսկում է օդանավակայանի պետ Զաֆիե Էրեն։

Մի տխուր առիթով և շատ ծանր, բայց սրտագին պարտականություն կատարելու համար էր Ստամբուլ ժամանում Ամենայն Հայոց Հայրապետը, բերելով Իր սփոփանքի և քաջալերության հայրական խոսքը Իր հոտին՝ «Քաջալերեցարուք, ես եմ, մի՛ երկնչիք»։ Այնուամենայնիվ Ստամբուլի հայ համայնքը, միասիրտ և միակամ, իր մեծ սուգի և վշտի մեջ, իմացավ արժանավայել հանդիսությամբ, վեհությամբ և ջերմորեն դիմավորել իր հոգևոր Հորը՝ Ամենայն Հայոց Հայրապետին։

Հունիսի 4-ը պատմական, հավետ անմոռանալի ոսկե մի նոր էջ ավելացրեց Թուրքիայի հայության հարուստ ազգային-եկեղեցական տարեգրությանց մեջ, Վեհափառ Հայրապետի շնորհաբեր, հովվապետական այցելության երջանիկ առիթով։

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետը, օրհնելով Իր ճանապարհի վրա հավաքված խուռներամ, խանդավառ բազմության, պատվո պահակների շարքերի միջով, առաջնորդվում է օդանավակայանի պաշտոնական ընդունելության պատվո դահլիճը, ուր բարեհաճում է ընդունել հայ և օտար մամուլի, ռադիոյի թղթակիցներին և սիրով պատասխանում նրանց հարցերին։

Մի փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը, բազմաթիվ պատվո ինքնաշարժերի ուղեկցությամբ, ժողովրդական բուռն ծափերի, ուրախ բացականչությունների, ցնծության տարափի տակ, օրհնություն սփռելով Իր ճանապարհի վրա, առաջնորդվում է դեպի Գումգապուի հայոց աթոռանիստ Մայր Եկեղեցին, ուր դրվել է հանգուցյալ Պատրիարքի դագաղը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳՈՒՄԳԱՊՈՒԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Նորին Ս. Օծության առաջնորդող շքախումբը, Ագսարայի ճանապարհով, հանդիսավոր ու հուշիկ, ուղղվում է դեպի աթոռանիստ Մայր Եկեղեցին, ուր հավաքված ծոված բազմությունը, խանդավառորեն, բայց խոհուն և գիտակից կարգապահությամբ, դիմավորում է Վեհափառ Հայրապետին։

Մայր Եկեղեցու պատմությունը, իր փառաշուք անցյալի մեջ, գուցե երբեք չի արձանագրել նման հանդիսավոր, անմոռանալի դեպք։

Մայր Եկեղեցու ավետաբեր զանգերը հընչում են հանդիսավոր ու վեհ։ Վեհափառ Հայրապետը, ամպհովանու տակ, խաչով ու խաչվառով, խնկով ու աղոթքով, եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Եկեղեցի, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով։

Այնուհետև, արարողության ավարտին, եկեղեցական թափորը, Վեհափառ Հայրապետի հանդիսավորությամբ, «Որ յանէիս» Հանգըստյան շարականը երգելով, ուղղվում է դեպի եկեղեցու աջակողմյան ավանդատունը, ուր հանգչում է երանաշնորհ Տ. Գարեգին Պատրիարքի մարմինը դագաղի մեջ, եպիսկոպոսական ծանրագին զգեստավորման մեջ։

Վեհափառ Հայրապետը, շրջապատված վշտահար եկեղեցականներով, արցունքը զսպած, խոնարհվում և «Հոգւոց» է արտասանում հանգուցյալի դագաղի վրա։

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԸ

Հանգուցյալ Պատրիարքի հոգու խաղաղության համար կատարված Հոգեհանգստյան այս մասնավոր աղոթքից հետո, Վեհափառ Հայրապետը հանդիսավորությամբ դուրս է գալիս ավանդատնից և առաջնորդվում եկեղեցու Ավագ Սեղանը։

Պատմական եկեղեցու նվիրական կամարների տակ թնդում է «Որ զշնորհս» շարականը։ Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ավագ Սեղան, հաղորդելու Ս. Էջմիածնի օրհնությունն ու Իր հայրական ողջույնները Իր սիրելի զավակներին։

Գերաշնորհ Տ. Շնորհք սրբազանը, հանուն Պատրիարքարանի և հայ համայնքի, ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելությունը, շնորհակալություն և երախտագիտություն հայտնելով Նորին Ս. Օծության, որը եկել է մխիթարելու Իր հոտին և նրա մեծ վիշտը ուրախության փոխակերպելու։

Բարձրախոսի առաջ է կանգնել այժմ Վեհափառ Հայրապետը։ Եկեղեցին, քար լռության մեջ, երկյուղածորեն, հափշտակված, կարոտով ունկնդրում է Հայոց Հայրապետի մխիթարական խոսքերը երջանկահիշատակ Պատրիարքի մահվան առթիվ և ստանում Նրա ողջույնն ու օրհնությունները Հայրենիքից և Մայր Աթոռից.

«Հանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն»։

Խաղաղությո՛ւն ընդ ձեզ։ Խաղաղությո՛ւն ձեզի ամենուդ, սիրելի՛ եղբայրներ ի Քրիստոս, և ձեզի, հավատացյալ զավակներ Մեր։

Մենք ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնեն կուգանք, կսկիծը Մեր սրտին, ձեզի հետ մեկտեղ աղոթելու համար հանգուցյալ մեծանուն Պատրիարք Գարեգին Արքեպիսկոպոսի հոգվույն հանգստյան և խաղաղության համար։

Նորոգ հանգուցյալ Սրբազան Պատրիարքը, մեր Եկեղեցվո ամենապայծառ դեմքերեն մեկը, ընդմիշտ կենեռանա մեր այս անցավոր կյանքեն, ապրելու համար ուրիշ կյանք մը, ոգեղինացած կյանք մը, մեր Եկեղեցվո և մեր բռտերուն մեջ։

Մենք բոլորս, զինքը սիրողներս, սրբությամբ պիտի պահպանենք իր հիշատակը և իր վաստակը։ Եվ կխորհինք, թե՛ մենք, այսօրվաններս և թե՛ գալիք սերունդները, իբրև օրինակ ցույց պիտի տան իր անձնավորությունը, նշմարիտ, ազնիվ և ոգեշնչված հոգեվորականի, օրինակ՝ բարոյական մեծ նկարագրի և Ս. Եկեղեցվո անխոնջ ու տքնաջան ծառայի, հանախ տառապանքի իսկ գնով։

Ձեր այսքան հոծ ներկայությունը այստեղ և համբաներուն վրա, օդանավակայանեն

մինչև հոս, ցույց կուտա ձեր սերը և հարգանքը դեպի մեծ հանգուցյալը:

Սիրելի՛ հավատացյալ զավակներ Մեր. այս տխուր առիթով ձեզի բոլորիդ կբերեմ սիրո ողջո՛ւյն և բյուր օրհնությո՛ւն սուրբգրական Հայոց աշխարհեն և Փրկչի Իշման սուրբ տեղեն, ուր մեր հավատքը, իբրև աստվածապարգև շնորհ, ծնունդ առավ, աճեցավ և ծաղկեցավ, և հայոց հոգիները բարձրացուց դեպի ճշմարիտ նանապարհը կյանքի, որպեսզի հայ ժողովուրդի զավակները արժանի դառնան երկնային արքայության և փրկվին անոնց հոգիները:

Մխիթարական է Մեզ համար, խորապես մխիթարական, որ ձեր մեջ այսքան կենդանի է մեր նախնյաց սուրբ հավատքը, որ այսքան ծաղկյալ են ձեր եկեղեցիները, որ դուք այսքան կազմակերպված կերպով կապրիք կրոնական համայնքներու մեջ, իբրև ճշմարիտ զավակներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո:

Մեծ և անփոխարինելի մխիթարություն մըն է այս Մեր հայրապետական սրտի համար:

Հաջորդող օրերուն կխորհինք, թե Մեզ հետ միասին պիտի մասնակցիք ամենքդ թաղման արարողություններուն, ձեր վերջին հարգանքը մատուցանելու համար ձեր հոգելույս Պատրիարք Հոր հիշատակին:

Եթե Տերը կամենա, այս մեկ-երկու շաբաթներուն ընթացքին կխորհինք, թե բազմաթիվ առիթներ պիտի ունենանք ձեզի բաշխելու մխիթարական խոսքեր և օրհնություններ: Մենք և դուք, ամենքս, քահանայք և ժողովուրդք, մեկ սիրտ և մեկ հոգի դարձած, պիտի փառաբանենք զԱստված այն բոլոր բարիքներուն համար, զորս կվայելենք մեր երկիրներուն մեջ:

Այս առիթով կուզեինք նաև Մեր գոհունակության խոսքը հայտնել ձեր և մեր երկրի պետական իշխանություններուն, որոնք ամեն դյուրություն ընծայեցին Մեզի, որպեսզի Մենք այստեղ գանք և Մեր հոգևոր պարտականությունը կատարենք:

Շնորհակալ ենք և երախտապարտ:

Կմնանք աղոթող այս երկրի՝ Թուրքիո Հանրապետության բարօրության և խաղաղության համար:

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ. կտեսնենք և կզգանք, որ դուք բոլորդ շատ հուզված եք: Վստահ ենք, թե դուք ալ Մեր հուզումը կզգաք: Մեր սրտերը, առանց բառեր արտասանելու, և բառերու իմաստեն անդին, կխոսին արդեն իրար հետ: Ուրեմն աղոթենք. լուռ աղոթենք հանգուցյալ Պատրիարքի հոգվույն համար, աղոթենք Ս. Եկեղեցվո անմասանության համար և աշխարհի խաղաղության համար: Ամեն»:

Վեհափառ Հայրապետի պատմական այս ուղերձից հետո, երգչախումբը ոգևորությամբ կատարում է Մայր Աթոռի հոգևոր հիմնը՝ «Էջ Միածին ի Հօրէ», մինչ հայրապետական Ս. Աջը, խաչ ի ձեռին, բարձրանում է օրհնելու եկեղեցուն և հայ ժողովրդին։

Եկեղեցական արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը, նույն հանդիսավորությամբ, առաջնորդվում է Պատրիարքարանի դահլիճը, ընդունելու քույր եկեղեցիների և տարբեր դավանությունների, թաղական խորհուրդների, հոգաբարձությունների, խնամակալությունների և մամուլի ներկայացուցիչների ցավակցությունները Կոստանդնուպոլսի պատրիարք Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի մահվան առթիվ։

Պատրիարքարանի հանդիսությանց դահլիճում, հանուն Ընդունելության հանձնաժողովի և Ստամբուլի հայ համայնքի, Վեհափառ Հայրապետին ողջունում է Տիար Կարապետ Ղազարյանը հետևյալ սեղմ, բայց սրտառուչ ու բովանդակալից ուղերձով.

«Ձերդ Վեհափառության բարձր ներկայության մեր մեջ ստեղծած սրբազան խռովքին, հուզումին և խորունկ երախտագիտության առջև, թույլ տվեք, որ պերճախոս լռությամբ խոնարհինք Վեհիդ հանգամանքին և Անոր անձին հմայքին առջև և ըսենք. Հայոց Հայրապետ, բարով եկաք Ձեր հարազատներուն, և առնենք այն Ս. Աջը, որ մեզի կշերե մեր հավատքի աղբյուրին լույսը»։

Բարի գալստյան այս հուզիչ ուղերձից հետո, բոլոր ներկաները աջահամբույրով իրենց սերն ու երախտագիտությունը ներկայացնում են Ամենայն Հայոց Հայրապետին և ստանում նրա օրհնությունները։

Այնուհետև Վեհափառ Հայրապետի բարձր պատվին Կարգադիր հանձնախումբը կազմակերպում է ընդունելություն «Պարկ հոթել»-ում, որին մասնակցում են նաև բոլոր հյուր հայ հոգևորականները, պատրիարքական փոխանորդ Տ. Արամ ավագ քահանա Պասմաճյանը, Կենտրոնական վարչության անդամները և մամուլի ներկայացուցիչներ։

Սրտագին մթնոլորտում ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է «Հիլտոն» հյուրանոցի «Ագդենիզ» հարկաբաժին հանգստանալու։

Վեհափառ Հայրապետի Ստամբուլ ժամանման լուրը նույն օրը արձագանքում է թուրքական մամուլը, ի մասնավորի «Ջումհուրիեթ», «Ագշամ», «Ծնի Ստամբուլ» և «Հուրրիեթ» թերթերը։

Իսկ Պոլսի հայ մամուլը՝ «Ժամանակ» և «Մարմարա» օրաթերթերը, լայնորեն և սրտագեղումով արձագանքում են Վեհափառ

Հայրապետի պատմական այս այցելությունը և շեշտում նրա հոգևոր, բարոյական մեծ նշանակությունը։

Հուլիսի 5-ին «Մարմարա»-ն, «Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ» խորագրի տակ, թարգմանելով հանդիսանալով բովանդակ հայ համայնքի զգացմունքների, գրում էր.

«Ստամբուլի ջինջ երկինքեն երեկ երեկո լույս մը իջավ Եշիլգյուղի օդանավակայանը և վայրկյանի մը մեջ խոր հուզումով համակեց բոլոր սրտերը։

Լուսո աղբյուր Ս. Էջմիածնեն, հայ հավատքի այդ հնադարյան կեդրոնեն, Վեհափառին հետ և Վեհափառի միջոցավ մեզի հասան օրհնություններ Փրկչի Իման Ս. Սեղանեն։

Կխորհիմ, թե ընթերցողներու զգացումներուն թարգմանը հանդիսացած կըլլամ, եթե դառնամ մեր հավատքի լույս Արևին և ըսեմ խոնարհելով.

— Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ»։

Նույն օրը «Ժամանակ»-ը, «Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ» վերնագրի տակ, գրում էր.

«Սրտագին զգացումներով, խոր հուզումով և անվերապահ հարգանքով «Բարի՛ եկաք» կըսենք Ձեզի։

Բարի՛ եկաք մեր գեղազվարճ ափերը, ուր դարերե ի վեր բույն դրած է Ձեր հոտին մեկ մասնիկը, և ուր երջանկահիշատակ մեծ Ֆաթիհի ֆերմանով հաստատված Պատրիարքական պատմական Գահը, ավա՜ղ, այսօր կմնա թափուր։

Վեհափա՛ռ, մենք չէինք ուզեր զՁեզ դիմավորել սուգ ու շիվանով, բայց բալասան և մխիթարություն կբերեք Դուք այսօր մեզի։ Եվ մենք դարձյալ կկրկնենք. «Բարի՛ եկաք»։

Վեհափա՛ռ, մենք հոս Ձեզի կներկայանանք իբրև հավաքականություն մը, որուն երկնակամարը հակառակ պահ մը ստվերոտած ըլլալուն, կմնա միակամ և միատարր, կապված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո լուսաբեր Ս. Էջմիածնի»։

ԱՋԱՀԱՄԲՈՒՅՐԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ

Մեծ օր է Ստամբուլի հայ համայնքի համար։ Փակ են բոլոր դպրոցներն ու խանութները։ Վաղ առավոտից բազմաթիվ հավատացյալներ, ուխտավորներ բոլոր դասերից և բոլոր տարիքներից, Ստամբուլի բոլոր թաղերից և գործող 30 եկեղեցիներից ու նույնիսկ գավառներից եկել, հավաքվել են Պատրիարքարանի առաջ, շրջակայքում, մայթերի վրա, տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետին, համբուրելու նրա Ս. Աջը և ստանալու օրհնությունները։

Պատրիարքարանի դիվանի կողմից պաշտոնական հաղորդագրություն է տրված մամուլին, որով հայտնվում է, որ Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանում բարեհաճում է ընդունել Իր բոլոր զավակներին և օրհնել նրանց։

Առավոտյան, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը ընդունում է հատուկ և պաշտոնական մի շարք այցելություններ, և ապա մեկնում Պատրիարքարան, ուր ականատես է լինում սրտառուչ հարգանքի, սիրո տեսարանների։

Հավաքված բազմությունը խանդավառորեն, ծաղիկներով, ժպիտներով, օրհնենքով դիմավորում է իր Հայրապետին։

Բացվում են Պատրիարքարանի հանդիսությանց դահլիճի դռները և հավատացյալների բազմությունը, ուխտավորի ջերմեռանդությամբ և երանությամբ, տողանցում է Հայրապետի գահի առաջով, համբուրելով նրա Ս. Աջը։

Ահա թե ինչպես է նկարագրում ականատես մի անձնավորություն այդ հուզիչ, անմոռանալի պահը.

«Հուզիչ էր տեսարանը մանավանդ, երբ հավատացյալ մայրեր, քույրեր, եղբայրներ, զավակներ և թոռներ դահլիճի դռան առջևն կարգի կմտնեին և լուռ, երկյուղածությամբ և խոր հավատքով կմոտենային Նորին Վեհափառության։

Կտեսնեինք կիներ, որոնք դահլիճի դուռեն կհանեին իրենց կոշիկները և դահլիճի կեսեն իսկ ծնրադիր, ուխտի գացող ուխտավորի մը հավատքով, կմոտենային Վեհափառ Հայրապետին, կհամբուրեին Անոր քղանցքը, հետո կառնեին Անոր Աջը, կհամբուրեին, կհամբուրեին, չէին գոհանար, անգամ մը ևս իրենց երեսները կքսեին Անոր քղանցքին և հակառակ իրենց կամքին, կստիպվեին հեռանալ անկե։ Այս տեսարանը երեկ կրկնվեցավ բազմաթիվ անգամներ, ամեն անգամուն ալ հայտնի հուզումով պատելով Վեհափառ Հայրապետը» («Մարմարա» օրաթերթ, 6 հուլիսի 1961 թ.)։

Վեհափառ Հայրապետը հայրական հոգածությամբ և գուրգուրանքով հետաքրքրվում էր Իր զավակներով և հուզումով սպասում, որ վերջին ուխտավորն իսկ չզրկվի հայրապետական օրհնությունն ստանալու երանությունից։

«Եվ այս,— եզրակացնում է «Ժամանակ»-ի թղթակիցը,— կշարունակվեր այսպես։ Պատանի մը ծերունի մը կհաջորդեր,

ԵՄՍԱԶՈ ԳԼԽՅԱՆ ՎԺՅՈՎՅՏՈՒԹ ԳՎԵԳՅՈՒԹԵ Ֆ ՄՍԱՅՈՏՈԿ ԵՏԳԵՈՒՅԵՈՇ ԺՈՓՈՇԳԼ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԱԹԵՆԱԳՈՐԱՍԸ

համամիկին բովնիվեր շնորհալի երիտասարդուհի մը, բոլորը, բոլորն ալ երկյուղած, բոլորն ալ սիրազեղ և երանությամբ արբշիռ, ուղղային Աջը առնել Վեհափառին։

«Ի՜նչ անմոռանալի օրեր, ի՜նչ հուզումնալից պահեր են ասոնք, որոնցմե դարեր ամբողջ հեռու մնացած էր Ստամբուլի հայը» («ժամանակ» օրաթերթ, 6 հուլիսի 1961 թ.)։

Նույն օրը, Պատրիարքարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց նաև համայնքային անմարմինների, վարժարանների տնօրենների, ուսուցչաց դասերի և երգչախմբերի, վարչական ատենահարներուն անդամների պաշտոնական այցելությունները և սիրալիր զրույց ունեցավ բոլորի հետ։

Վեհափառ Հայրապետին այցելեցին նաև հայ կաթոլիկ համայնքի վիճակավոր գերապայծառ Տ. Պողոս արքեպիսկոպոս Քիրեճյանը՝ ընկերակցությամբ Տ. Հովհաննես Զուլախյանի և Տ. Գասպար Պեյլերյանի, Վիեննայի Մխիթարյան հայրերի անունից Հ. Սարգիս Բարոյանը, Հ. Գրիգորիս Մանյանը և Հ. Գաբրիել Այանյանը, Վենետիկի Մխիթարյանների անունից Հ. Հակոբոս Փոսպլյուգյանը և Հ. Անտոն Ճիվանյանը, հայ բողոքականների անունից պատվելի Ա. Ազատյանը։

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը ընդունեց Սահմանադիր ժողովի անդամ օրիորդ Հերմինե Գալուստյանի և երաժիշտ Հովհաննես Չեքիճյանի այցելությունները։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՅՑԵԼՈՒՄ Է ՍՏԱՄԲՈՒԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ

Հուլիսի 6-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Թաքսիմի Անկախության հուշարձանին և ծաղկեպսակ զետեղում «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա» մակագրությամբ։

Հետմիջօրեի ժամը 14.30-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ստամբուլի նահանգապետ զորավար Ռեֆիկ Տուլգային, Սարահանեպաշի քաղաքապետության նոր շենքում։

Ստամբուլի նահանգապետին տրված պաշտոնական այս այցելության ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընկերակցում էին Տ. Մամբրե և Տ. Կոմիտաս սրբազանները, Հ. Տ. Պարգև վարդապետը, պատրիարքական փոխանորդ արժանապատիվ Տ. Արամ ավագ քահանան, սահմանադիր ժողովի անդամ օրիորդ Հերմինե Գալուստյանը, պր. Արա Գուրումճյանը, պր. Կարապետ Ղազարյանը և պր. Կարապետ Աբրահամյանը։

Վեհափառ Հայրապետը քաղաքապետարանի բակում դիմավորվում է պրոտոկոլի տնօրեն Ֆերիտոն բեյի կողմից և առաջնորդվում հյուրասրահ Իր շքախմբով։

Ստամբուլի պր. նահանգապետը ողջունում է Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Ստամբուլ և հանուն իր կառավարության խորունկ ցավակցություն է հայտնում Գարեգին Պատրիարքի մահվան տխուր առիթով՝ Վեհափառ Հայրապետին և հայ համայնքին։

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն է հայտնում պր. նահանգապետին նրա ողջույնի և մխիթարական խոսքերի համար, Իր ողջույններն ու մաղթանքներն է հաղորդում պր. նահանգապետին, Ստամբուլ քաղաքին և հյուրընկալ այս երկրին, ուր հայ ժողովրդի մի կարևոր հատվածը և Հայ Եկեղեցին ապրում են խաղաղ։

Այնուհետև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և պր. նահանգապետի միջև տեղի է ունենում զրույց, ջերմ մթնոլորտում։ Ապա հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետը պր. նահանգապետից և Իր շքախմբով վերադառնում Պատրիարքարան։

ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԵՐՋԻՆ ՕԹՈՒՄԸ ԵՎ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 7-ին, ուրբաթ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, Գումգափուի Մայր եկեղեցում, կատարվում է հանգուցյալ Պատրիարքի վերջին օծումը։

Առավոտյան, Մայր եկեղեցու զանգերը, տխուր և դժգին, զողանջում են ընդհատաբնդհատ։

Տաճարը լիքն է հավատացյալներով։ Ստամբուլի հայ համայնքը իր վերջին հարգանքն է մատուցում իր սիրելի Պատրիարքին։ Դասերում տեղ են գրավել պաշտոնական բարձր անձնավորություններ, դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ և դավանությանց ներկայացուցիչներ։

Անձամբ ներկա է Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Աթենագորասը։ Ներկա է նաև Ստամբուլի նահանգապետ զորավար Ռեֆիկ Տուլգան իր շքախմբով։

Մայր եկեղեցու աստյանում դրվել է հանգուցյալ Պատրիարքի մարմինը դագաղում, եպիսկոպոսական լրիվ զգեստավորման մեջ.

շրջապատված Ս. Խաչ դպրեվանքի սաներով։ Չորս քահանա հայրեր, լռիկ-մնջիկ, Սաղմոս են քաղում, մինչ վեց քահանաներ, զգեստավորված, պատվո պահակ են կանգնել, որպես դագաղակիրներ։

Ժամը 9.30-ին, Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանից եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր Եկեղեցի, ուր հոգեհանգստյան պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Շնորհք սրբազանը։ Սուրբ պատարագի երգեցողությունները կատարում են «Գողթան» և «Կոմիտաս» միացյալ երգչախմբերը, ղեկավարությամբ դոկտ. Տիգրան Մամիկոնյանի։ Երգեհոնի վրա ընկերակցում է պր. Ժիրայր Ասլանյանը։

Սուրբ պատարագը, հանդիսավորությամբ և տպավորիչ, վեհությամբ շարունակվում է մինչև «Ողջոյն»։

Վեհափառ Հայրապետը, քահանայապետական լրիվ զգեստավորման մեջ, ավանդատնից առաջնորդվում է Ավագ Սեղան՝ կատարելու հանգուցյալի վերջին օծումը, առընթերակայությամբ Տ. Մամբրե և Տ. Սերովբե սրբազանների։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ

Վերջին օծման արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը, հանգուցյալ Սրբազան Պատրիարք Հոր դագաղի վրա, խոսում է հետևյալ սրտառուչ և բովանդակալից դամբանականը, ներկայացնելով հանգուցյալի բազմաբեղուն կյանքն ու գրական վաստակը։ Վեհափառ Հայրապետի դամբանականը լսվում է մեծ հետաքրքրությամբ և մխիթարությամբ.

«Հանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Ամէն»։

«Առաջնորդ մեծ անկաւ յաւուր յայսմիկ յԻսրայելի»։

Սիրելի՛ սգակիր և վշտահար ժողովուրդ.

Հին Ուխտի մեծ մարգարեներեն մեկը՝ Դավիթ արքան, այս խոսքերով ողբաց իր սիրելիներեն, Իսրայելի մեծ զավակներեն մեկուն՝ Աբեներ զորավարի մահը։ Իրապես ան հոգիով արդար էր և հավատարիմ, քաջարի, ուխտյալ զավակը իր ժողովուրդի, որ նահատակվեցավ Իսրայելի հանդեպ իր ունեցած մեծ սիրույն և նվիրումին մեջ։

Դավիթ մարգարեին ողբի այս խոսքերը մենք ևս կկրկնենք այսօր, զի Գարեգին Սրբազան Պատրիարքի մահով մեր Ս. եկեղեցին կկորսնցնե հոգևոր իր մեծ առաջնորդներեն մեկը։

Այո, ոչ ևս է Թուրքիո հայոց մեծանուն Պատրիարքը՝ Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյան, Մեր սիրեցյալ Եղբայրը ի Քրիստոս։ Ճշմարտապես և խորապես արդար հոգի մըն էր ան, լուսավորված Քրիստոսի ճշմարիտ սիրով և նվիրված իր ամբողջ կյանքով մեր Ս. եկեղեցիին և մեր հավատացյալ ժողովուրդին։ Ահա թե ինչո՞ւ իսկապես մեծ է մեր կսկիծը։

Այսօր, Հայաստանյայց բոլոր եկեղեցիները, աշխարհի բոլոր հանապարհներուն վրա ուր կան անոնք և ուր հայ սիրտ մը կբաբախե, սուգի մեջ են այս պահուս, վասնզի այստեղ, այս Մայր եկեղեցվո պատմական կամարներուն տակ, մեր սուրբ աղոթքներով և մաղթանքներով, մենք կպատրաստվինք հոգին հանձնելու անշնչացած մարմինը մեծ հանգուցյալին։

Սուգի այս մեծ պահուն, Մեզի համար, իբրև Հայոց Հայրապետ, անսահման մխիթարություն է տեսնել, թե ինչպես մեր ամբողջ ժողովուրդը, մեր ամբողջ եկեղեցին և մանավանդ Ստամբուլի հավատացյալ զավակները Մեր, մեկ սիրտ մեկ հոգի, ծունկի կուգան այսօր մեծանուն հանգուցյալի հիշատակին առջև, իրենց վերջին ողջույնը և աղոթքը մատուցանելով։ Մեզ համար մեծապես մխիթարական է նաև տեսնել այստեղ Մեր կողքին բարձրաստիճան ներկայացուցիչները քրիստոնեական եկեղեցիներու, իրենց գլուխը ունենալով Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասը, որոնք մեզի հետ կաղոթեն Մեր սիրեցյալ Եղբոր հոգվո խաղաղության համար։

Մեզի համար նույնքան մեծ մխիթարություն է, որ այսօր իրենց հարգանքի տուրքը կբերեն հանգուցյալի հիշատակին նաև այս երկրի պետական բարձրաստիճան ներկայացուցիչները, գլխավորությամբ Ստամբուլի նահանգապետ զորավար Ռեֆիկ Տուլգայի՝ հանուն Պետության Վսեմաշուք Նախագահին։ Երեկ, Վսեմաշուք Նահանգապետի բնդունելության պահուն, Մենք շատ զգացվեցանք այն խոր հարգանքի և վշտի արտահայտություններեն, որ ունեցավ ան հանդեպ հոգելույս Պատրիարքի հիշատակին։

Սիրելի՛ հավատացյալներ. մեր Ս. եկեղեցին քրիստոնեական հնագույն եկեղեցիներեն մեկն է, որ իր հավատացյալներու համբերանքով փորր է թեև, սակայն փորր չէ եղած թիվը մեր մեջ, հին ժամանակներեն մինչև մեր օրերը, հոգևորական մեծ դեմքերու, ներշնչված հոգիներու, որոնք փառքը կկազմեն մեր եկեղեցվո պատմության և որոնք կապրին լույսի աշխարհի մը մեջ, հաղթական և փառավոր՝ եկեղեցին կազմելով հավիտենական կյանքի սահմաններեն անդին։

Կխորհինք, թե բոլորդ Մեզի հետ համաձայն կրլլաք, երբ անկեղծավոր սրտով

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻՑ ՏԱՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԸ ՁԵՏԵՂՈՒՄ Է
ՀԱՆԴՈՒՅՑԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՇԻՐՄԻ ՎՐԱ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՏԱՄԲՈՒԼԻ Ս. ՍՈՖԻԱ ԵԿԵՂԵՑԻ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

ըսենք, թե ի Տեր հանգուցյալ Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյան եղավ մեր Եկեղեցվո կյանքին մեջ այդ մեծ, ոգեշնչված, լուսամիտ, տեսլապաշտ, ժողովրդանվեր և մանավանդ ասվածասեր և հավատավոր մեր հոգևոր առաջնորդներեն մեկը, իր կյանքի ու գործունեության ամբողջ տևողության ընթացքին: Այս տարի կլրանար իր քահանայության 60-ամյակը: Ինչպես գիտեք, ձեռնադրված էր կուսակրոն քահանա ուղիղ վաթսուն տարի առաջ, երանաշնորհ Տ. Եղիշե Դուրյան արքեպիսկոպոսի ձեռքով, այդ մեծ հոգևորականի միջոցով իր հոգիին մեջ ընդունելով Ս. Հոգվույն բոլոր շնորհները: Եվ անա, երկար տարիներու իր գործունեության ընթացքին, ան ապրեցուցեր էր, պայծառացուցեր և պտղաբերեր իր բոլոր շնորհները Հայ Եկեղեցվո և հավատացյալ ժողովուրդի ծառայության ճանապարհին վրա, ճանապարհ մը, որ հանախ եղած է փշոտ, երբեմն նույնիսկ տառապալից, մեր Ազգի փոքրաքանույզ կյանքի ընթացքին: Սակայն իբրև քաջ հովիվ, հանգուցյալը բոլոր փոքրիկներուն դիմադրած է իր հոգվո խաղաղությամբ, իր մտքի պայծառությամբ, իր լույսի ծարավով և անսահման սիրով:

Այսօր Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյան Աստուծո և մեր առջև կենդանի իբրև մեծ հոգևորական մը, իբրև հովվապետ մը, որ բարվոք պատերազմը հառաջ տարավ հաղթական կերպով: 60 տարի շարունակ իր հոգեշունչ քարոզներով, իր գաղափարապաց մտածումներով. իր բարի հորդորներով, իր կենդանի աշխատանքով և իր սուրբ աղոթքներով մխիթարություն և կյանք բաշխեց մեր հավատացյալ ժողովուրդին, սկսած իր ծննդավայրեն մինչև Արմաշ, մինչև Ստամբուլ և մինչև հեռավոր Ատլանտյանի և խաղաղականի ափերը, ուր սփռված կապրին մեր ժողովուրդի զավակները:

Հանգուցյալը մեծ առաջնորդ մը եղավ նաև իբրև դպրության և դաստիարակության մարդ: Ան իր սեպուն պարտքը նկատեց, ամեն տեղ ուր գտնվեցավ, իբրև հոգևոր առաջնորդ հավասար կարևորություն տալ և զբաղիլ մատաղ սերունդներու դաստիարակության գործով, հարատև աշխատելով քրիստոնեական առաքինությունները հաստատուն կերպով ամրացնել մեր ժողովուրդի զավակներուն սրտերեն ներս:

Ան սորվեցուց ամենուն, որ լուսո որդիներ ըլլան, կյանքի մեջ լույսի հանապարհները փնտրեն, որպեսզի հայոց բոլոր զավակները, ծարավով և հույսով զեղուն, միշտ դեպի լույսի աղբյուրը ուղղվին. որ աղբյուրն է, նշմարիտ կյանքին:

Դուք շատ լավ գիտեք, թե հանգուցյալը շատ կսիրեր լույսի մասին խոսիլ. լույսի աղբյուրի մասին, կյանքի լուսավորության մասին: Կխորհինք, թե ձեր բոլորիդ հոգիներուն բաշխված են այս մտածումները, այս զգացումները՝ իբրև լուսեղեն սնունդ:

Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի կրթական-դաստիարակչական գործունեության դափնեպսակը կնանդիսանա Սկյուտարի մեջ իր հիմնած և այնքան դժվարություններով, բայց հաջողությամբ գլուխ բերած Ս. Խաչ դպրեվանքը: Կխորհինք, թե Ստամբուլի հայ հավատացյալները, համայն հայ ժողովուրդը սրբությամբ պիտի պահպանեն այս հաստատությունը այն գիտակցությամբ, թե այս կերպով հարգանքի մեծագույն տուրքը տված պիտի ըլլան մեծանուն հիմնադրի հիշատակին:

Սիրելի՛ զավակներ Մեր. դուք քաջ գիտեք. թե հանգուցյալը նաև ժրաջան և անհոգնաբեկ գրական մշակ մըն էր: Քանի՛-քանի՛ գիշերներ և անհամար ժամեր աշխատած է առանձնասենյակին մեջ, ամեն տեղ, ուր գտնված է, հանախ նյութական և այլ զրկանքներու մեջ, որպեսզի թողքին հանձնե իր հոգիին և մտքին լույսը: Այսօր ան կրաժնրվի մեզմե, իր ետին թողած գրական վաստակ մը, փառավոր ժառանգություն մը, որուն լուսապսակը կկազմե Ս. Գրիգոր Նարեկացիի «Ողբերգության մատյան»-ին տաղաչափյալ աշխարհաբար թարգմանությունը:

Հանգուցյալի անունը հայ գրականության մեջ միշտ պիտի հիշվի երախտագիտությամբ:

Վերջերս էր տակավին, երբ առիթը ունեցանք Երևանի մատենադարանի բանասերներեն ոմանց հետ խոսակցելու հանգուցյալ Գարեգին Պատրիարքի Նարեկի թարգմանության մասին: Շատ մխիթարական եղավ Մեզ համար հաստատել, թե ինչքան խոր կերպով մեր գիտնականները կգնահատեն այդ անզուգական գրական գործը: Մեր գրականության նոր շրջանի ամենարժանավոր մշակներեն մեկը կնկատեն անոնք հանգուցյալ Պատրիարքը:

Գարեգին արքեպիսկոպոս հայ կյանքի երկնակամարին վրա փայլեցավ նաև որպես հոգևոր, բարոյական նկարագրի տեր անձնավորություն մը. ինչ որ մանավանդ մեր օրերուն մենք պետք է գիտնանք գնահատել. երբ բարոյական արժեքները և ըմբռնումները այնքան երերուն վիճակի մեջ են հանախ տեղ-տեղ: Իբրև Քրիստոսի նշմարիտ աշակերտ, անոր «այո»-ն «այո» էր և «ոչ»-ը «ոչ», միշտ ուղղամիտ, օրինապահ և ազնիվ:

Այսպես է, որ քաջարի և անշփոթ կեցվածք մը ունեցավ ան վերջին տարիներս մեր Եկեղեցիեն ներս ծայր տված տագնապներուն նկատմամբ: Մենք խորունկ հիացում ունինք իրեն հանդեպ, իր այս բարոյական

եկարագրի համար և այս սուրբ պահուն Մեր հարգանքի տուրքը անգամ մը ևս կմատուցանենք իր հիշատակին:

Մեզի համար բարոյական ըմբռնումներն ու արժեքները, եկեղեցական օրինապահության և կարգապահության սկզբունքները, Հայաստանյայց Եկեղեցվո գերագույն շահերու գիտակցությունը, միասնության սուրբ և փրկարար կանոնը են և կմնան մեր Եկեղեցվո և մեր ժողովուրդի հոգևոր կյանքի հիմքերը:

Այս ոգիով աղոթեց և գործեց հանգուցյալ Գարեգին Պատրիարքը, բոլորիս համար հանդիսանալով պայծառ օրինակ մը: Այդ տեղը, այդ լուսավոր տեղը, ան միշտ պիտի պահե այսօր և վաղը, գալիք սերունդներուն համար:

Հանգուցյալ Պատրիարքը իր կոչման բարձր կատարներուն հասավ մանավանդ իր պատրիարքության վերջին տասը տարիներու ընթացքին: Այստեղ պարտինք ընդգծել հանգամանք մը ևս, նույնքան կարևոր և նույնքան պատվաբեր մեծանուն հանգուցյալին համար: Այդ՝ իր իմաստուն, հեռատես և անկեղծ վերաբերմունքն էր դեպի այս երկրի իշխանությունը, ուր կգտնվեր իր պատմական Աթոռը:

Մենք միշտ խորապես գնահատած ենք հանգուցյալի գործունեությունը վերջին տասը տարիներու ընթացքին, նաև այն բանի համար, որ իբրև Թուրքիո հայոց Պատրիարք, գիտցավ լավագույն հարաբերություններ մշակել Թուրքիո Հանրապետության պետական բարձր իշխանությանց հետ, գիտցավ վստահությունը շահիլ այդ իշխանությանց և իր անձով ցույց տալ իր հոտին քաղաքացիական հավատարմության հանապարհը:

Մխիթարական էր Մեզ համար մամուլի մեջ կարդալ վերջերս, երբ չենք սխալիր երկու ամիս առաջ, թե հանգուցյալը պատիվն էր ունեցեր տեսակցելու ձեր երկրի Վսեմաշուք Նախագահին՝ զորավար Ջեմալ Գյուրսելի հետ, ներկայացնելով այդ առթիվ իր և Թուրքիո հայ հավատացյալ ժողովուրդի հարգանքն ու հավատարմությունը, այս կերպով անգամ մը ևս ամրապնդելով այն բարեկամական և փոխադարձ հարգանքի կապերը, զորս ամրացուցած էր արդեն անցյալի մեջ ալ պետական իշխանությանց և Հայ Եկեղեցվո, Թուրքիո հայոց Պատրիարքական Աթոռին միջև, Աթոռ մը, որ պատմական անցյալ մը ունի այս երկրին մեջ իր ավանդություններով, իր սուրբ կանոններով և իրավասություններով, որոնք այսօրվան կյանքի պայմաններուն մեջ ևս կենդանի են, բնականաբար նոր Թուրքիո Հանրապետության հիմնական օրենքներու և շահերու սահմաններու մեջ: Կխորհինք, թե հանգուցյալ Պատրիարքի այս ոգին միշտ պիտի պահպանվի իր հաջորդներուն կողմե՝ ի շինություն հոգևոր կյանքին Թուրքիո հայ հավատացյալ ժողովուրդի:

Վշտաբեր և սիրեցյալ զավակներ Մեր. տակավին երկար կարելի էր խոսիլ հանգուցյալ Պատրիարքի արժանիքներուն և անոր կյանքի գործերուն մասին: Ժամանակը սակայն կսահի և ավա՜ղ, մենք կպատրաստվինք հողին հանձնելու մարմինը Մեր սիրեցյալ եղբոր՝ Գարեգին Արքեպիսկոպոսի:

Այս սրբազան պահուս մեր վիշտը կլուսավորվի սակայն մխիթարության զգացումով մը, որովհետև մենք կհավատանք, թե հողին պիտի հանձնենք իր մարմինը միայն, մինչ իր լույս հոգին, միշտ կենդանի, պիտի բարձրանա դեպի մյուս ափը կյանքին, ապրելու համար այսուհետև ավելի ճշմարիտ, ավելի ամբողջական և ավելի փառավոր կյանք մը, միաժամանակ բաշխվելով մեր հոգիներուն՝ իբրև քաղցր և սուրբ հիշատակ:

Սիրելի՛ ժողովուրդ. պիտի ուզեինք ձեզ մխիթարել մեծ առաքյալի խոսքերով, որ կպատգամե մեզ բոլորիս. «ՈՉ ԿԱՄԻՄ, ԵՂԲԱՐՔ, ԵԹԷ ՏԳԷՏՔ ԻՑԷՔ ՎԱՍՆ ՆՆՋԵՑԵԼՈՑ, ՉԻ ՄԻ՛ ՏՐՏՄԻՑԻՔ ՈՐՊԷՍ ԵՒ ԱՅԼՔՆ, ՈՐՈՑ ՈՉ ԳՈՅ ՅՈՅՍ»: Մենք քրիստոնյաներ ենք և կհավատանք հավիտենական կյանքին: Մեր սրտերուն մեջ ամուր կպահենք քրիստոնեական այդ մեծ հույսը: Հետևաբար մեր տրխրությունը թող համազոր չըլլա հուսահատության: Մեզ համար մահը հաղթված է Քրիստոսի հրաշափառ հարությամբ, և ամեն մեկս կրնանք ժառանգել երկնքի արքայությունը: Քրիստոնեական այս մեծ հույսը մեր կյանքի լույսն է, որով կառաջնորդվինք ու կգործենք մեր այս անցավոր կյանքի ընթացքին, և օր սր մխիթարված սրտով մեր աչքերը կփակենք:

Այսպես ահա, մենք այսօր կպատրաստվինք հողին հանձնելու մարմինը հոգելույս Գարեգին Արքեպիսկոպոսի: Եվ այս սրբազան պահուն իրեն կբերենք վերջին ողջույն Հայոց աշխարհեն և Փրկչի Իշման Ս. Սեղանեն, վերջին ողջույն Օշականի Մեծ Սուրբեն և հայրենի մեր բոլոր սրբատեղիներեն, Մայր Աթոռիս միաբանութենեն և համայն մեր ժողովուրդի սրտեն, նաև մեր ամենաջերմ աղոթքը, որ Տերը խաղաղությամբ ընդունի իր տառապած մեծ հոգին և արժանի ընե զայն լուսեղեն անթառամ պսակին: Թող օրհնյալ ըլլա հիշատակը հանգուցյալ Գարեգին Պատրիարքի և թող Տերը արժանավոր հաջորդ պարգևե Այս Աթոռին և Իր սուրբ հովանին շարունակե տարածյալ պահել Առաքելական մեր Ս. Եկեղեցիին վրա, համայն մեր հավատացյալ ժողովուրդին վրա, որպեսզի անոնք խաղաղությամբ աշխարհի վրա շարունակեն

իրենց սուրբ առաքելությունը՝ ի փառս Աստուծոյ:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո
անշարժ պահեա,
Եւ զերկրպագուս անուանդ քում պահեա
ի խաղաղութեան»:

Ամե՛ն»:

Դամբանական քարոզից հետո, Վեհափառ Հայրապետը Մայր Եկեղեցում առաջնորդվում և բազմում է իր գահի վրա և ընդունում պետական բարձր անձնավորությանց, կրոնական պետերի, հարանվանությանց և դիվանագիտական մարմնի ներկայացուցիչների ցավակցությունները։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Պատրիարքարան։

Այնուհետև, փոքր դադարից հետո, գերաշնորհ Տ. Խաղ արքեպիսկոպոսի հանդիսադրությամբ, հուղարկավորական թափորը ուղղվում է դեպի Շիշլիի հայոց ազգային գերեզմանոցը։

Հուղարկավորության և թաղման հանդեսին մասնակցում է Ստամբուլի ողջ հայ համայնքը՝ իր հարգանքի վերջին տուրքը բերելով մեծանուն Պատրիարքի հիշատակին։

Շիշլիի գերեզմանատանը, հանգուցյալ Պատրիարքի դագաղի վրա դամբանականներ են խոսում գերաշնորհ Տ. Մամբրե, Տ. Տիրան և Տ. Սերովբե սրբազանները։

Հուսկ ուրեմն, հանգուցյալ Տ. Մեսրոպ Պատրիարք Նարոյանի շիրմի մոտ, հողին է հանձնվում երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի աճյունը, հոգեհանգստյան սրբատառուշ մեղեդիների վեհ և խորհրդավոր հընչյունների տակ։

Հանգի՛ստ և խաղաղությո՛ւն նրա աճյուններին։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Հունիսի 8-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն տվեց, Ֆեների Հունաց Պատրիարքարանում, Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Աթենագորաս Սրբազան Արքեպիսկոպոսին։

Պատմության մեջ առաջին անգամն էր, որ Ամենայն Հայոց Հայրապետը պաշտոնական մի այսպիսի պատմական այցելություն էր տալիս Օրթոդոքս Եկեղեցու Պետին, քրիստոնեական սիրո և եղբայրության զգացմունքներով և ոգով։

Պատմական այս այցելության ժամանակ, Նորին Ս. Օծության ընկերակցում էին գերաշնորհ Տ. Խաղ, Տ. Մամբրե, Տ. Տիրան, Տ. Սերովբե, Տ. Շնորհք, Տ. Կոմիտաս սրբազանները, հոգեշնորհ Տ. Պարգև, Տ. Գևորգ, Տ. Գյուտ, Տ. Սահակ վարդապետները, արժանապատիվ Տ. Արամ, Տ. Դավիթ, Տ. Շահե քահանաները, պարոնայք. Կարապետ Ղազարյանը, Կարապետ Աբրահամյանը, Արա Գուլումճյանը, Եդվարդ Պենկլյանը և Թ. Փեհլիվանյանը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հունաց Պատրիարքարանի դարբասից ընդունվում է պատրիարքական փոխանորդ գերաշնորհ Տ. Էմիլիանոս սրբազանի, չորս այլ հույն եպիսկոպոսների և ութը վարդապետների կողմից, և եկեղեցիների զանգերի զվարթ զողանջի տակ, մտնում է եկեղեցի, ուր աղոթելուց հետո, առաջնորդվում է Պատրիարքարան։

Պատրիարքարանի դահլիճի դռանը Ամենայն Հայոց Հայրապետին ջերմորեն և բացառիկ սիրալիրությամբ դիմավորում է Նորին Սրբություն Տ. Աթենագորաս Պատրիարքը, շրջապատված ութը միտրոպոլիտներով և այլ հոգևորականներով։

Այնուհետև, Արևելքի երկու հնագույն և պատմական Եկեղեցիների Հոգևոր Պետերը առաջնորդվում են դահլիճի խորքում դրված հայրապետական երկու գահերը։

Երկու հոգևոր Պետերի միջև տեղի է ունենում ջերմ զրույց։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով Սրբազան Պատրիարք Հորը, ասում է.

«Սիրելի՛ եղբայր ի Քրիստոս.

Իբրև Ամենայն Հայոց Կաթողիկոս, Աստուծո փառք տալով կողջունեմ այս պահը։ Աստված Մեզ պարգևեց առիթը Ձեզ Սրբության այս վայրին մեջ այցելելու։ Ձեր Սրբության մեր սուգին մասնակցութենեն խորապես զգացված եմ։ Ձեր մասնակցությունը հոգելույս Պատրիարքի հուղարկավորության՝ Մեզ համար բարոյական մեծ մխիթարություն մը եղավ։

Հոգելույս պատրիարքը իր համակերուն մեջ հանախ կգրեր Ձեր մասին և Մենք Ս. Էջմիածնի մեջ մեծ հետաքրքրությամբ կկարդայինք զանոնք։ Ձեր եղբայրական զգացումներուն և անոր հանդեպ ունեցած անկեղծ բարեկամության տեղյակ էինք։

Հոգելույս պատրիարքը Ձեզ շատ կսիրեր ու կհարգեր, և Մենք անձամբ այս պահուն Ձեզ ճանչնալով. Մենք Մեզ զորացած կզգանք։

ՀԱՅՈՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Կաղոթեմ Ձեր արևշատության և Ձեր Ս. եկեղեցիին փառքին և առավել ծաղկման համար»:

Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքին պատասխանում է Նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարքը.

«Հարգելի՛ Սուրբ Եղբայրս.

Աստուծո փառք տալով, Ձեզ հանդիպ Մեր զգացումները արտահայտելն հետո, սրտանց կողջունեմ Ձեր ներկայությունը այստեղ:

Ձեր Սրբության Մեր Աթոռին և անձին հանդիպ ունեցած զգացումներուն տեղյակ էինք:

Հոգելույս Պատրիարքի հետ մեր տեսակցություններու ընթացքին այս պարագան հանույքով կնաստատեինք: Կուզեմ կրկնել, թե անոր վախճանումեն չափազանց զգացված ենք: Մեզի համար ալ մեծ կորուստ մը եղավ այն, որովհետև Հայ եկեղեցվո բացառիկ մեկ զավակն էր:

Ձեր համբորդության և հոս ներկայության իմաստը կգնահատեմ և ասոր համար է, որ հետևյալը կրսեմ:

Մեր հոգելույս Եղբոր վախճանմամբ մեր զգացած վիշտը Ձեր հոս այցելության առթիվ հանույքով կնաստատեինք: Կուզեմ կրկնել, թե անոր վախճանումեն չափազանց զգացված ենք: Մեզի համար ալ մեծ կորուստ մը եղավ այն, որովհետև Հայ եկեղեցվո բացառիկ մեկ զավակն էր:

Ձեր համբորդության և հոս ներկայության իմաստը կգնահատեմ և ասոր համար է, որ հետևյալը կրսեմ:

Մեր հոգելույս Եղբոր վախճանմամբ մեր զգացած վիշտը Ձեր հոս այցելության առթիվ ուրախությամբ թեթևցած է:

Ձերդ Սրբությունը կնանչնանք Ձեր ընտրության թվականեն սկսյալ, տեղյակ ենք Ձեր աշխատություններուն և զգացումներուն, մասնավորաբար քրիստոնյա եկեղեցիներու համագործակցության և միացման հարցի մեջ Ձեր ունեցած կարծիքներուն: Այս բոլորի համար զՁեզ սրտանց կշնորհավորեմ: Մեր երկու եկեղեցիները հույն համբեն քալած են դարերու ընթացքին: Սրբեմն եթե պատահած են մշուշոտ պահեր, անոնք պատմության խառնված են և այսօր որևէ իմաստ չեն կրեր:

Մեր եկեղեցվո, Ս. Սինոդի և Մեր անձին կողմե կգնահատեմ եկեղեցիներու միության համար Ձեր թափած ջանքերը:

Վստահ ենք, թե Մենք, իբրև եկեղեցիներու Պետեր, պետք է աշխատինք նոր դարաշրջան մը բանալու և եղբայրության կապեր հաստատելու համար:

Սիրելի՛ եղբայր, քանի մը օրեն պիտի փոխադարձենք Ձեր այս այցելության և ավելի երկար պիտի խոսինք այս հարցերու շուրջ:

Աստված միշտ Ձեզ օրհնե և Ձեզ առողջ և երկար կյանք պարգևե»:

Նորին Սրբություն Աթենագորաս Պատրիարքի ողջույնի խոսքերին պատասխանում է Վեհափառ Հայրապետը ասելով.

«Ձերդ Սրբության այս խոսքերը պիտի պահենք Մեր սրտին մեջ իբրև թանկագին ընծա: Այսօրվա հանդիպումը ապագայի Մեր գործակցության հիմնաքարը պիտի ըլլա: Աստուծո անունը երախտագիտությամբ կնիշենք, որովհետև Մեզի պարգևեց այս հանդիպումը»:

Հաջորդում է հյուրասիրություն, ջերմ մթնոլորտում:

Երկու քույր եկեղեցիների Պետերի միջև տեղի ունեցած այս հանդիպումը մտերմիկ մթնոլորտում, սահմանված է մնալու պատմական՝ Հայ և Հույն եկեղեցիների նորագույն շրջանի պատմության մեջ:

Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը և Հունաց Տիեզերական Պատրիարքը ողջագուրմամբ բաժանվում են միմյանցից, անմոռանալի և քաղցր հուշերով:

Պատմական այս այցելության առթիվ, Վեհափառ Հայրապետը Աթենագորաս Պատրիարքին է նվիրում արծաթե մի ափսե, Ս. Էջմիածնի նկարով, գործ Երևանի ճարտար ոսկերիչների:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍԿՅՈՒՏԱՐԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հուլիսի 9-ին, Վարդավառի կիրակի օրը, Վեհափառ Հայրապետը հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Սկյուտարի հայոց Ս. Կարապետ եկեղեցում: Հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին ներկա է լինում ծովածավալ բազմություն, վայելելով հոգեկան անպատում մխիթարություն և երանություն:

Ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, «Հրաշափառ»-ով և ամպհովանու տակ, եկեղեցական թափորով և հայրապետական լրիվ, փառահեղ զգեստավորման մեջ, առաջնորդվում է եկեղեցի:

Բազմաձայն պատարագի հոգեպարար երգեցողությունը կատարում է եկեղեցու երգչախումբը, ղեկավարությամբ դոկտ. Տիգրան Մամիկոնյանի:

«Հայր մեր»-ից առաջ, Վեհափառ Հայրապետը, իր գեղահյուս և բովանդակալից քարոզով, վերացնում և մխիթարում է բազմահազար հավատացյալներին Պայծառակերպության լուսաբաշխ տոնի իմաստի և խորհրդի միջոցով, ինչպես նաև Ս. Էջմիածնի համազգային սրբավայրի հոգևոր, պատմական նշանակությամբ:

Հայրապետական սուրբ պատարագի ընթացքում ավանդական աղավնիներ բաց են թողնվում եկեղեցում, որոնք «երանությամբ լի կթևածեին Ամենայն Հայոց լուսաշող Հայրապետի գլխուն վերև»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՎԵՐՋԻՆ ՕԾՈՒՄԸ



ՀԱՆԴՈՒՅՑԱԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԱԴԱՂԸ ԴՈՒՐՍ Է ԲԵՐՎՈՒՄ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՑ

«ՈՂՋՈՅՆ ՏՈՒՔ ՄԻՄԵԱՆՑ Ի ՀԱՄԲՈՅՐ ՍՐԲՈՒԹԵԱՆ»

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՆԱԽԱՆԴԱՊԵՏԻՆ

Բազմահազար ժողովուրդը, «երկիւղիւ և սրբութեամբ», պատարագիչ Վեհափառ Հայրապետի ձեռքով սուրբ հաղորդություն է ստանում։

Հավարտ սուրբ պատարագի, ավելի քան երկու ժամ, ուխտավորների և հավատացյալների բազմություններ, շարան-շարան, կարգապահ, սրտատրոփ, հավատով և սիրով լի, մերթ երանության արցունքներով, մոտենում են ի համբույր Վեհափառ Հայրապետի Ս. Աջին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ընդունում է բոլորին, բաշխելով Իր օրհնություններն ու ողջույնները հավասարապես բոլորի՞ն, բոլորի՞ն։

Օրվա հանդիսության ականատեսներից մեկը այսպես է բնութագրում հայրապետական սուրբ պատարագի նշանակությունը, թարգմանը հանդիսանալով իր բոլոր եղբայրների և քույրերի անխառն զգացմունքների.

«...Ո՞վ կրնա թարգմանել, ո՞ր գրիչը կրնա նկարագրել այն զգացումներն ու ապրումները այնպես, ինչպես անոնք սա պահուս գոյություն ունին հավատացյալներու սրտերուն մեջ։ Անոնք ունին անպատմելի և արդար հուզում մը միայն Առաքելական Մայր Աթոռի Վեհափառ ներկայացուցչին առջև։ Զգացումներ, որոնք շատ զգացական և ժամանակավոր ապրումներ ըլլալե ավելի, հայ ժողովուրդի դարավոր կյանքին ավիշը կհանդիսանան։

Խունկի անուշ բույրով է լեցված տաճարը սրբության այս հարկին և փառաբանության այս տեղին մեջ, հավատացյալները խոր երկյուղածությամբ կխոնարհին Վեհափառ Հայրապետի առաքելահիմն հեղինակության առջև։

Տեսարան, ուր ամենեն քարսիրտներն անդամ պապանձած են։ Հայ ժողովուրդը, իր անկեղծ ու մեկին դիրքով, այլևս բոլորովին գնահատած ու ըմբռնած է արժեքը Փրկչի Իջման վայրին, որ հոգիներեն ներս կհոսի ահա սրբանվեր սա խորանին լուսարձակներուն, մոմերուն ու խաչերուն ընդմեջեն։

Բյուրավոր շնորհակալություն Քեզի, Վեհափա՛ռ Տեր, մենք չէ՞ որ Քու մեծությունդ լոկ պաշտամունքի ու ծիսակատարության մեջ կուզենք տեսնել, Դուն ներկայացուցիչը Ս. Էջմիածնի, մարմնացումն ու դարավոր սյունն ես և ամրակուռ խարիսխը հայ գոյության» («ժամանակ» օրաթերթ, 9 հուլիսի 1961 թ.)։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԿՅՈՒՏԱՐԻ Ս. ԽԱՉ ԴՊՐԵՎԱՆՔՈՒՄ

Վարդավառի պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է պաշտոնական այցելություն տալ Ս. Խաչ դպրեվանքին, որը հանդուցյալ Պատրիարքի մեծագործություններից մեկը եղավ, միաժամանակ նրա սրտի ամենամոտ կրթական հաստատությունը, որի գոյության և նպատակի հետ շատ պայծառ հույսեր էր կապել Գարեգին Պատրիարքը։

Թեև սուգի մեջ է Դպրեվանքը և վշտահար են դասախոսական կազմն ու ուսանողությունը, սակայն Վեհափառ Հայրապետի ուրախառիթ, մխիթարական այս այցելությունը թեթևացնում է նրանց վիշտը և Ս. Խաչ դպրեվանքի կամարների տակ ստեղծվում է տոնական օրերի հատուկ զվարթ, հոգեշեն մթնոլորտ։

Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, Դպրեվանքի հանդիսության սրահում կազմակերպվում է ընդունելություն, որին մասնակցում են նաև Դպրեվանքի և նրա այլ հաստատությանց խնամակալության անդամներ, Ս. Խաչ, Ս. Կարապետ և Գնտրգյուղի եկեղեցիների թաղական խորհուրդների ներկայացուցիչներ, երգչախմբերի ղեկավարներ և այլ պաշտոնական հյուրեր։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Դահլիճի խորքում, գեղեցիկ վարագույրի ֆոնի վրա, ուշադրություն է գրավում խոշոր վերտառությունը՝ «ԲԱՐԻ՝ ԵԿԱՔ, ՎԵՀԱՓԱ՛Ռ ՏԵՐ», մինչ դահլիճի պատի վրայից հրճվանքով նայում են նկարները Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի, Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի և Գարեգին Պատրիարքի, վերջինս առնված սև քողի մեջ։

Դպրեվանքի տեսուչ հոգեշնորհ Տ. Շահան վարդապետ Սվաճյանը հետևյալ գեղեցիկ ուղերձով ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհարեր այցելությունը և հանգամանորեն ծանոթացնում դպրեվանքին.

«Հանուն Ս. Խաչ դպրեվանքի ուսուցչական կազմին և աշակերտության, սրտագինս կողջունեմ Ձերդ Վեհափառության շնորհարեր գալուստը Ս. Խաչ դպրեվանք։ Ձերդ Վեհափառության այս այցելությունը հրճվանքով կլեցնե մեր բոլորին սրտերը։

Ժողովուրդի այս սիրալիր և ինքնաբուխ ընդունելությունը, որուն առարկա հանդիսացավ Ձերդ Ս. Օծությունը, այս պահուս լավագույն և մխիթարական գրավականն է այն ճշմարտության, որ հայ ժողովուրդը, ուր որ ալ գտնվի, հոգևին կապված է Հայաստանյայ Առաքելական Եկեղեցիին և անոր միակ կեդրոն աստվածակերտ Ս. Էջմիածնին, որում արժանընտիր ու բազմաշնորհ Գահակալը մեր

մեջ տեսնելու երանելի բախտավորությունը ունեցանք բոլորս։

Տակավին մեր ունեցած մեծ սուգի ազդեցության տակ ենք։ Այս հաստատությունը կորսնցուց իր Հայրը։ Ազգն ալ կորսնցուց անձնամոռաց ու հավատավոր եկեղեցական մը և տաղանդավոր միտք մը։

Բայց հաշտ ենք կյանքի այս սովորական դեպքին առջև։ Մեր մխիթարությունը մեր հավատքն իսկ է, այն հավատքը, որ մահ չի ճանչնար և կյանքի և ստեղծագործության գլուխ-գործոցը եղող մարդուն ընդմիշտ կորսվիլը չընդունիր։

Ունինք նաև երկրորդ մխիթարություն մը. թե հանգուցյալ մեծանուն Պատրիարքը իր բարի և առաքինի կյանքով, նկարագրի մեծությամբ և անխոնջ աշխատասիրությամբ ու մտքի և հոգիի ճշմարիտ հարստությամբ շատ հզոր կերպով տպավորած է մեզ, այժմ մեր մեջ կգտնենք զորավոր տենչ հետևելու անոր կյանքի լուսավոր ուղիին։

Վստահ եմ, թե իր անբիծ հոգին պիտի խայտա, եթե այս հաստատության զավակները հետևին այս հաստատության առաջադրած նպատակներուն։

Հանգուցյալը հաճախ կրսեր. «Նյութականի մասին մտահոգություն չունիմ»։ Անոր մեծագույն մտահոգությունն էր, որ այս վարժարանը հասնի այն բարձրագույն մակարդակին, որ կարենա դիմագրավել իր ժողովուրդին հոգեկան և մտավոր պահանջները։ Շատ կփափագեր, որ այս հաստատության զավակները, որպես ուսուցիչ և հոգևորական, ծառայեին իրենց պատկանած Ազգին։

Տակավին մեր աչքին առջև է անոր հայրական բարի ժպիտը և իր խորունկ գոհունակությունը հայտնաբերող քաղցր բառերը՝ երբ կրսեր աշակերտի մը դեպի այդ ուղղությամբ ունեցած փափագն ու հաջողությունը։

Վեհափա՛ռ Տեր, կորսնցուցինք զինք մարմնավորապես։ բայց իր կամքը, իր փափագները, իր նախասիրությունները երկար ժամանակի ի վեր մեզի ծանոթ ըլլալուն համար, առաջ Աստված՝ շփոթության մեջ պիտի չիյնանք ասկե վերջ, երբ առանձին մնանք։ Մեր ուժերուն ներած չափով պիտի աշխատինք առաջ տանիլ Ս. Խաչ դպրեվանքը, ապրեցնելով ու անպակաս ընելով անոր մեջ Գարեգին կրթանվեր Պատրիարքը և անոր բարձրորեն նեղինչված ոգին։

Վեհափա՛ռ Տեր, իբրև տեսուչը այս դպրեվանքին, որ անարժանաբար հինգ տարիներե ի վեր կվարեմ, այն խորունկ համոզումը ունիմ, թե մեր ժողովուրդը և մեր եկեղեցականությունը շատ պետք ունի դպրոցի և դաստիարակության։

Անջրպետները արշավող և տիեզերքի գաղտնիքներու լուծմունքը որոնող սա դարուն մեջ, մեր ժողովուրդը և հոգևորականությունը առավել չափով պետք ունին հոգեկան և բարոյական առողջ ու հաստատուն սկզբունքներու վրա հիմնված գիտության և դաստիարակության։

Ս. Խաչ դպրեվանքը իր կարելին պիտի ընե հաջողելու համար այս մարզերուն մեջ։ Արդարև, որոշ դժվարություններ կան. բայց երբե՛ք ընկճվելու և հուսալքվելու վախը չունինք։ Նպատակն ու արդյունքը շատ նվիրական և հուսադրիչ են։ Կրավե, որ ունենանք այս հաստատության լուսահոգի հիմնադրին հավատքը, կամքը և աշխատանքը։

Վեհափա՛ռ Տեր, անցյալ տարի Ս. Խաչ դպրեվանքը ունեցավ 158 աշակերտներ։ Ասոնցմե 130-ը եկած էին գավառներեն և մնացյալները՝ Ստամբուլեն։

Գավառներու մեջ հայ դպրոցներ չգտնվելուն պատճառով, հոնկե եկածները մեծ մասամբ հայերեն չեն գիտեր։ Անոնք այս հաստատության մեջ տարիներու ընթացքին, մեր թուրք հայրենիքի լեզվին զուգընթաց, կսորվին նաև շատ հաջող կերպով իրենց մայրենի լեզուն։

Շնորհակալ ենք մեր թուրք բարեխնամ կառավարության, որ ժողովրդավար սկզբունքներով և քաղաքակիրթ հասկացողությամբ, ո՛չ միայն կարտոնե հայ լեզվի ուսուցումը մեր դպրոցներուն մեջ, այլ կպարտադրե, որ լավ և վկայալ ուսուցիչներու ձեռքով ու անթերի կերպով ուսուցվի մեր լեզուն հայ աշակերտներուն։

Ս. Խաչ դպրեվանքի միջնակարգի և լիսեի դասարանները վեց հատ են։ Նախակրթարանը ավարտող տղաքը կուգան և կմտնեն մեր Զ դասարանը և վեց տարիներու կանոնավոր ուսումե մը վերջ, շրջանավարտ կըլլան դպրեվանքի լիսեի բաժնեն։

Ս. Խաչ դպրեվանքի լիսեն Թուրքիո մեջ եղած հայ և օտար պետական լիսեներու հավասար է, և մեր շրջանավարտները նույն իրավունքները ունին, ինչ որ ունին պետական լիսեի ավարտականները։

Տեսչությանս շրջանին այս տարի երրորդ լիսեավարտներու խումբն է, որ վկայական կստանա, շատ փայլուն հաջողությամբ։ Պետական և այլ վարժարաններեն եկած քննիչները ուրախությամբ նշեցին մեր տղոց բացառիկ հաջողությունները։ Լուսահոգի Սրբազան Հայրը քննությանց շրջանին ամեն օր մանրամասն կհետաքրքրվեր տղոց քննությունների։

Հոս բառեր կպակսին բացատրելու Նորին Ամենապատվության ուրախությունը, երբ իրեն կհաղորդեի տղոց հաջողությունները։

Այս տարի 11 լիսեավարտ ունինք։

Այն լիսեավարտ աշակերտները, որոնք կփափագին իրենց ուսումը շարունակել կրո-

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆՎԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ՀՈՒՆԱՑ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՆՎԻՐԱԾ ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

նական և հայագիտական ուղիով, կմնան դպրեվանքի մեջ և կհետեւին ընծայարանի դասընթացքներուն։

Ընծայարանը ունի 2 դասարան 4 և 5 աշակերտներով։ Այս տարի, եթե Տերը կամենա, պիտի ունենանք դասարան մը ևս։

Լուսահոգի Սրբազան Հայրը ընծայարանի ուսանողներուն անպայման կուսակրոն եկեղեցական ըլլալու պարտադրանքին տակ չէր դրած, այլ կփափագեր, որ եթե ուզեն, անոնք կրնան ըլլալ զարգացած քահանաներ և ուսուցիչներ։

Տակավին ընծայարանի աշակերտները հոժարակամ եկեղեցական ըլլալու խոստումը չեն տված, բայց բոլորն ալ ուշիմ, աշխատասեր և ծառայասեր տղաք են, մեզի մեծ հույս կներշնչեն, թե անոնք պիտի իրագործեն Սրբազան Պատրիարք Հոր երազները։

Ունինք 24 հատ լավ և որակավոր հայ և օտար ուսուցիչներ, որոնք գործակիցներ են ինձի։

Վեհափա՛ռ Տեր, մեր անցյալ և նախանցյալ տարիներու շրջանավարտներեն մեկ մասը, որոնք չհետևեցան ընծայարանին, բոլորն ալ առանց բացառության կհետևին համալսարանական կրթության։ Ուրախ եմ, որ Ս. Խաչ դպրեվանքը անոնց մեջ դրավ ուսանելու ճաշակն ու տենչը։

Հուզումով կլեցվիմ, Վեհափա՛ռ Տեր, երբ կտեսնեմ մեր աշակերտները, որոնք այսօր պետական համալսարաններու մեջ աշխատության և հաջողության նույն թափով դեպի առաջ կսուրան։ Ինչքա՜ն ուրախ պիտի ըլլանք, երբ քանի մը տարի վերջ, մեր գավառի այս պատանիները տեսնենք մեկ-մեկ բժիշկներ, փաստաբաններ, արվեստագետներ և գիտության մարդեր։

Ուրախ եմ ըսելու, թե երախտագիտության զգացումը միշտ վառ է անոնց մեջ, և ամեն առիթով իրենց անխառն երախտիքը կհայտնեն Ս. Խաչ դպրեվանքին և անոր երջանկահիշատակ ու հեռատես հիմնադրին։

Կրոնական կյանքին գալով, մեր աշակերտները առավոտ և երեկո և ամեն կիրակի առանց բացառության կմասնակցին եկեղեցական արարողությանց։ Անոնց նկարագրի և բարոյականի շինության գործին մեջ Եկեղեցին իր աղոթքներով, իր շարականներով, իր անցյալի փառքով մեծ դեր կխաղա անոնց մատաղ մտքերուն մեջ։ Բոլորն ալ կսիրեն Եկեղեցին և սիրով կապված են անոր փրկարար նպատակին։

Այժմ արձակուրդի շրջան է. հանգուցյալ Պատրիարքի վախճանումեն առաջ տղոց մեծ մասը մեկնած էին իրենց գյուղերն ու քաղաքները, այնպես որ հոս մնացածներով պիտի ջանանք ներկայացնել Ս. Խաչ դպրեվանքի աշակերտությունը։ Վստահ եմ, թե Ձերդ Վեհափառությունը ներողամիտ պիտի դտնվի եղած պակասներուն համար։

Բայց գավառ գացողներն ալ պարապ չեն նստած։ Արձակուրդը կանցնեն ընթերցումներով և եկեղեցական ծառայությամբ, որոնց մասին հաճախ տեղեկություններ կուզեմ գավառի քահանաներեն, որոնք բոլորն ալ լավ կարտահայտվին տղոց մասին։

Վեհափա՛ռ Տեր, Ձեր օրհնաբեր այցելությամբ, այս հաստատությունը անգամ մը ևս նվիրականացավ. որքա՜ն ուրախ է անոր հոգին հիմա, երբ կտեսնե, թե Ազգիս Վեհափառ Հայրապետը եկած է իր հիմնած հաստատության մեջ և Իր հայրապետական օրհնությունները կուտա։

Ինչպես ծանոթ է բոլորիդ, հանգուցյալը կատարյալ էջմիածնասեր մըն էր, բառին բովանդակ իմաստով։ Ան ինչքա՜ն տպավորած է մեզ իր իմաստուն և քաղցրաշունչ քարոզներով, երբ մանավանդ կխոսեր Վեհիդ և Մայր Աթոռ լուսակերտ Ս. Էջմիածնի մասին։

Վեհափա՛ռ Տեր, մենք, իր հոգևոր զավակները, պիտի հետևինք իրեն քայլ առ քայլ, այն սերը, այն խորունկ հարգանքը, այն անքակտելի կապը, որ կար լուսահոգի Գարեգին մեծ Պատրիարքին մեջ, կա նաև մեր մեջ և այս պիտի շարունակվի հավերժորեն։

Թող անսասան մնան Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և անոր ճառագայթները եղող աշխարհի բոլոր հայ եկեղեցիները։

Երկա՜ր տարիներ Լուսավորչի արժանավոր հաջորդ Հայոց ամենասիրելի և երիտասարդ Հայրապետին։ Աստված խաղաղության, համերաշխության և սիրո մեջ պահե հայ ժողովուրդը»։

Այնուհետև ուսանողները հանդես եկան գալիս երգերով, արտասանություններով, ուղերձներով, խորունկ գոհունակություն պատճառելով Վեհափառ Հայրապետին և բոլոր ներկաներին։

Ս. Խաչ դպրեվանքի խնամակալության անունիդ ողջույնի խոսք է ասում պր. Կարպիս Ղազարյանը։

Դպրեվանքի ուսանող Արսեն Ճանյանը, հանուն իր ընկերների, կարդում է հետևյալ գողտրիկ ձոնը՝ Վեհափառ Հայրապետին ուղղված.

ԲԱՐԻ՛ ԵԿԱՐ, ՎԵՀԱՓԱ՛Ռ

Գուրգուրո՛ւ Հայր,
Բաղձալի Էջմիածնեն
Մեր ցավին համար եկար,
Հայ ցավին համար եկար։
Քու ձայնիդ մեջ,
Հոգեյի՛ց Հայր,
Մեր մեծ ցավին դարման կա։
Քու ձայնիդ մեջ

Մեր երգը կա,
Մեր տառապանքն ու լացը կա:
Քու ձայնիդ մեջ,
Վեհափառ Հայր,
Մեր հարազատ սիրտը կա:
Քու ձայնիդ մեջ,
Հնադարյան մեր Ազգին խոր
կամքը կա:
Նայվածքիդ մեջ
Էջմիածինն ամբողջ կա:

Վերջում հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը ուսանողության ուղղված օրհնությամբ և գոհունակության խոսքով, և ոգեկոչելով հիշատակը հանգուցյալ Պատրիարքի, հորդորում է ապրեցնել նրան իրենց սրտերում, կյանքում և գործերի մեջ։

Ընդունելությունը վերջանում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով։

Դպրեվանքից վերադարձի ճանապարհի վրա, Վեհափառ Հայրապետը այցելում է Սկյուտարի հայոց գերեզմանատունը, ուր «Հոգւոց» է արտասանում Պետրոս Դուրյանի, Ռեթեոս Պերպերյանի և Հովհաննես Հինդլյանի շիրիմների վրա։

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հուլիսի 10-ին, երկուշաբթի, հետմիջօրեի ժամը 16-ին, Պատրիարքարանում, Վեհափառ Հայրապետը ընդունեց Հունաց Տիեզերական Պատրիարք Ամենապատիվ Տ. Աթենագորասի փոխադարձ այցելությունը։

Տիեզերական Պատրիարքը հայոց Պատրիարքարանի դարբասի առաջ ընդունվեց հայ բարձրաստիճան հոգևորականների կողմից և Մայր Եկեղեցու զանգերի ցնծագին ղողանջի տակ, առաջնորդվեց Պատրիարքարանի դահլիճը, որի մուտքի առաջ Սրբազան Հյուրին ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, սրտագին ողջագուրմամբ։

Ընդունելությանը ներկա էին գերաշնորհ Տ. Խաչ, Տ. Մամբրե, Տ. Սերովբե, Տ. Շնորհք, Տ. Կոմիտաս սրբազանները, վարդապետ և քահանա հայրեր։

Եկեղեցու երկու հոգևոր իշխանավորների միջև տեղի ունեցավ եղբայրական ջերմ, անկեղծ զրույց, Հայ և Հույն Եկեղեցիներին շահագրգռող հարցերի շուրջ։

Ապա հաջորդեց հյուրասիրություն։

Հրաժեշտից հետո, Պատրիարք Սրբազանը առաջնորդվեց Մայր Եկեղեցի, ուր Նորին Սրբազնությունը աղոթեց և ողջունելով Իրեն դիմավորելու համար հավաքված բազմությանը, ասաց.

«...Իր [Գարեգին Պատրիարքի] մահվամբ բոլորս ալ շատ մեծ կորուստ մը ունեցանք, թե՛ Հայ Եկեղեցին և համայնքը, թե՛ կառավարությունը, ինչպես Հույն Եկեղեցին, բոլոր քրիստոնյա աշխարհը և մանավանդ ես։

Մենք քրիստոնյաներս կհավատանք, որ այս է կյանքը և ուրախություն և տխրություն միատեղ են։ Բայց մեր այս տխրութենեն վերջ, մեծ ուրախություն մը ունինք անոր համար, որ հիմա մեր մեջ է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը։

Ամբողջ աշխարհի հայերուն Մայրագույն Պատրիարքն է Ան և բոլոր եկեղեցիներու ամենաերիտասարդ Հայրապետը։ Թե՛ հոս հայոց Պատրիարքարանին մեջ և թե՛ մեր Տեղերի Պատրիարքարանին մեջ երբ տեսնվեցանք իրարու հետ, եղանք այնքան մտերիմ, որ կարծես, թե արդեն վաղեմի երկու բարեկամներ ըլլայինք։ Մենք։ Էջմիածնի Վեհափառ Կաթողիկոսը ես ալ մեծապես կգնահատեմ, ամեն տեղ ջերմ ընդունելություն կգտնե և հարգանք կվայելե։

ԳՈՀ ԵՆՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԴ ՋԵՐՄՈՐԵՆ ԿԱՊՎԱՄ ԵՔ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ԱՌԱՆՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՆԱԼՈՒ, ՁԵՆՔ ԵՐԵՎԱԿԱՅԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ, ՁԵՆՔ ՃԱՆՁՆԱՐ ՄԵՆՔ ԱՅԴՊԻՍԻ ԵԿԵՂԵՑԻ։ ՄԵՆՔ ՁԵՆՔ ՀԱՎԱՏԱՐ, ԹԵ ՈՐԵՎԷ ՀԱՅ ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ՁԻԼԼԱ։

Կաղոթենք, որ Տերը արժանավոր հաջորդ մը տա հայոց Պատրիարքության և կկարծենք, որ հանդարտ ու խաղաղ վիճակով ընտրություն մը պիտի ընեմ, քաղաքակիրթ հավականություն մըն եմ։

Որքան ատեն Տերը կամենա և ես գտնվիմ պաշտոնիս գլուխը, մեծ ուրախությամբ պիտի գամ ձեր մոտ, պիտի ըլլամ ձեր եկեղեցիներուն մեջ։ Մեծ ուրախությամբ պիտի սպասեմ նոր Պատրիարքին և նույն սերն ու հարգանքը պիտի ունենամ անոր հանդեպ»։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԳԹՈՒԹՅԱՆ ԱՅԴ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Հունիսի 10-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Եդիկուլեի Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցը։

Գթության այդ հարկի տակ, Վեհափառ Հայրապետը ջերմորեն դիմավորվում է հոգաբարձության ատենապետ դոկտ. Նորայր Պերպերյանի, հաստատության բժշկապետ

դոկտ. Հայրո Հայրապետյանի, բժշկական համբողջ կազմի, խնամակալության անդամների կողմից և նախ առաջնորդվում է Ս. Փրկիչ մատուռը աղոթելու։

Այնուհետև հիվանդանոցի ընդունելության սրահում, Վեհափառ Հայրապետի, «մեր օրերու Վասպուրականի Արծիվ»-ի օրհնաբեր այցելությունը ողջունում է դոկտ. Հայրապետյանը, շնորհակալության և երախտագիտության անկեղծ զգացմունքներով, «որ Իր թևերը տարածեց մեր ալ վրա, ինչպես ըրած էր ամբողջ աշխարհի մեջ տարածված հայության վրա»։

Ազգային հիվանդանոցի բժշկական անձնակազմը մի առ մի համբուրում է Վեհափառ Հայրապետի Ս. Աջը։

Վեհափառ Հայրապետը օրհնում է գթության այդ հարկի բոլոր նվիրյալ աշխատողներին, ապաքինում բարեմաղթում բոլոր հիվանդներին և օրհնում հիշատակը այդ մեծ հաստատության բարերարների։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելում է հիվանդանոցի բոլոր հարկաբաժինները, առանձին կաբինետները, սրտի մեծ գոհունակությամբ և հպարտությամբ, Իր օրհնությունը բաշխելով բոլոր հիվանդներին։ Վեհափառ Հայրապետը հետաքրքրվում է հիվանդների վիճակով, կարիքներով և շուտափույթ առողջություն մաղթում, Իր Ս. Աջը դնելով հիվանդների վրա։

«Դուք,— ասում է Վեհափառ Հայրապետը հիվանդներին,— Ձեր հիվանդության պատճառով չէիք կրնար եկեղեցի գալ, ուստի Մենք եկանք ձեզ այցելել։ Կմաղթենք շուտ ապաքինում և վերադարձ ձեր սիրելիներու մոտ»։

Վեհափառ Հայրապետը մասնավորաբար հետաքրքրվում է փոքրիկ հիվանդների վիճակով. «Թույլ տուք մանկտույդ գալ առ իս», մաղթում, որ նրանք շուտ դուրս գան հիվանդանոցից և վազեն դեպի դպրոց։

Կեսօրվա մոտ, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում, հանուն հիվանդանոցի հոգաբարձության, բարի գալստյան հետևյալ գեղեցիկ ուղերձն է կարդում դոկտ. Գ. Գրրրքճյանը.

«Թույլ տվեք ինձ, Վեհափա՛ռ, հանուն Ստամբուլի Ս. Փրկչյան հայոց հիվանդանոցի հոգաբարձության, պաշտոնեության և պատսպարյալներու, բարի գալուստ մաղթել Ձեզ և երախտագիտություն հայտնել այն բարձր պատվույն համար, զոր բարեհաճեցաք շնորհել այս ազգային բարենպատակ հաստատության և երջանկացնել զայն Ձեր բարձր շնորհներով և օրհնություններով։

Անկարելի է ինձ այս պահուս բառերով արտահայտել այն հուզումը և հոգեկան խռովքը, որուն մեջ կգտնվինք բոլորս, մեր մեջ ունենալով հայ ժողովուրդի հոգեկան և ֆիզիկական գոյության հիմնաքարը և գերագույն խարիսխը եղող վեհագույն և սրբագույն հաստատության Գահակալը, որուն ներկայության գտնվելու հազվագյուտ և գերազանց բախտը կվայելենք։

Հայ ժողովուրդը, Վեհափա՛ռ, ի սփյուռս աշխարհի տարածված Ձեր զավակները գիտակից են, կխնդրենք որ վստահ ըլլաք այս իրողության, և կգուրգուրան սրտագին այդ սրբազնագույն հաստատության վրա։ Անոնք գիտեն, թե առանց անոր այսօր գոյութենե դադրած պիտի ըլլային նաև իրենք, ինչպես որ գոյություն չունին այսօր իր ժամանակակից հզոր ազգեր, որոնք զրկված էին սակայն նմանօրինակ հաստատություններե և կամ այդ գիտակցությունը ունեցող զավակներե, և որոնց անունները այսօր այլևս պատմության գրքերու մեջ միայն կհիշատակվին։

Բազմաթիվ դարեր առաջ, Հովսեփ կաթողիկոս Հողոցմեցին, Արտաշատի մեջ գումարած իր 18 եպիսկոպոսներու ժողովին մեջ, կուտար իր վճռական պատասխանը Հազկերտի, ըսելով, թե ոչ մեկ բան, ոչ հրեշտակներ, ոչ մարդիկ կարող էին բաժնել զիրենք իրենց սուրբ հավատքեն։ Բազմաթիվ դարեր հետո, այսօր, իր հաջորդները ևս կըսեն. «Ոչ մեկ բան կարող է զմեզ բաժնել մեր սուրբ հավատքեն և մեր զավակներեն, ուր որ ալ ըլլան և ինչ պայմաններու մեջ ալ գտնվին անոնք»։

Իսկ զավակները, Ձեր զավակները, Վեհափա՛ռ, կգոչեն. «Ոչ մեկ բան կարող է բաժնել զմեզ մեր լուսաղբյուրեն և անոր Գահակալեն», որոնցմե կսպասեն իրենց տոհմային միությունը և երջանկությունը։

Օրհնեցե՛ք, կխնդրենք պաղատագին, Վեհափա՛ռ, Հայ Ազգը։ Եվ մենք, Ձեր անձնվեր զավակները, պիտի պահենք միշտ հիշատակը Ձեր այցելության մեր սրտերուն մեջ, իբր ամենաթանկագին և անփոխարինելի գոհար»։

Այնուհետև խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և գնահատանքով խոսում Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի և նրա բժշկական անձնակազմի կատարած նախախնամական դերի մասին հայ կյանքում, ոգեկոչում է հիշատակը հաստատության հին և նոր բարերարների, Իր հայրապետական գոհունակությունն ու գնահատությունն է հայտնում հիվանդանոցում տիրող կարգ ու կանոնի, մաքրության, հիվանդներին ցույց տրված հոգածության և քրիստոնեական ուշադրության համար։

Վերջում Վեհափառ Հայրապետը ազգային այս հաստատության վրա հայցում է ամենաբարին Աստուծո օրհնությունն ու հովա-

նին և հրաժեշտ է առնում տառապանքների ամոքման այդ տնից։

Նույն օրը երեկոյան, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով «Պարկ հոթել»-ի տեր և տնօրեն պր. Արամ Խտրյանի սրտագին հրավերին, փոխադրվում է նոր հյուրանոց, ուր մնում է մինչև Իր մեկնումը Իր շքախմբի հետ, վայելելով հյուրընկալի գուրգուրանքն ու սրտաբուխ, ջերմագին հյուրասիրությունը։

ԱՅԼ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հուլիսի 11-ին, Վեհափառ Հայրապետը շրջունակում է Իր այցելությունները Ստամբուլի մի շարք եկեղեցիներին և ազգային հաստատություններին, ամենուրեք լինելով Իր սիրելի և հարազատ զավակների հետ և արժանանալով ջերմ ընդունելության։

Վեհափառ Հայրապետը այցելում է Սամաթիայի Ս. Գևորգ եկեղեցին, առաջին պատրիարքանիստ եկեղեցին, որի 500-ամյակը տոնվելու է շուտով, մեծ հանդիսավորությամբ։ Վեհափառ Հայրապետը «Հրաշափառ»-ով մուտք է գործում եկեղեցի։ Հավաքված բազմությունը խանդավառությամբ դիմավորում է Վեհափառ Հայրապետին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելում է նաև Ստամբուլի հնագույն և փառավոր պատմական կոթողներից մեկը՝ Այա Սոֆիայի Մայր Տաճարը, որ այժմ թանգարանի է վերածված, և թուփգափուի թանգարանը։

Նույն օրը, հետմիջօրեին, Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանում ընդունում է Ստամբուլի հայ ուսուցիչների ներկայացուցիչների պատվիրակությանը և սրտագին զրույց ունենում նրանց հետ։

Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս հայ կյանքում և հայ նոր սերնդի մտավոր և բարոյական դաստիարակության գործում հայ ուսուցչի մեծ դերի և վսեմ կոչման նվիրված բովանդակալից ճառով, որը լսվում է մեծ հետաքրքրությամբ և հաճախ ընդհատվում ծափերով։ Իր ճառում Վեհափառ Հայրապետը օրհնությամբ ոգեկոչում է հիշատակը մեծ ուսուցչապետերի՝ Խրիմյան Հայրիկի, Ռեթեոս Պերպերյանի, Հովհաննես Հինդլյանի և շատ ու շատ ուրիշների։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Պատրիարքարանում ընդունում է ժողովրդի զանազան ներկայացուցիչների այցելությունները և բաժանում Ս. Էջմիածնից բերված խաչիկներ։

Ամսի 12-ին, շաբաթ օր, Վեհափառ Հայրապետը այցելում է Կետիկփաշայի Ս. Հովհաննես եկեղեցին և Ս. Մեսրոպյան նորակառույց վարժարանի շինությունը։ Թաղական խորհրդի ատենապետ Վարդգես Գաբրիելյանը կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված զգայուն մի ուղերձ, որտեղ նա ասում է. «Ձեր ներկայության հրապարակով կըսենք, թե կրոնքով իբրև հայ Առաքելական եկեղեցվո զավակ, անքակտելի կապերով միշտ կապված ենք Ս. Էջմիածնի Մայր Աթոռին ու այս գոյավիճակը պիտի պահենք հավիտյան...»։

Նորին Ս. Օծությունը, շնորհակալություն հայտնելով արտահայտված որդիական աղնիվ և ջերմ զգացմունքների համար, ասում է.

«Հայ եկեղեցին և հայ դպրոցը կողք-կողքի. անա սուրբ և մեծ ավանդություն մը հայկական, որ նվիրական է մեզի համար, փրկարար և կենարար»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելում է Խասգյուղի Ս. Ստեփանոս եկեղեցին, ուր ողջունում և օրհնում է ժողովրդին։

Եկեղեցու խորհրդարանում մեծանուն Կոմիտաս վարդապետի աշակերտներից Զարեհ Մխիթարյանը Վեհափառ Հայրապետին նվիրում է անմահ Կոմիտասի մեկ երգի իր կողմից պատրաստված ձայնագրությունը։

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ներկայացվում է հոգելույս Գարեգին Պատրիարքի վերջին գրաբար հետևյալ քառյակը՝ Կաթուղիկե Ս. Էջմիածնի տոնի օրը, Հայրապետական մաղթանքի ժամանակ երգվելու համար.

ԶԱթոռն մեր Արարատեան,
Պահեա անշարժ և անսասան.
Հայրապետին Հայոց համայն,
Տեառն Վազգենայ տուր կեանս երկար։

Քառյակը ձայնագրել և դաշնավորել է աթոռանիստ Մայր Եկեղեցու երաժշտապետ պր. Վահե Ջնտանճյանը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱԼՖԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՐԿԻ ՏԱԿ

Հուլիսի 12-ին, շաբաթ օր, Վեհափառ Հայրապետը այցելում է Խասգյուղում Գալֆայան որբանոցը։

Համեստ և հավատավոր մի հայ կնոջ՝ Սրբուհի մայրապետ Գալֆայանի (1822—1889) նախաձեռնությամբ Սկյուտարի բարձունքների վրա հիմնված այս պատվական հաստատությունը, որը բոլորում է իր գոյության 96-ամյակը, Ստամբուլի հայ կյանքում կատարել է շատ մեծ, շնորհակալ աշխատանք, որը հայ աղջկանց հայեցի և քրիստոնեական դաստիարակության վսեմ գործում։

Գալֆայան աղջկանց այս որբանոցը, որպես հայ ժողովրդի սրտին մոտիկ հաստատություն, պահվել-պահպանվել է մեր ժողովրդի սրտաբուխ լումաներով։

Ամենայն Հայոց Հայրապետը Իր շնորհաբեր այցելությամբ բարեհաճում է պատվել ազգային կրթական այս մեծ հաստատությունը։

Առավոտյան ժամը 10.30-ին, Վեհափառ Հայրապետը որբանոցի դռան առաջ դիմավորվում է խորին հարգանքով և երկյուղածությամբ, հաստատության խնամակալության անդամների, հաստատության արժանավոր Տայր Մարիամ մայրապետի, քույրերի և եռախտապարտ ողջ ուսանողուհիների կողմից և թափորով ու «Հրաշափառ»-ով առաջորդվում որբանոցի մատուռը։ Վեհափառը ողջույնի խոսք է ասում և օրհնում հաստատությունը, աստվածասեր քույրերին և ժողովրդին։

Ներկա է նաև ծանոթ գրագիտուհի տիկին Այկանուշ Մառքը։

Նորին Ս. Օծությունը ողջունում է հաստատության բոլոր ղեկավարներին, տալով հայրապետական Իր օրհնությունն ու պատգամը, որոնք ընդունվում են բարեպաշտ խոնարհությամբ և երանությամբ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջորդվում է Գալֆայան տան դահլիճը։ Ուսանողուհիները երգում են հաստատության աղջերգը։

Դահլիճում Վեհափառ Հայրապետի օրհնաբեր այցելությունը հանուն ուսանողուհիների ողջունում է ամենափոքրիկ գալֆայանցին, Նի գեղեցիկ արտասանության հաջող կատարմամբ։

Ապա Վեհափառ Հայրապետը, հաստատության ղեկավարների առաջնորդությամբ, ծանոթանում է որբանոցի բոլոր բաժիններին, մտնում է դասարաններում, ննջարաններում, սեղանատանը, ամեն քայլի հայրապետական որ բարձր գնահատանքը և գոհունակությունը հայտնում տիրող մաքրության, կանոնավորության և կրոնարույր, շինարար մթնոլորտի համար։

Գալֆայան որբանոցի խնամակալ տիկանց հանձնախումբը, հաստատության սեանատան մեջ, Վեհափառ Հայրապետի արձր պատվին կազմակերպում է ընդունելություն։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը և այնուհետև կրթական այս պատվական հաստատության կամարների ներքո, սեղանների շուրջ ստեղծվում է ջերմ, ընտանեկան մթնոլորտ։

Կատարվում են արտասանություններ, երգեր, ուղերձներ։

Որբանոցի արդի Մայր Մարիամ Քյոսեյանը առաջինը հանդես է գալիս բարի գալըստյան հետևյալ գեղեցիկ ուղերձով.

«Վեհափա՛ռ Տեր.

Ձերդ Ս. Օծության շնորհաբեր այցելության առիթով, հոգիս հրճվանքով լի, խոնարհաբար կուգամ իմ և ուխտի միաբանության անձնվեր քույրերուն և հարյուրյակ մը սանուհիներուս կողմե շնորհակալություն հայտնել այն բարձր շնորհին համար, զոր ընծայեցիք մեզ, Ձերդ Վեհափառության այսօրվան բերկրառիթ այցելությամբ։

Թույլ տվեք ուրեմն, Վեհափա՛ռ Տեր, որ հանուն միաբանության և մատաղատի անմեղ սանուհյացս, որոնցմե այս պահուս մասմը կբացակայի արձակուրդով, սիրազեղ համբույրներ դրոշմեմ Ձեր պատվական Ս. Աջույն, ամենաջերմ իղձերով և բարեմաղթություններով։

Անսասան մնաք, Վեհափա՛ռ Տեր, Ձեր Հայրապետական բարձր Գահուն վրա և Ձեր թանկագին կյանքին արևը միշտ փայլի և շողա մեր գլխուն վրա»։

Խնամակալության անունից հանդես եկավ պր. Վահան Խյուտավերտյանը հետևյալ գեղեցիկ ուղերձով.

«Վեհափա՛ռ Տեր.

Թուրքիո հայոց անձնվեր և անձնազոհ Սրբազան Պատրիարքին, երջանկահիշատակ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանի անակնկալ մահվամբ, երբ մեր աչքերը արցունք և սրտերը սուգ ունին, մխիթարական է և սրտապնդիչ մեզ մոտ ներկայությունը Ձերդ Վեհափառության, Ս. Էջմիածնի ազգընտիր Գահակալին, որուն այսօր մեր որդիական անկեղծ և սրտագին զգացումները մատուցանելու պատեհությունը կգտնենք։

Գալֆայան Սրբուհի մայրապետի ձեռակերտ հաստատությունս, իր 96-ամյա հանգրվանին, Ձեր օրհնաբեր այցը ընդունելու պատիվը ունենալուն համար հպարտ է ու երջանիկ։

Ի դիմաց Գալֆայան միաբանության և խնամակալության, հարգանք կխոնարհիմ մեր պատվական և սիրելի Հայրապետին առջև, որ մեզ կբերե լուսավորչի լույսը Ս. Էջմիածնեն։ Կմաղթեմ երկար ու արևշատ կյանք, խնդրելով Իր հայրական օրհնությունները հաստատությանս բարգավաճման ու երկարակեցության համար և խոնարհաբար ակնածանոք կհամբուրեմ Ձեր սրբազնաձ Ս. Աջը»։

Այնուհետև խոսք առնելով, Վեհափառ Հայրապետը օրհնում է բոլոր ներկաներին և ասում.

«Ձեզ հետ շատ մաղցր պահեր անցուցինք այս հարկին տակ։ Աստվածային շունչը կըզգացվի այս հաստատության ոչ միայն մա-

տուին, այլ դպրոցին մեջն ալ: Դուք, սիրելի՛ Մայր և Հայրեր, նվիրված Աստուծո և մեր զավակներուն, անփոխարինելի գործ մը կկատարեք: Պիտի շմոռնանք այս սեղանին շուրջ ստեղծված ջերմ մթնոլորտը: Ճաշակեցիք ձեր պատրաստած համեղ ճաշերը, բայց նյութականին հետ հագեցանք նաև հոգեպես և բարոյապես:

Կգնահատեմք բոլոր անոնք, որոնք այս հաստատության կօժանդակեն: Խնամակալություն, ժողովուրդ և մամուլ գուրգուրանքով կհետևին այս հաստատության հառաջդիմության:

Կուզենք Մեր գնահատանքի խոսքերը ուղղել Գալֆյան ուխտին և անոր գլուխ հանդիսացող Մայրապետին, բերել Ս. Էջմիածնեն Մեր օրհնությունը և այս առթիվ շնորհել իրեն լանջախաչ կրելու իրավունք, և Մեզ համար մեծ հանույք պիտի ըլլա Ս. Էջմիածին Մեր վերադարձեն հետո անմիջապես, այնտեղ պատրաստված հատուկ լանջախաչ մը ուղարկել իրեն, որպեսզի զարդարե իր կուրծքը Ս. Էջմիածնի մեջ պատրաստված և օրհնված խաչով մը, զոր ինքը, վստահ ենք, պարծանքով պիտի կրե»:

Ապա Վեհափառ Հայրապետը անցնում է հյուրասրահ և Իր օրհնություններն է բաշխում աջահամբույրի սպասող բազմության:

Վեհափառ Հայրապետը, մոտ երկու ժամ անցկացնելուց հետո Գալֆյան որբանոցի մաքրամաքուր մթնոլորտում, հրաժեշտ է առնում հոգեկան մեծ գոհունակությամբ և վերադառնում հյուրանոց:

Հուլիսի 12-ը պատմական անմոռանալի օր հանդիսացավ Գալֆյան որբանոցի համար:

Երեկոյան ժամը 19.30-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Բյոյուքդերեի հայոց եկեղեցին, Իր օրհնություններն ու հայրապետական պատգամը տալով Իր զավակներին:

Այնուհետև Նորին Ս. Օծությունը այցելեց Գուրուչեշմեի եկեղեցին, ուր նույնպես մուտք գործեց «Հրաշափառ»-ով: Արարողության վերջում Վեհափառ Հայրապետը տվեց Իր օրհնություններն ու պատգամը հավաքված բազմության:

Երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Օրթագյուղի հայոց եկեղեցին, ուր նույնպես ամպհովանու տակ, «Հրաշափառ»-ով մուտք գործեց, արժանանալով խանդավառ, արտակարգ մեծարանքի և երախտագիտության:

Հովվապետական շնորհաբեր այցելությանց վերջում, Վեհափառ Հայրապետը եղավ Բեշիկթաշի հայոց եկեղեցում, որտեղ Նորին Ս. Օծությունը ընդունվեց նույնպիսի ջերմությամբ և պատիվներով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳ ԲԵՅՕՂԼՈՒԻ Ս. ԵՐԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Հուլիսի 13-ին, հինգշաբթի, Բեյօղլուի Ս. Երրորդություն եկեղեցում, եպիսկոպոսական պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս սրբազանը և քարոզեց Վեհափառ Հայրապետը:

Սուրբ պատարագի երգեցողությունները կատարում էր «Ասողիկ» երգչախումբը, դեկավարությամբ պր. Ժ. Արսլանյանի:

Հավարտ սուրբ պատարագի, կատարվեց Հոգեհանգիստ Գարեգին Պատրիարքի հոգու խաղաղության համար:

Կեսօրին, Բեյօղլուի և Ղալաթիայի եկեղեցիների թաղականությունների անունից, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին կազմակերպվել էր ընդունելություն, Բողազիչի ճաշարանում, Ոսփորի ափին: Հրավիրված էին բազմաթիվ անձնավորություններ:

Վեհափառ Հայրապետին ողջունում են և բաժակ առաջարկում Նրա թանկագին կենաց դոկտ. Հ. Հայրապետյանը, դոկտ. Վարդ Շիկահերը և դոկտ. Գևորգյանը:

Ընդունելությունն անցնում է շատ ջերմ մթնոլորտում: Վերջում խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և Իր շնորհակալությունն ու գոհունակությունն է հայտնում ջերմ, խանդավառ այս հանդիպման համար: Վեհափառ Հայրապետը Իր խոսքի մեջ անդրադառնում է վերջին 4—5 տարիների մեր եկեղեցական կյանքի տխուր դեպքերին և ասում.

«Մենք այդ բոլորը կնկատեմք թյուրիմացությանց արդյունք, շատ մակերեսային և անցողական երևույթներ, որոնք չեն համապատասխաներ մեր ժողովուրդի, հայ ժողովուրդի ճշմարիտ զգացումներուն և մտածումներուն»:

Վեհափառ Հայրապետը, հրաժեշտ առնելուց հետո, Իր ճանապարհի վրա այցելում է Նորագյուղի եկեղեցին, ուր Իր օրհնություններն է տալիս հավաքված հավատացյալ ժողովրդին:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ԵՐԳՉԱԽՄԲԻ ԵՐԵԿՈՒՅԹԸ

Հուլիսի 13-ի երեկոյան, Վեհափառ Հայրապետը, Պատրիարքարանում, ընդունում է Ստամբուլի հայոց քահանայական դասին մոտ 35 հոգի: Վեհափառ Հայրապետը, օրհնելով արժանապատիվ քահանա հայրերին, տալիս է նրանց հայրական հորդորներ:

Երեկոյան ժամը 20-ին, «Պարկ հոթել»-ում, Ստամբուլի հայոց միացյալ երգչախումբը կազմակերպում է մեծարանքի ընդունելություն, որն անցնում է շատ ջերմ մթնոլորտում։

Ստամբուլում գործում են 14 երգչախմբեր, հետևյալ անուններով.

1. «Կոմիտաս» (Գուրուչեշմե).
2. «Գողթան» (Գումգափու).
3. «Ասողիկ» (Բեյօղլու).
4. «Զվարթնոց» (Կեսիկփաշա).
5. «Սկյուտարի Միացյալ» (Սկյուտար).
6. «Ս. Կարապետ» (Սկյուտար).
7. «Վարվառյան» (Գումգափուի դուրս).
8. «Քառասուն Մանկանց» (Բաքըրգյուղ).
9. «Ս. Թագավոր» (Գատրգյուղ).
10. «Նարեկացի» (Բեշիկթաշ).
11. «Դուրյան» (Բայաթ).
12. «Սահակյան» (Սամաթիա).
13. «Վարդանանք» (Ֆերիգյուղ).
14. «Լուսավորիչ» (Բեյօղլուի Ս. Հարություն)։

Երգչախմբերի մեջ ամենահինը «Կոմիտաս»-ն է, հիմնված 1910 թվականին։ Անմահ Կոմիտաս վարդապետը, երբ 1915 թվականին գտնվում էր Կոստանդնուպոլսում, որոշ ժամանակ անձամբ ղեկավարել է այս երգչախմբին։

Պր. Հակոբ Ֆընտըգյան, հանուն Միացյալ երգչախմբի, կարդում է հետևյալ հուզիչ ուերձը.

«Վեհափա՛ռ Տեր.

Դժվար է գտնել բառեր, նույնիսկ Հայազնյան ճոխ բառամթերքին մեջ, որոնք արենային հարազատորեն արտահայտել այն որբազան խռովքը, որ կալեկոծե այսօր մեր սիրտը, մեր հոգին, մեր բովանդակ էությունը։

Տարիներով փայփայված անհնարին երազը մեր է, որ հանկարծ կիրականանա ծագող արևու մը փայլատակումով, և կողողե հոգիները բոցավառ լույսով, լիաբուռն հրճվանքով և հոգեցունց խանդավառությամբ։

Արարատյան Մայր Աթոռեն, Միածնաէջ Ս. Սեղանեն մեզի հասնող մյուռոնաած այդ լույսը կուգա մխիթարություն և օրհնություն փռելու մեծ կորուստի մը վիշտովը կոտտանող մեր սրտերուն մեջ։

Մեր խոր սուգին մեջ ունենալ բան մը երակշիռ և անսովոր, որքան երանավետ ունչքան աննախընթաց և պատմական, փոփանքի մեծագույն կազդուրը եղավ մեր բովանդակ համայնքին համար։

Ձեր ժամանումեն մինչև այսօր, Վեհափա՛ռ Տեր, Դուք առիթը ունեցաք մոտեն տեսնելու և շոշափելու այն խանդակաթ սերն և նվիրումը, որ կբաբախե յուրաքանչյուր մարդ անհատի սրտին մեջ. բլլա ան մտավորական թե արվեստագետ, առևտրական թե արհեստավոր, պաշտոնյա թե գործավոր։

Սևեռելով Ձեր խորաթափանց հայացքը հոգվոց աչքերեն ներս, Դուք դյուրությամբ տեսաք, թե ինչպիսի անմար ու անշեջ փայլով մըն է որ կպլպլա Լուսավորչի կանթեղը մեն-մի հոգիի մեջ կանգնված խորանի վրա և ինչպիսի՜ երկյուղածությամբ մըն է, որ հոն կօրհներգվի պաշտամունքը մեր Ս. Եկեղեցիին։

Վեհափա՛ռ Տեր, այսօր ալ, այս սեղանին շուրջ, Ձեր դեմը ունիք ստամբուլահայ երգչախումբերեն կազմված հավաքականություն մը, որուն գլխավոր տեսլականներեն մին եղած է իր Եկեղեցիին մշտական պայծառությունը։

Ի տղա տիոց ներշնչված մեր փառապանծ պատմությամբ, գոտեպնդված մեր Մայրենի Եկեղեցվույն հոգեհույզ ու սրտագրավ քերթողությամբ, անոնք առհավական փարումով մը նվիրված են մեր հոգևոր երաժշտության մշակումին, ու ի գին տարիներու բարոյական թե նյութական զոհողությանց, ջանացած են եղբայրական երգակցությամբ խնկավետ դաշնակություն մը ստեղծել մեր տաճարներու կամարներուն ներքև և տալ հայ հավատացյալին՝ արվեստի սրբազան հուրով մկրտված մայրենի տոհմիկ երաժշտությունը։

Այս հավաքականության մեջ Դուք պիտի գտնեք պատանիներ ու երիտասարդներ, շափահասներ ու տարեցներ, ամենքն ալ հավատարմորեն նվիրված նույն գերազնիվ նպատակին իրագործման։

Այս հավաքականությունը, Վեհափա՛ռ Տեր, որքան դիտակից իր քաղաքացիական ու հայրենակցական պարտականությանց, հավատարիմ իր երկրին ու պետության, որուն բազմազան բարիքները տևականորեն վայելելու երջանկությունը ունի, կապված կմնա նաև, ի հոգևորս, իր հավատքին լուսաբեր եղող Ս. Էջմիածնին, որուն արժանավոր Գահակալին ներկայությունը վայելելու շնորհքը ունի և ամենախոր հարգանքով Անոր առջև կխոնարհի ու բերկրանքով կխայտա իր հոգին այսօր։

Սաղմոսներու և մեղեդիներու կարգին այս հավաքականության սիրտը հար փոթորկած է հիշատակությամբը պատարագիչին. «Եւ առաւել զԵպիսկոպոսապետն մեր և զպատուական Հայրապետն Ամենայն Հայոց...»։

Այդ հիշատակությունը ինքն ալ միշտ կրկնած ու անոր մեջ դրած է իր բովանդակ սիրտն ու հոգին, անկե ժայթքող հուզումի սարսուռը ըմպած է միշտ ումպ առ ումպ, խունկ ու կնդրուկ է ծխած անոր առջև իր հավատարմության ու նվիրման ուխտովը։

Տարիներ ու տարիներ հառած է իր հոգիին այրերը դեպի անմատույց բարձունքները

Ս. Էջմիածնի, անկե ստացած Սրբալույս Մյուռոնը իր հավատքին ու անով կենսավորած իր հոգեկան ու բարոյական գոյությունը։

Այսօր Ձերդ Ս. Օծության բարձր ներկայությամբ, ան կտիրանա մեծ ցանկության մը իրականացման, շնորհ մը, զոր վայելելու բախտը չէին ունեցած ոչ իր ծնողքը, ոչ ալ իր նախնիքն ու պապերը, և որուն համար ան իր բովանդակ կյանքի ընթացքին պիտի մնա միշտ շնորհապարտ ու երախտագետ։

Առաքելաշնորհ Ձեր այս այցելության հիշատակը ան իր հոգվո սրբարանին մեջ պիտի պահե միշտ անեղծ ու անվթար, և իբր նվիրական մասունք մը պիտի գուրգուրա անոր վրա, իր գոյության ընթացքին, անկե քաղելով միշտ ներշնչումը իր պաշտամունքին։

Օրհնեցե՛ք, Վեհափառ Տեր, օրհնեցե՛ք դպրաց և երգչախումբերու այս եկեղեցանվեր հավաքականությունը և թող Ձեր օրհնությունը իջնե մեն-մի հոգիի սրբարանեն ներս, հոն անգամ մը ևս կռելու և կոփելու լույս հավատքը մեր երանաշնորհ պապերուն, սերը հանդեպ մեր Մայրենի Եկեղեցիին և իր մեջ լուսավորչեն ցոլք մը բյուրեղացնող Ձեր օրհնությունը թող թռիչք տա հոգիներու, հավատքի լուսեղեն ճամբով սլանալու դեպի աստվածային բարձունքներ։

Վստահ եղեք, Վեհափա՛ռ Տեր, որ, օրհնված և ոգևորված Ձեր վեհաշուք ներկայությամբ, տպավորված Ձեր հայրական ոսկեղեն խոսքերու ներգործումով, հարյուրավոր այս կենսահոդ հագագները պիտի երգեն ընդմիշտ.

«Թագաւոր երկնաւոր, զնկեղեցի քո անշարժ պահեա...»։

Եվ պիտի շարունակեն հայցել. Տեր, «Բարեխօսութեամբ վերին քո զօրացդ, միշտ անշարժ պահեա զԱթոռ Հայկազնեայս»։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՎԻՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԱԹԵՆԱԳՈՐԱՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄՈՏ

Հուլիսի 14-ին, ուրբաթ կեսօրին, Վեհափառ Հայրապետը հյուրը եղավ Հունաց Տիեզերական Պատրիարքի, Ֆեների Պատրիարքարանում։

Ընդունելությանը մասնակցում էին գերաշնորհ Տ. Խաչ, Տ. Սերովբե, Տ. Շնորհք, Տ. Կոմիտաս սրբազանները, Տ. Պարգև, Տ. Սահակ, Տ. Գևորգ վարդապետները, քահանա հայրեր, պր. Կարապետ Աբրահամյանը, պր. Եդվարդ Պենկլյանը, երաժիշտներ պր. Հակոբ Ֆընտրգյանը, դոկտ. Տիգրան Մամիկոնյանը, պր. Ժիրայր Արսլանյանը, պր. Հովհաննես Չեքիճյանը, պր. Վարդգես Գաբրիելյանը և դոկտ. Տիգրան Թահթապրունյանը։

Ընդունելությունն անցավ ջերմ, եղբայրական մթնոլորտում, վերածվելով ճշմարտապես «սիրո սեղանի մը», ինչպես նման առիթներով արտահայտվել է հանգուցյալ Պատրիարքը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Հունաց Տիեզերական Պատրիարքը ճառեր փոխանակեցին։

Վեհափառ Հայրապետը, մտերիմ զրույցի ժամանակ, Ամենապատիվ Տ. Աթենագորաս Պատրիարքին հրավիրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Սիրալիր այս ընդունելությունից հետո, Վեհափառ Հայրապետը ողջագուրվելով, հրաժեշտ առավ Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Աթենագորաս Սրբազանից։

Պաշտոնական այս տեսակցության ընթացքին, Նորին Սրբություն Տ. Աթենագորաս Պատրիարքը Ամենայն Հայոց Հայրապետին նվիրեց թանգարանային արժեք ունեցող բյուզանդական ոճով մի սրբապատկեր։

Նույն օրը, առավոտյան ժամը 10—11-ին, Պատրիարքարանում կազմակերպվել էր պրես-կոնֆերանս հայ և օտար թղթակիցների համար, որտեղ Վեհափառ Հայրապետը պատասխանեց թղթակիցների բոլոր հարցերին։

Վեհափառ Հայրապետը առանձին ունկընդրություն շնորհեց Ստամբուլի «Ժամանակ» և «Մարմարա» հայ թերթերի խմբագիրներին։

Երեկոյան ժամը 17—21-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Ֆերիգյուղի Ս. Վարդանանց, Թուզգափուի Ս. Նիկողայոս, Բաքըրգյուղի Ս. Աստվածածին և Եշիլգյուղի Ս. Ստեփանոս եկեղեցիներին։ Ամենուրեք խուռներամ բազմությունը հուզմունքով և խանդավառությամբ դիմավորում է Վեհափառ Հայրապետին, ստանալու համար Նրա սուրբ օրհնություններն ու արժանանալու աջահամբույրի։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆԱԽԱԳԱՀՈՒՄ Է ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Ստամբուլի հայ սանուց 11 միություններ, ուրբաթ, հուլիսի 14-ի երեկոյան, «Պարկ հոթել»-ում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում են ընդունելություն, որին հրավիրվել էին նաև հոգևորական և աշխարհական բազմաթիվ պաշտոնական անձնավորություններ և այլ հյուրեր։

ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ

ԱՋԱՀԱՄԲՈՒՅՐԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՄԱՆՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱՌԱՋ. ՇԻՇԼԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆԻ
ԴԱՄԲԱՐԱՆԻ ԱՌԱՋ. ՍԿՅՈՒՏԱՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Սեղանը բացվում է Վեհափառ Հայրապետի Տերունական աղոթքով։ Պր. Արա Կյուրեղյանն ներկայացնում է սանուց միությունների ամփոփառոտ պատմականը և գործունեության պայմանները։

Գործադրության է դրվում ճոխ, գեղարվեստական մի ծրագիր, սանուց միությունների ընտրյալ անդամների և անդամուհիների մասնակցությամբ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ներկայացվում են սանուց միություններ և առանձին անդամները, որոնք մի առ մի, խորին պատկառանքով գալիս են խոնարհվելու Վեհափառ Հայրապետի առաջ և ստանում նրա հայրական օրհնությունները։

Ընդունելության ժամանակ, հայ մշակույթի և հայ ժողովրդի ստեղծած իմացական, հոգևոր արժեքներին նվիրված բովանդակալից ճառով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը՝ շեշտելով այդ արժեքների ստեղծման և պահպանման աշխատանքներում հայ երիտասարդության՝ ուսուցիչ, փաստաբան, բժիշկ, արվեստագետ, վիճակված պատմական սրբազան պարտականությունը։

Ստամբուլում գործում են հետևյալ 11 սանուց միությունները. «Կեդրոնական», «Մխիթարյան», «Նաայան», «Պեղճյան», «Արամյան», «Գարակյոզյան», «Սահակյան», «Սկյուտար», «Մաքրուհյան», «Թարգմանչաց» և «Մեսրոպյան»։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՐՀՆՈՒՄ Է ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈՂԸ

Հուլիսի 15-ին, շաբաթ, Գատրգյուղի Ս. Թագավոր եկեղեցում եպիսկոպոսական հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում գեղաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը, իր անձի ներքո այստեղ ևս ստեղծելով ջերմ սեր և հիացում, իր քաղցր ձայնի և սուրբ պատարագի մատուցմամբ պատճառած հոգևոր գերանության համար։

Ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը նախ այցելում է Սկյուտարի Ս. Խաչ եկեղեցին և օրհնում ժողովրդին, ապա, ժամը 11-ին, հանդիսավորապես մուտք գործում Գատրգյուղի Ս. Թագավոր եկեղեցին, խանդավառություն և հոգեկան ուրախություն ստեղծելով Իր ճանապարհի վրա։

Սուրբ պատարագին ներկա են նաև քույր եկեղեցիների բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք ունկնդրում են սուրբ պատարագի Կոմիտասյան երգեցողությունը, հուզմամբ և հափշտակությամբ։

Քարոզում է Վեհափառ Հայրապետը, ընդգծելով հայ դպրոցին վիճակված դերը, կոչ հանելով մեր ժողովրդի կրթական հաստատություններ կառուցելու ձգտումը, և ապա օրհնում արծաթյա ափսեի մեջ Իրեն մատուցված հողը, բերված նոր կառուցվող Արամյան վարժարանի հիմքից։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետը հյուրասիրվում է եկեղեցու խորհրդարանում և ապա օրհնում հավատացյալ ժողովրդին։

Գատրգյուղից հետո, Վեհափառ Հայրապետը այցելում է Շիշլիի հայոց գերեզմանատունը, «Հոգւոց» արտասանելու հոգելույս Գարեգին Պատրիարքի գերեզմանի վրա։

Նորին Ս. Օծությունը հանգուցյալ Պատրիարքի թարմ շիրմի վրա զետեղում է Ս. Էջմիածնից բերված մի գեղեցիկ, քանդակազարդ խաչքար։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը աղգային գերեզմանատանը այցելում է պատրիարքների, այդ թվում Օրմանյանի, Նարոյանի, մտավորականների, ծանոթ աղգային դեմքերի շիրիմները և ընդհանուր «Հոգւոց» արտասանում։

Նույն առավոտ, Ռումելի Հիսարի Ս. Սանդուխտ կույս եկեղեցում, պատարագում և քարոզում է Ամենայն Հայոց Հայրապետի դավազանակիր հոգեշնորհ Տ. Պարգև վարդապետ Գեորգյանը։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱՐԱԿՅՈՂՅԱՆ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

Հուլիսի 15-ին, շաբաթ օրը, ժամը 15-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Գարակյոզյան որբանոցը և ընդունվում խանդավառության անդամների կողմից ու առաջնորդվում Սանուց միության սրահը, ուր Նրա դիմաց պատվին կազմակերպվել էր ընդունելություն։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Որբանոցի տեսչուհի տիկին Սիրանուշ Ֆերուհյանը հետևյալ սրտաբուխ խոսքերով ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը, խնդրելով Նրա հայրական օրհնությունը հաստատության ու սանուհիների վրա.

«Վեհափա՛ռ Տեր.

Գրեթե անհավատալի իրականություն մըն է Ձերդ Վեհափառության շնորհաբեր այցը մեր համեստ երդիկին ներքև։

Ցնծության մեջ է այսօր Գարակյոզյան տունը։ Անոր փոքրիկ բնակիչներուն անմեղունակ հոգիներն անգամ երջանկությամբ կխայտան։

Արև բերիք, Վեհափա՛ռ, մեր կարոտ սրտերուն, զարթոնք՝ մեր հոգիներուն։

Ձեր սրբազան անձովը մերը եղան օրհնությունները մեր սրտերուն խորան Ս. Էջմիածնին։

Խոնարհաբար կուգանք բարի գալուստ մաղթել, արևշատություն մաղթել Ձերդ Վեհափառության, անզուգական Հայրապետ։ Ազգովին կհավատանք, որ Ձերդ Սրբության առաջնորդությամբ պիտի պայծառանա մեր հնամենի, աննման Ս. Եկեղեցին և կատարյալ համերաշխության մեջ մեր սրտերը պիտի լեցվին սիրով ու խաղաղությամբ։

Գործադրվում է գեղարվեստական հայտագիր, որից հետո խոսք առնելով, Իր օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը։

Նույն օրը Վեհափառ Հայրապետը ընդունում է այցելությունը Լիբանանից ծանոթ ազգային երկու դեմքերի՝ մեծ Հրաչ Սեդրակյանի և պր. Օննիկ Ճամպուլյանի, որոնք եկել էին ներկա գտնվելու հանգուցյալ Պատրիարքի հուղարկավորությանը՝ հանուն Լիբանանի հայության։

Նույն օրը Վեհափառ Հայրապետը ընդունում է նաև Հունաստանի հայոց օրինապահ թեմի թեմական խորհրդի ներկայացուցչին։

ՀՐԱԺԵՇՏԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ

Հուլիսի 16-ին, կիրակի, Գումգապուի պոռանիստ Մայր Եկեղեցում, հրաժեշտի սուրբ պատարագ է մատուցում և քարոզում Վեհափառ Հայրապետը։

Առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, Պատրիարքարանի դահլիճից, զգեստավորված, ամպհովանու տակ, «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի։

Վաղ առավոտվանից, արտակարգ բազմությունը լցրել է տաճարը, բակը, շրջակայքը ամբողջ։

Ս. Սեղանին սպասարկում են սրբազան, հոգեշնորհ և քահանա հայրեր։

Սուրբ պատարագի երգեցողությունը կատարում է Ստամբուլի բոլոր եկեղեցիների երգչախմբերից կազմված միացյալ խումբը, Հովհաննես Չեքիճյանի ղեկավարությամբ։

Սուրբ պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, Վեհափառ Հայրապետը խոսում է Իր ներշնչված և պերճիմաստ քարոզներից մեկը, մոտալուտ հրաժեշտի խոհերի և զգացմունքների ներքո։

Վեհափառ Հայրապետը օրհնությամբ տալիս է Իր հրաժեշտի ողջույնը Ստամբուլի հայ համայնքին, խաղաղության, միասնության կոչ անում բոլոր հավատացյալներին և հորդորում խմբվել Եկեղեցու հովանու ներքո, Իր գոհունակությունը հայտնում անընդհատ, խանդավառ ընդունելության համար և Իր շնորհակալությունները երկու պետությունների իշխանությանց՝ Ամենայն Հայոց Հայրապետի հանդեպ ցուցաբերված բարյացակամության և ընծայված դյուրությունների համար։

Վեհափառ Հայրապետը վերջում խաղաղություն է ցանկանում ողջ աշխարհին։

Հավարտ սուրբ պատարագի, հաղորդվում են հազարավոր հավատացյալներ, որոնք ներկա էին եղել հայրապետական հանդիսավոր սուրբ պատարագին։

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏՎԻՆ

Ծրագի նման արագ, բայց բովանդակալից և հուզումնառատ, անցնում էին Ամենայն Հայոց Հայրապետի շնորհաբեր այցելության օրերը Ստամբուլի Իր սիրելի ժողովրդի ծոցում, Իր հարազատ զավակների այցելությամբ, օրհնությամբ։

Հուլիսի 16-ի սուրբ պատարագից հետո, երեկոյան, հայ համայնքը պատվում է Իր սիրելի Հայրապետին, հրաժեշտի ընդունելություն կազմակերպելով «Պարկ հոթել»-ում։

Ողջերթի սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Ընդունելությանը ներկա են դերաշնորհ Տ. Խաչ, Տ. Սերովբե, Տ. Շնորհք, Տ. Կոմիտաս սրբազաններու, Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը, Գալֆայան որբանոցի մայրեր, Պորտուգալիայի հյուպատոսը, հայ համայնքի, հարանվանությունների և մամուլի ներկայացուցիչներ։

Ընդունելության գեղարվեստական բաժնին իրենց սրտագին մասնակցությունն են բերում Ալիս Քիթապճյանը, Պետրոս Գույումճյանը, Նուրհան Ռուշանը, Վարուժան Արսլանյանը, Սիլվա Չիլպողոսյանը և Պ. Սրապյանը։

Հանուն Կարգադիր հանձնաժողովի, շնորհակալության, երախտագիտության և ողջերթի ջերմ, սրտառուչ ուղերձ են կարդում Կարապետ Տեր Ղազարյանը, Ս. Խաչ դպրեվանքի անունից՝ Կարապետ Զամբաքը, ներկաների անունից՝ Թոկո Աճեմյանը։

Ընդունելության ընթացքում, պատրիարքական փոխանորդ արժանապատիվ Տ. Արամ ավագ քահանա Պասմաճյանը աջահամբույրով Վեհափառ Հայրապետին է հանձնում Ստամբուլի հայության նվերը՝ քանդակազարդ ոսկյա կազմով մի մատյան, գործ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԴԱԼՓԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՑՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅՈՑ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԴԱՍՈՎ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԳԱԼՖԱՅԱՆ ՈՐԲԱՆՈՑԻ ՔՈՒՅՐԵՐԻ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԻ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՍՏԱՄԲՈՒԼԻ «ԿՈՄԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՄԲՈՎ

Ստամբուլի հայ ոսկերիչների, պատրաստված ոսկերիչ Տիրան Շեկի գլխավորությամբ, վրան հանգուցյալ Պատրիարքի նկարով, հետևյալ մակագրությամբ.

«Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԷՆ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ, ԹՈՒՐՔԻՈՅ ԻՐ ՀԱՐԱԶԱՏՆԵՐԷՆ, Ի ՅԻՇԱՏԱԿՆ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԻՍՏԱՄԲՈՒԼ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ, 1961»:

Ընդունելով Իր զավակների սրտաբուխ նվերը, Վեհափառ Հայրապետը ևս նվիրում է արծաթե քանդակազարդ մի մեծ, գեղեցիկ ափսե, կենտրոնում Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նկարը, գործ Երևանի հայ ոսկերիչների։

Այս ուրախ և հավետ անմոռանալի պահին, Վեհափառ Հայրապետը, որպես հուշանվեր, ականակուռ ձեռաց խաչեր է տալիս հոգևորականներին, էջմիածնում պատրաստված, հայկական ոճով։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը արտասանում է հրաժեշտի Իր հուզաթաթավ խոսքը.

«Հրաժեշտի այս պահուն, անգամ մը ևս կրորբոքին հուզումի զգացումները, այն հուզումի զգացումները, որոնցմով Մեր սիրտը լեցուն եկանք այստեղ երկու շաբաթ առաջ։ Եկանք ձեզ մոտ, ու Մեր հարգանքի տուրքը և Մեր վերջին ողջույնը բերինք հանգուցյալի հիշատակին, Մեր խղճի պարտքը կատարեցինք ձեզի հետ մեկտեղ, և ոչ արհամարհելի չափով մը, անշուշտ որ մխիթարվեցանք։ Մենք կրցանք այս մխիթարությունը ապրիլ, ամեն բանե առաջ, շնորհիվ մեր պետական իշխանություններու օժանդակության և Մեզ մատուցված օրինական հնարավորություններու։ Հատկապես կուզենք շեշտել Մեր գոհունակությունը այսօր անգամ մը ևս՝ դեպի ձեր պետական իշխանությունները, դեպի Թուրք կառավարությունը, որ անմիջապես ընդառաջեց Մեր դիմումին և Մենք եկանք այստեղ։ Եվ տակավին ավելին, այստեղ գալե վերջ, պետական իշխանությունները այնքան ուշադիր եղան Մեր անձին հանդեպ և հարգալիր, և մանավանդ այնքան սրացավ դեպի Հայ Եկեղեցին և մասնավորապես հանգուցյալի հիշատակը։

Մենք շատ ուրախ ենք, ինչպես լսեցինք քիչ առաջ, թե՛ պր. Ղազարյանի զեկուցումեն և թե՛ ուրիշ առիթներով ձեր արտահայտություններու ընթացքին, որ դուք, իբրև Հայ Եկեղեցվո զավակներ, կվայելեք բարյացակամ վերաբերմունքը պետական իշխանության և գիտցած եք վստահությունը շանիլ այս իշխանության։ Մենք սրտանց կփափագինք, որպես Հայոց Հայրապետը և իբրև Հայ Եկեղեցվո Պետը, որ այս հավատարմության զգացումներու վրա անխախտ մնամ ամենայն անկեղծությամբ։

Վստահ ենք, որ, ինչպես մինչև հիմա, և Մենք շոշափելի կերպով այս դրական արդյունքները տեսանք, վստահ ենք, որ այսուհետև ձեր պետական իշխանություններն ալ նույն բարյացակամությամբ պիտի վերաբերին դեպի ձեր կրոնական, եկեղեցական կյանքը և այդ կյանքի հետ կապված զանազան լուծելի հարցերը։

Կուզենք քանի մը խոսք ևս ավելցնել իբրև խորհուրդ և իբրև հորդոր, ուղղյալ ձեզի, որ այստեղ եք հավաքված և որ կներկայացնեք մեծ չափով մը, կկարծենք, Ստամբուլի հայությունը։ Հետևաբար Մեր հորդորը ուղղված պիտի ըլլա ձեզի և ձեր միջոցով ամբողջ Ստամբուլի հայ հավատացյալներուն։

Մեր առաջին իղձը և փափագն է, որ դուք բոլորդ, այսինքն Ստամբուլի հայ հավատացյալները, համախմբված ապրիք Ս. Եկեղեցվո հովանիին ներքև իբրև բարի քրիստոնյաներ և շարունակեք մշակել ձեր հոգիներեն ներս քրիստոնեական առաքինությունները, կարգապահ ոգի մը, շինարար ոգի մը և ոգի մը նաև հավատարիմ քաղաքացիության դեպի այս երկիրը։ Կփափագինք նաև, որ Մեր հավատացյալ զավակները, Ս. Եկեղեցվո կամարներուն տակ, ապրին սիրով միաբան։ Սեր և միություն հին պատգամ մը է, հեռավոր ժամանակներե կուգա, բայց պետք է ցավով հաստատենք, թե հանախ Մեր զավակներու կյանքեն ներս անհրաժեշտ չափով չէ պահպանված այդ սերը և միությունը։ Ընդհանրապես լավատես ըլլալով, կգտնենք սպասելի ձեր համայնքին համար, որ այս սերը և միությունը անհրաժեշտորեն պահպանվին, ամրապնդվին։ Եվ այս պիտի ըլլա անշուշտ հոգուտ մեր Եկեղեցիին, ձեր Եկեղեցիին, ձեր համայնքին կյանքին, և նույնիսկ կրնանք ըսել, անհատապես, հոգուտ ամեն մեկիդ։ Որովհետև ուղիղ և առողջ մտածելով՝ սիրով միաբան ընկերային կյանքի մը մեջ, անշուշտ որ ավելի հանելի է ապրիլ։ Ավելի ուրախություններու աղբյուր կհանդիսանա այսպիսի կյանք մը, այդ ընկերության ամեն մեկ անդամին համար։

Մենք կուզենք հավատալ, թե մեր Եկեղեցվո բոլոր զավակները հոգվով, սրտով, զգացումներով առողջ մարդիկ են, իմաստուն են, հեռատես են և բարի։

Մենք մեկ իղձ ունինք իբրև Մայր Աթոռ՝ պահել-պահպանել Հայաստանյայց Եկեղեցվո սուրբ և դարավոր կամարներուն ներքև, ճշմարիտ սիրո միություն մը, ավետարանական իմաստով, անխորտակելի և անսասան։ Այս է, Մեր կարծիքով, մեր Եկեղեցվո պատմութենեն եկող թելադրանքը և այս է մեր հոգևոր կյանքի գոյության իմաստը իսկ և գեղեցկությունը բարոյական։

Մենք խորապես հրճվեցանք՝ մոտեն ճանչնալով ձեր եկեղեցական կյանքը: Բազմաթիվ եկեղեցիներ այցելեցինք և ամեն տեղ տեսանք բարեկարգ կացություն մը, շեն և պայծառ եկեղեցիներ հավատավոր ժողովուրդով, եկեղեցական օրինական մարմիններով, ժողովուրդի կողմե ընտրված, բաղական խորհուրդներ և հարակից այլ մարմիններ: Հատկապես գովելի կգտնենք ձեր դպրաց դասերը և երգեցիկ խումբերը, որոնց երաժշտությունը վայելեցինք ոչ միայն եկեղեցիներու մեջ, այլ զանազան առիթներով ևս:

Այս բոլորը խորապես գնահատելի են և չնորհավորելի և պատիվ կբերեն Ստամբուլի մեր հավատացյալներուն: Ուրախությամբ այցելեցինք նաև քանի մը կրթական հաստատություններ, ինչպես Գալֆայան հաստատությունը, և տեսանք բարի աշխատանքը աստվածասեր քույրերուն, Ս. Փրկիչ հիվանդանոցը, Գարակյոզյան որբանոցը, որոնք նույնպես պատիվ կբերեն այս համայնքին և որոնք գուրգուրանքի առարկա են ոչ միայն ձեր, այլ ամբողջ հայության»:

Ընդհանուր ծափերի և խանդավառ ցույցերի մեջ, Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է առնում Իր սիրելի ժողովուրդից, օրհնելով բոլորին և բարեմաղթելով. «Մնացե՛ք բարով, մնացե՛ք խաղաղությամբ»:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՆԳԱՐԱՅՈՒՄ ԱՅՑԵԼՈՒՄ Է ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՋՈՐԱՎԱՐ ՋԵՄԱԼ ԳՅՈՒՐՍԵԼԻՆ

Հուլիսի 17-ին, երկուշաբթի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Անգարայում այցելում է Թուրքական Հանրապետության Նախագահ Նորին Վսեմություն զորավար Ջեմալ Գյուրսելին։

Պաշտոնական այս այցելության ժամանակ, Ամենայն Հայոց Հայրապետին ուղեկցում են Տ. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյանը, գավազանակիր Տ. Պարգև վարդապետ Գևորգյանը և պատրիարքական փոխանորդ Տ. Արամ ավագ քահանա Պասմաճյանը։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Իր հետևորդներով, ժամը 9.15-ին ժամանում է Անգարայի էսենբողազի օդանավակայանը։

Հանուն Կառավարության Նախագահի, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում և բարի գալուստ է մաղթում արտաքին գործավարության պրոտոկոլի տեսուչ Սուլհի Տիշլիօղլուն։ Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Սահմանադիր ժողովի անդամ օրիորդ Հերմինե Գալուստյանը, սովետական դեսպանատան երեք ներկայացուցիչներ և հայ գաղութը։

Հանրապետության Նախագահը երկու պաշտոնական ինքնաշարժ է տրամադրում Վեհափառ Հայրապետի և Նրա շքախմբի համար։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը օդանավակայանի պատվո սրահում կարճ հանգստանալուց հետո, ժամը 10-ին այցելում է Անքթ Կապիր, Թուրք Հանրապետության առաջին Նախագահ Աթաթուրքի դամբարանը։ Երկու զինվորներ կրում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից հուշարձանի վրա զետեղվելիք ծաղկեպսակը, «ՎԱՅՊԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» *մակագրությամբ։ Վեհափառ Հայրապետը ստորագրում է այցելուների պատվո մատյանում։*

Ժամը 10.30-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ջանգայայի ապարանքում այցելում է Պետության և Կառավարության Նախագահ Նորին Վսեմություն զորավար Ջեմալ Գյուրսելին։

Ամենայն Հայոց Հայրապետի և Վսեմաշուք Նախագահի միջև տեղի է ունենում ջերմ և հարգալիր զրույց։

Ընդունելությանը ներկա են Կոմիտաս սրբազանը, Պարգև վարդապետը, պատրիարքական փոխանորդ Տ. Արամ ավագ քահանան, Սահմանադիր ժողովի անդամ օրիորդ Հերմինե Գալուստյանը, պր. Կարապետ Արրահամյանը և պրոտոկոլի տեսուչ Ս. Տիշլիօղլուն։ Թարգմանչի պաշտոնը կատարում է օրիորդ Հերմինե Գալուստյանը։

ԱՆԳԱՐԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎԵՐ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 17-ի կեսօրին, Անգարայի փոքրաթիվ հայ գաղութը, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, Անգարայի «Բուլվար Պալաս» հյուրանոցում, կազմակերպում է ջերմ ընդունելություն։

Սեղանի վրա Վեհափառ Հայրապետը հետաքրքրվում է Անգարայի հայ գաղութի կյանքով։ Այս երջանկաբեր առիթով, Սահմանադիր ժողովի անդամ օրիորդ Հերմինե Գալուստյանը կարդում է զգայուն սրտով և անկեղծ զգացմունքներով բաբախուն հետևյալ գեղեցիկ ուղերձը, թարգմանը հանդիսանալով Անգարայի հայության ջերմ զգացմունքների.

«Վեհափա՛ռ Տեր.

Թուրք Հանրապետության բաբախուն սրտին՝ Անգարայի մեջ, մեր Պետության Վսեմաշուք Նախագահին՝ զորավար Ջեմալ Գյուրսելի հետ Ձերդ Վեհափառության տեսակցությունը, մայրաքաղաքիս սակավաթիվ հայ բնակչության պարգևած է Ձեր օրհնաբեր ներկայության արժանանալու բացառիկ ու թանկագին պատեհություն մը, որ հավետ պիտի հիշվի իբր պատմական բարեբաստիկ եղելություն մը։

Տասնյակ մը տարիներ առաջ, քանի մը հարյուր անդամներե բաղկացյալ այս փոքրիկ հավաքականությունը մեծ հույսերով և ուրախությամբ փութացեր էր դիմավորելու Թուրքիո հայոց նորընտիր Պատրիարքը, երջանկահիշատակ Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանը, իր Անգարա այցելության առթիվ։ Իսկ այսօր, Թուրքիո բովանդակ հայության հետ ան կգա թեև իր սրբակյաց, խորահմուտ և անձնվեր կրոնական պետին կորուստը, բայց Ձերդ Վեհափառության սփոփարար այցելության շնորհիվ իր տրտմությունը կմեղմանա հոգեկան վերազարթնումի մը գիտակցությամբ։ Յուրաքանչյուր անհատ կզգա, թե առանձին չէ, այլ բարոյապես մաս կկազմե ժամանակին ու միջոցին մեջ տարածուն մեծ ամբողջի մը, որուն խորհրդանիշը կհանդիսանա Ձերդ Ս. Օծությունը, հայուն միակ լուսակերդոնին՝ Ս. Էջմիածնին Վեհափառ Գահակալը։

Մենք, Թուրքիո հայերս, երազ մը ունինք։ Երիտասարդ Թուրք Հանրապետության գաղափարներով սնած, յուրացուցած ենք հանճարեղ Աթաթուրքի համամարդկային եղբայրության իդեալը, որ կխտանա «Հայրենիքի մեջ խաղաղություն, աշխարհի մեջ խաղաղություն» նշանաբանին մեջ։ Ու կխորհինք, թե Հայ Ազգը կրնա այս ուղղությամբ համայն աշխարհի օրինակ հանդիսանալ, քաղաքական ամեն տեսակ պայմաններու տակ ապրելով հանդերձ, այդ պատահականություններեն վեր, կրոնական, բարոյական ու մշակութային հիմերու վրա ստեղծելով կատարյալ միություն մը։ Գիտենք, թե «Հայոց այս պայծառ ապագան» Ձերդ Վեհափառության ալ մեծ տեսլականը կկազմե. մեր ամբողջ էությամբ հաջողություն կմաղթենք Ձեր բարձր առաքելության ու կհավատանք, թե Մայր Աթոռի աննկուն ջանքերուն շնորհիվ օր մը ամեն հայու համար պիտի բացվառի Ս. Լուսավորչի անմար կանթեղը։

Վեհափա՛ռ Տեր, Ձեր երանավետ ներկայությունը հոգեկան այնքան մեծ հրճվանք ու բավարարություն պատճառած է Անգարայի հայության, որ մեր սրտերը կզեղուն անսահման երախտագիտությամբ և սիրո ու նվիրումի ամենաջերմ զգացումներով է, որ երկար, քաջառողջ ու բազմաբեղուն կյանք մը կբարեմաղթենք Ձերդ Ս. Օծության ու խոնարհաբար կհամբուրենք Ձեր Ս. Աջը»։

Վեհափառ Հայրապետը զգացված տոնով պատասխանում է օրիորդ Գալուստյանի խոսքերին, հայտնելով Իր հայրապետական ուրախությունն ու գոհունակությունը, հորդորելով բոլոր ներկաներին, որ Թուրքիայում և կառավարության ղեկավարների մոտ, «իբր շինարար, աշխատող և հավատարիմ ճանչցված տարր, ա՛լ ավելի գնահատելի և օգտակար դառնամ Ձեր երկրին։ Հոգեկան այս մխիթարությամբ է, որ պիտի բաժնվիմ այս մաղաթեն։ Ձեր մաղաթացիական պարտականությունեներու կողմին, մի՛ մոռնամ նաև ձեր եկեղեցին»։

Ժամը 13-ին, Անգարայի սովետական դեսպանատանը, կազմակերպվում է ընդունելություն Վեհափառ Հայրապետի պատվին։

Այնուհետև, փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը ընդունում է Անգարայի և այլ շրջաններից՝ Կեսարիայից, Դիարբեքիրից, Ամասիայից և Իսկենդերունից եկած հավատացյալներին, որոնք համբուրում են Նրա Ս. Աջը։

Երեկոյան ժամը 18.45-ին, Վեհափառ Հայրապետը ինքնաթիռով վերադառնում է Ստամբուլ։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻՆ

Հուլիսի 18-ին, երեքշաբթի, Անգարայից Ստամբուլ վերադառնալուց հետո, Վեհափառ Հայրապետը այցելում է Դոլմապահչեի պալատը, գործ հայտնի ճարտարապետ Պալյանի, ԺԹ դարի կեսերին։

Վեհափառ Հայրապետը պաշտոնապես առաջնորդվում է պալատի բոլոր մասերը, ընդունելության սրահները, թագադրության դահլիճները, սուլթանական աշխատասենյակները, ննջարանները։ Ամենուրեք Վեհափառ Հայրապետին տրվում են բացատրություններ։ Վեհափառ Հայրապետը ծանոթանում է նկարչական բազմաթիվ գլուխգործոցների, այդ թվում նաև Հովհաննես Այվազովսկու մի քանի տասնյակ նկարների, որոնք զարդարում են պալատի զանազան դահլիճները։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը այցելում է Գարիեի մզկիթը, հին հունական մի եկեղեցի, ուր վերջերս հայտնաբերվել են հրաշալի խճանկարներ։

Ապա Նորին Վեհափառությունը լինում է Սուլեյմանիե մզկիթում, որը համարվում է Ստամբուլի ամենաշքեղ մզկիթը, ճարտարապետական մի կոթող, գլուխ-գործոցը հայազգի մեծանուն ճարտարապետ Սինանի։

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՐՁՐ ՊԱՏՎԻՆ

Հուլիսի 18-ին, երեկոյան ժամը 17-ին, «Պարկ հոթել»-ում, Ստամբուլի հայ մտավորականությունը Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում է ընդունելություն, որին ներկա են լինում քաղաքի բոլոր հայկական վարժարանների տեսուչները, ուսուցիչները, ինչպես նաև գրագետներ, արվեստագետներ, երաժիշտներ, երգիչներ և նկարիչներ։

Վեհափառ Հայրապետին ողջունում է նախ Ուսուցչաց միության երկրորդ ատենապետ դոկտ. Ծանտին Աքսան, «որ ներկայացուց հայ մտավորականության կապը հանդեպ Ս. Էջմիածնի և անոր Գահակալին»։

Այնուհետև, հանուն Ստամբուլի հայ ուսուցչության, հանդես է գալիս համալսարանի դասախոս և ավագ ուսուցիչ Հրանտ Տեր Անդրեասյանը, որը խոսում է մտավորականների մասին և ողջունում «Վեհափառին մեջ խտացումը մեր սրտին և հոգեկան կապին հանդեպ Ս. Էջմիածնին, որ խարիսխն է հայ հավատքին»։

Այնուհետև գործադրվում է բովանդակալից գեղարվեստական մի հայտագիր։

Վ. Կոմիկյանը խոսում է Ստամբուլի հայ գրական շարժման մասին։ Ուսուցչուհի տիկին Մեսրոպյանը, հանուն Ստամբուլի մտավորական ընտրանու, Վեհափառ Հայրապետին է նվիրում արծաթյա մի գեղեցիկ ծաղկաման։

Օրիորդ Արուսյակ Ռուշանը արտասանում է «Պարտեզ» մանկական ամսագրի խմբագիր Ատրինե Տատրյանի Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ձոնը.

Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ:
Արազածի մշտավառ
Վեհ գագաթեն ալեփառ,
Գարո՛ւն բերիք հուսավառ:
Եվ լուսաշող Էջմիածնեն,
Մեր հայ փառքին խորհուրդեն,
Օրհնությունով խնկաբույր,
Անդորր բերիք կենսաբույր:

Բարի՛ եկաք, Վեհափա՛ռ:
Աղբյուրներեն մեր վարար,
Այգիներեն հովասուն,
Նոր ավիշով միշտ զեղուն,
Ժպիտ բերիք հուսատու,
Խաղաղությամբ լուսատու:

Թողե՛ք մենք ալ մեր սրտեն,
Դեռ պատանի մեր խանդեն,
Բո՛ւռ-բո՛ւռ ցանենք Ձեր ճամբուն,
Ձեր օրհնաբեր ձեռքերուն
Համբույրովը ջերմացած,
Ձեր աղոթքով սրբացած,
Մե՛ր կորովը, մե՛ր սերը,
Մե՛ր հավատքը, մե՛ր հույսը:

Եվ վստահ ենք, կխայտաք,
Երբ Ձեզ ըսենք մշտածագ,
Արև բուրող մեր լեզվով,
Հազարդարյան օրհներգով,
Մեր ոսկեղնիկ բարբառով,
Որով մեծցանք ժպտելով
Մեր պապերուն հետքերով՝

Երթա՛ք բարով, Վեհափա՛ռ...
Ջահերն ջահվդ մնան վառ:
Ինչ որ մեզի թողուցիք,
Մեզմե ալ Դուք կտանիք
Խոստում, գորով ու համբույր,
Հոգիներեն մեր մաքուր:

Երթա՛ք բարով, Վեհափա՛ռ...:

Ընդհանուր ծափերի մեջ Վեհափառ Հայրապետին մատուցվում են նաև ծաղկեփնջեր գրագիտուհի տիկին Հայկանուշ Մառքի, դերասան Եդվարդ Երեցյանի, երաժշտագետ պրոֆ. Աբիսողոմ Գավաֆյանի, նկարիչ Վարդ Հազբրյանի կողմից, հանուն Ստամբուլի իրենց մտավորական շրջանակների։

Այնուհետև, խանդավառ և ջերմ մթնոլորտում, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և նախ Իր շնորհակալությունն է հայտնում այս հանդիպման և «այն քաղցր խոսքերուն համար, որոնք ուղղվեցան Մեզի հայ մտավորականության ներկայացուցիչներուն կողմե»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսում է Պոլսի հայ գրականության և արվեստի բնագավառներում անցյալի մեր մեծանուն մտավորականների մեզ ժառանգ թողած արժանավոր գործերի մասին, որոնք «մեր գրականության փառքը կկազմեն, մյուս մեծերու կողքին», և հորդորում է Ստամբուլի գրական նոր սերնդին՝ շարունակել այդ գրական ավանդությունը, առաջ ընթանալ «այն լուսավոր ճանապարհեն և հասնիլ այն բարձունքներուն, ուր հասան ձեր նախնիք»։

Ապա Վեհափառ Հայրապետը ավելացնում է.

«Մենք կուզեինք քանի մը խոսք ևս ավելցրնել, շեշտել այն շինարար դերը, այն դաստիարակիչ դերը, որ հայ մտավորականը ընդհանրապես՝ ուսուցիչ, գրագետ, լրագրող, բանաստեղծ, արվեստագետ, գիտնական, կրնա ունենալ և պետք է ունենա այն ժողովուրդի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱԹՈՌԱՆԻՍՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ «ԳՈՂԹԱՆ» ԵՐԳԱՄԲՈՎ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՈՒՐԲ ՓՐԿԻՉ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ, ԱԲՐԱՀԱՅՐ ՀԱՊՈՂՅԱՆԻ, Տ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՎ ՊՐ. ՍԱՐԳԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ

ծոցին մեջ, ուր ծնած է և որուն մեջ կապրի: Կխորհինք, թե այն ատեն միայն մտավորականը արժանի կդառնա իր կոչումին և կրնա իր կյանքին իմաստ մը տալ: Արդեն մտավորականի գաղափարը կարելի չէ ըմբռնել զուտ անհատական իմաստով: Եթե մարդիկ առանձին ապրեին, ոչ ոք կրնար մտավորական ըլլալ:

Մտավորական ըլլալ կնշանակէ ֆոնկսիոն մը ունենալ կյանքի մեջ և ազդել իր շրջապատին վրա: Կխորհինք, թե այս գիտակցությունը երբեք չէ պակսած ձեզմե: Պետք է ներշնչվիլ ժողովուրդեն և տալ ժողովուրդին: Անհեռատես և կեղրոնախույս ձգտումները երբեք օգուտ չեն կրնար բերել ոչ եկեղեցիին, ոչ կրթական գործին, ոչ ալ ժողովուրդին»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՊԱՏՎՈՒՄ Է ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԱՅՐԵՐԻՆ

Հուլիսի 18-ին, երեկոյան ժամը 20-ին, Բանկալթիի Մխիթարյան վարժարանում, Վիեննական միաբանության մեծավոր Հ. Սարգիս վարդապետ Բարոյանը և միաբանությունը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպում են ընդունելություն, որին ներկա են լինում նաև Ստամբուլում հայ կաթոլիկ հասարակության վիճակավոր Քիրեճյան գերապայծառը, ընկերակցությամբ չորս հայ կաթոլիկ վարդապետների և Վենետիկի Մխիթարյան հայրերից երկու հոգու։

Նորին Ս. Օծության պատվին տրված եղբայրական այս ընդունելության ներկա են լինում նաև Մխիթարյան սանուց միության վարչության անդամները և հայ մամուլի ներկայացուցիչներ։

Սիրալիր խոսակցություն է տեղի ունենում Վեհափառ Հայրապետի, Նրա շքախմբի, Քիրեճյան գերապայծառի և միաբանության միջև, ջերմ մթնոլորտում։

Ապա Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է վարժարանի սեղանատունը՝ սեղանը օրհնելու։ Հ. Սարգիս Բարոյանը ողջունում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի այցելությունը Մխիթարյան վարժարանից ներս, «անոր համար, որ պատիվ ըրած էր իրենց և չէր մերժած իրենց հրավերը»։— «Ձեր արժանավոր և բարի անձը կաղոթենք, որ երկար կյանք ապրի և Ձեր օրհնաբեր հովանին միշտ տարածվի հայ ժողովուրդի բոլոր զավակներուն վրա»,— եզրակացնում է վարդապետը։

Ընդունելության ընթացքում Վեհափառ Հայրապետը, Իր պատասխան ողջույնի խոսքում, հայրապետական Իր գոհունակությունը և ուրախությունն էր հայտնում, որ «Ստամբուլի մեջ պատեհությունը կունենար Մխիթարյանց ճարկը այցելելու, Իր սիրո ողջույնը և օրհնությունը բերելու մեր բազմադարյան սուրբ տաճարներեն, մեր Հայրենի երկրեն, մանավանդ ողջույն և օրհնություն Օշականի Մեծ Սուրբի գերեզմանեն»։

Ճաշից հետո Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հրաժեշտ է առնում Մխիթարյան հայրերից, մի անգամ ևս օրհնելով կրթական այս հաստատությունը և նրա մշակներին։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ԱՌՆՈՒՄ ՍՏԱՄԲՈՒԼԻՑ

Հուլիսի 19-ին, շորեքշաբթի, Վեհափառ Հայրապետը Իր ամբողջ օրը անց է կացնում հյուրանոցում, զբաղված մի շարք տեսակցություններով և մեկնման նախապատրաստական աշխատանքներով։

Նորին Ս. Օծությունը հյուրանոցում ընդունում է այցելությունը Ստամբուլի հայ ավետարանական համայնքի պետ պատվելի Վահան Խարբությանի և Իր օրհնությունն է տալիս հայ ավետարանական համայնքին։

ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ «ՊԱՐԿ ՀՈԹԵԼ»-ՈՒՄ

Հուլիսի 19ին, երեկոյան ժամը 20-ին, «Պարկ հոթել»-ում կազմակերպվում է ողջերթի ընդունելություն Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, հայ հոգևորականության և թաղական խորհուրդների անունից։

Հրաժեշտի սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։ Ս. Խաչ դպրեվանքի տեսուչ հոգեշնորհ Տ. Շահան վարդապետ Սվաճյանը կարդում է գեղեցիկ մի ուղերձ Ստամբուլի հայ հոգևորականության անունից, հայտնելով բոլորի որդիական ջերմ զգացմունքներն ու նվիրումը, երախտագիտությունն ու շնորհակալությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նրա արժանավոր Գահակալին։

Դոկտ. Գևորգյանը իր ողջերթի խոսքում թարգմանն է հանդիսանում Ստամբուլի բոլոր թաղական խորհուրդների անդամների երախտագետ զգացմունքների։

«Եկաք,— ասում է դոկտ. Գևորգյանը,— Լուսավորչի կանթեղի լույսը սփռելու Ձեր հոտին և մոտեն տեսաք, թե Ձեր ժողովուրդը ինչպես ջերմությամբ կապված է իր հավատքին և հավատքի կեդրոն Ս. Էջմիածնին»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետին ներկայացվում է մարմարե մի քար՝ օրհնելուց և ստորագրելուց հետո զետեղելու համար Ղալաթիայի Նորաշեն եկեղեցու հիմքում, որպես հիմնաքար։

Բաժանման ժամն է արդ։

Ոտքի վրա է Վեհափառ Հայրապետը։ Ոտքի են կանգնում բոլոր ներկաները հուզված։

Ցնծագին ծափողջույնների տակ, խանդավառ մթնոլորտի մեջ, խոսք է առնում Վեհափառ Հայրապետը՝ տալու Իր վերջին հայրապետական պատգամն ու հայրական օրհնությունը։

Իր պատգամի սկզբում Վեհափառ Հայրապետը անդրադառնում է քիչ առաջ օրհնած մարմարե քարին, որը հիմնաքարն է հանդիսանալու նոր եկեղեցու, որով և ապացուցվում է «մեր եկեղեցվո կենդանությունը, մեր ժողովուրդի հավատի զորությունը, ինչ որ մեր սիրտը մխիթարությամբ կլեցնե»։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը ոգեկոչում է հիշատակը հանգուցյալ Պատրիարքի, «որ իր կյանքով և գործունեությամբ, իր սիրով դեպի մեր եկեղեցին և դեպի մեր ժողովուրդը իր նվիրումով, իր հոգիի ազնվությամբ և իր գրական վաստակով կարևոր տեղ մը գրավեց մեր եկեղեցիին և գրականության մեջ մեր դարաշրջանին»։

Ապա Վեհափառ Հայրապետը շարունակում է.

«Կխորհինք, թե մեծագույն հարգանքի և երախտագիտության ապացույցը պիտի տաք, եթե—մանավանդ դուք, ստամբուլահայությունդ— գիտնաք սիրո և միասնականության ոգիով և ճշմարիտ եկեղեցանվեր զգացումներով տոգորված, ձեր եկեղեցական կյանքը կազմակերպել և վարել խաղաղ և ծաղկումի, շինարար աշխատանքի ճանապարհով, առաջին հերթին, նույն սիրո միաբանության ոգիով, ընտրելով արժանավոր հաջորդ մը իբրև Պատրիարք հայոց Թուրքիոյ։

Ա՛յս ալ Մեր իղձն է և Մեր թելադրանքը, ինչպես քանի մը օր առաջ ընդգծեցինք, դուք, շատ սիրելի՛ և հարազա՛տ զավակներ Մեր, և ամբողջ Ստամբուլի հայությունը, Մեզ շրջապատեցիք բացառիկ սիրով, հարգանքով և շատ շնորհակալ ենք և խորապես զգացված, գոռացած իբրև Հայոց Հայրապետ, որովհետև մեր ուժը մեր հավատացյալներու հոգիին մեջ է, մեր եկեղեցին հոգևոր իրականությունն մըն է։ Մենք խորապես մխիթարված ենք, բայց վստահ եղեք, որ Մենք պիտի վշտանանք, եթե Մեր երթալեն հետո այդ սիրո և միության ոգին ձեր մեջ չպահպանվի։ Հույս ունինք, որ դուք միշտ զմեզ ուրախ պիտի պահեք։

Ավելի խորացնելով այս միտքը, արդեն մեր եկեղեցվո գոյության իմաստը մեր ժողովուրդի կյանքին մեջ ուրիշ բան չէ, եթե ոչ սիրո, միության և խաղաղության ոգվո պահպանումը կյանքի մեջ»։

Ապա Վեհափառ Հայրապետը Ստամբուլի հայ համայնքին տալիս է Իր սիրո, խաղաղության և եղբայրության քրիստոնեական պատգամը։ «*Ուր չկա սեր, միություն և խաղաղություն, այնտեղ փաստորեն չկա քրիստոնեություն*»,— *ասում է Վեհափառ Հայրապետը և ապա շարունակում.*

«Եթե ճշմարիտ քրիստոնեական սիրո, միության, խաղաղության ոգին մեր մեջ խորապես արմատացած ըլլար, մեր եկեղեցական կյանքի վերջին տագնապներն ալ խնայված կըլլային։ Աղոթենք հետևաբար, որ Աստված մեզի Իր լույսով առաջնորդե և մենք տեսնենք այդ փրկարար լույսը։ Եվ քայլենք այդ ուղիղ ճանապարհով, որպեսզի ճշմարտապես աշխատինք մեր կյանքի, մեր հոգևոր կյանքի շինության, ամրացման և ծաղկման համար։ Ամեն մեկս մեր ուժերու չափով օգնության ձեռք երկարենք եղբայրաբար, միասնաբար, որպեսզի մեր եկեղեցվո շենքը ոչ միայն չտկարանա, այլ զորանա։ Անա այս քանի մը հորդորները կուզեինք ձեզի թողուլ, որպեսզի այս իրողությանց լույսին տակ դուք աշխատեիք և լուծեիք հնարավոր չափով արագ կերպով ձեր եկեղեցական, կազմակերպչական կարևոր հարցերը, որոնք ձեր առջև կդրվին Գարեգին Պատրիարքի վախճանումով։

Երջանիկ պիտի ըլլանք Մենք այն օրը, երբ լսենք, թե Ստամբուլի հայությունը կարողանա, պետության համաձայնությամբ, իր նոր գահակալը ունենալ այս պատմական Պատրիարքական Աթոռին վրա և երջանիկ զգացումներով գեղուն, Մենք Ս. Էջմիածնեն պիտի շնորհավորենք ձեր նորընտիր Պատրիարքը և պիտի օրհնենք անգամ մը ևս զձեզ բոլորդ»։

Վեհափառ Հայրապետը հրաժեշտի Իր խոսքի և պատգամի վերջում Իր գոհունակությունն է հայտնում հանուն թաղական խորհրդի արտասանված ողջերթի սրտագեղ ու անկեղծ արտահայտությունների, որոնց մեջ «նույնքան գեղեցիկ զգացումներ կային և հավատարմության ոգի դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Այդ ալ Մեզ համար խորապես մխիթարական է։ Ամեն անգամ ընդգծեցինք և նորեն կկրկնենք, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հոգևոր բարոյական միակ ուժն է, որուն գերագույն հովանիին տակ կապրինք ավելի քան 16 դարերե ի վեր։

Անցյալ մրն է, որ պատկառանք կազդեցնում բոլոր աշխարհի վրա և Ս. Էջմիածինը Նախախնամության կողմե իսկ մեզի պարգևված իսկապես աստվածակառույց սրբություն ցոյցն է, հիմնարկություն մը սրբազան, որուն անմեջ կապված է մեր եկեղեցվո ամբողջ հայրապետությունը, մեր ժողովուրդին ամբողջ հայրապետությունը և ամբողջ մշակույթը: Մեր քրիստոնեության վավերականությունը այնտեղ կնքված է: Առանց Ս. Էջմիածնի, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին կկորցնեն իր քրիստոնեական վավերականությունը, կկորսնցնեն նշմարտապես աստվածային շնորհները, որոնք մեր վրա կտարածվին Լուսավորչի կանթեղի լույսով: Այս հոգեկան մեծ նշմարտությունը մեր կյանքն իսկ է և մեր ապագայի գրավականը:

Մենք, սիրելիներ՝ Ս. Էջմիածին, կվերադառնանք դեպի Ս. Էջմիածին, կվերադառնանք բազում խորհրդավորումներով, զորս ունեցանք այստեղ, խորհրդավորի գեղածիծաղ այս ափերուն վրա, հրապարակներ, որոնք քաղցինք ձեր հոգիներեն, ձեր հուզումներեն, ձեր արտահայտություններեն: Մենք զձեզ երբեք պիտի չմոռնանք, շատ հաճախ պիտի հիշենք այս վայրերը և գուցե այսպիսի առիթներով այնտեղ Մեր աչքերը նորեն քաղցր արցունքով պիտի լեցվին: Այն զգացումները, որոնք ծաղկեցան մեր հոգիներուն մեջ այս 18 օրերու ընթացքին, իրենց հետքը պիտի բողուն անջնջելի: Եվ մենք կկարծենք, թե Քրիստոսի սիրով և այս քաղցր զգացումներու մեջ մեր երջանկության աղբյուրը պիտի գտնենք և փառք պիտի տանք Աստուծո, որ Մենք առիթը ունեցանք այստեղ այցելելու, ճանչնալու զձեզ և սիրելու զձեզ: Այստեղ հավաքված եք հոգևոր հայրեր, քաղաքական խորհուրդի անդամներ և այլ ներկայացուցիչներ զանազան եկեղեցական մարմիններու, որ դեկավարությունը կկազմեք Ստամբուլի հայության, հետևաբար հարազատ և նշմարիտ ներկայացուցիչներն եք այս ժողովուրդին: Զեզի կուզեինք բաշխել անգամ մը ևս Մեր սրտեն բխած օրհնություններ, բարի մաղթանքներ և ձեր միջոցով կուզեինք, որ այս օրհնություններ և մաղթանքներ բաշխվեին Ստամբուլի մեր ամբողջ ժողովուրդին: Թող Աստուծո հովանին տարածվի մեր բոլոր եկեղեցիներուն և Ստամբուլի համայն հայ հավատացյալ ժողովուրդին վրա: Ապրեցե՛ք, զարգացե՛ք և ծաղկեցե՛ք ի փառս Աստուծո և ի փառս հայ ժողովուրդին:

Մնացե՛ք խաղաղությամբ, մնացե՛ք խաղաղությամբ»:

«ՀԱՅ ՀՈԳԻՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Ս. ՄԵՌՈՆՈՎ ԱՆԴԱՄ ՄԸ ԵՎ ԴՐՈՇՄԵԼԻ, ԶՄԵԶ ԱՌԻՆՔՆԵԼԵ ՈՒ ԿԱԽԱՐԴԵԼԵ ՎԵՐՋ, ՎԵՀԱՓԱՌԸ ԿՄԵԿՆԻ»

(«Ժամանակ» օրաթերթ)

Հուլիսի 20-ին, հինգշաբթի առավոտ, Վեհափառը Հայրապետը մեկնում է Ստամբուլից:

Մեկնումից առաջ, ժամը 10-ին, Նորին Ս. Օծությունը առաջնորդվում է Ստամբուլի Հայոց աթոռանիստ Մայր եկեղեցին, ուր շատ վաղ հավաքվել է հավատացյալների խուռն բազմություն:

Վեհափառ Հայրապետը, լուռ ու խոհուն, դանդաղորեն մտնում է ինքնամփոփ. «Տէ՛ր, ողորմեա՛ զգնացս մեր և առաջնորդեա՛ զմեզ...»: Ապա դառնալով ժողովրդին, օրհնում է և հրաժեշտ առնում, խորապես հուզված:

Հրաժեշտի Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ասում է.

«Սիրելիներ՝ և հարազատներ՝ Մեր, դուք՝ բոլոր հոգևոր սպասավորներ Ս. եկեղեցվո և զավակներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Ստամբուլի:

Մենք արդեն Մեր ուխտը կատարեցինք այս Ս. Սեղանին առաջ և կվերադառնանք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Հայաստան: Կրաժեշտեմ ձեզմե բոլորեդ, խորունկ հուզումով:

Մենք մեծապես մխիթարված կրաժեշտենք այս գեղեցիկ քաղաքեն, որ բնության հրաշալիքներեն մեկը կհանդիսանա: Ուստի կմնանք աղոթող այս քաղաքին և այս երկրին խաղաղության, բարգավաճության և հառաջդիմության համար:

Կրաժեշտենք ձեր այս փառավոր սուրբ տաճարներեն խորապես տպավորված և կմնանք աղոթող ձեր սուրբ եկեղեցիներուն անսասանության, շինության և պայծառության համար:

Կրաժեշտենք ձեզմե՛, սիրելի հոգևոր սպասավորներ մեր սուրբ սեղաններու, ձեզմե՛, Շնորհք սրբազան, տեղապահ Տ. Արամ քահանա և հոգեշնորհ վարդապետ հայրեր և արժանապատիվ քահանա հայրեր, կրաժեշտենք ձեզմե բոլորեդ լավագույն տպավորություններով և սիրո զգացումներով:

Կրաժեշտենք ձեզմե, Ս. եկեղեցվո զավակներ Մեր, դուք, որ անսահման խանդավառությամբ և ուրախությամբ դիմավորեցիք զՄեզ և տեսանք ապրեցաք Մեզի հետ մեկտեղ, հետևեցաք Մեր քայլերուն և ձեր սրտերը բացիք այն գստվածային օրհնու-

թյուններուն և շնորհներուն, որոնք ձեզի եկան Մեր միջոցով ամենայն հայոց աստվածակառույց Ս. Էջմիածնեն:

Մենք կբաժնվինք ձեզմե մարմնապես, բայց ձեր հիշատակը Մեզի հետ կտանինք:

Կմնանք այսուհետև միշտ աղոթող մեր սուրբ սեղաններուն առաջ ձեր քաջառողջության, երջանկության ու խաղաղության համար: Տիրոջ սուրբ օրհնությունը թող իջնե ձեր վրա և ձեզի հետ ըլլա միշտ օգնական պահապան և առաջնորդ, այժմ և հավիտյան:

Թող Տերը կանգուն և միշտ պայծառ պահե Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին:

Մնացե՛ք բարյավ, մնացե՛ք խաղաղությամբ, և «Շնորհ, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և յաւիտեան»: Ամէն»:

Ժողովուրդին «Ամե՛ն»-ները կլսվին սրտաբուխ և արցունքներ կհոսին,— գրում է «Մարմարա»-ն,— մինչ Վեհափառն ալ, տամկացած աչքերով և խորապես հուզված, կարտասանե վերջին «Պահպանիչ»-ը և հատկապես կշեշտե.

«Պահե՛ա՛, պահպանեա՛ զԱթոռ Պատրիարքական հայոց Թուրքիոյ», և կիջնե խորանեն»:

Ողջերթի հանդիսավոր այս խոսքերից հետո, Վեհափառ Հայրապետն ուղղվում է դեպի Ծիլգյուղի օդանավակայանը, որտեղ Ստամբուլի հայ համայնքը արցունքոտ աչքերով ճանապարհում է իր սիրելի Հայրապետին:

Օդանավակայանի ընդունելությանց պատվո սրահում, Վեհափառ Հայրապետն ընդունում է ողջերթի եկած պաշտոնական անձանց այցելությունները և բարեմաղթությունները: Վեհափառ Հայրապետին ճանապարհում են քույր եկեղեցիների, դավանության, հայ հարանվանության, դիվանագիտական մարմինների և մամուլի ներկայացուցիչներ:

Ստամբուլի հայ համայնքի եկեղեցական և աշխարհական ներկայացուցիչները ուղեկցում են Վեհափառ Հայրապետին, մինչև ինքնաթիռի սանդուղքը:

Ժամը 10·50-ին, Վեհափառ Հայրապետը, կանգնած ինքնաթիռի կամրջակի վրա, վերջին անգամ օրհնում է ողջերթի եկած բազմությանը, մինչ, բաժանման այս տխուր պահին, ուրախության և գոհունակության արցունքները հուշիկ թափվում են այտերն ի վար:

«Բարի ճանապա՛րհ սիրելի Վեհափառին», «Երկար կյա՛նք Վեհափառ Հայրապետին, նորեն եկեք մեզ մոտ, Վեհափա՛ռ Տեր» և այլ ոտտառուշ բացականչություններ լսվում են օդանավակայանում հավաքված բազմության միջից:

«Քիչ վերջ, ժողովուրդին հուզումնալից ցույցերուն մեջ, ինքնաթիռը սուրաց, բարձրացավ և դարձավ անտեսանելի:

Վեհափառ Հայրապետը մեկնեցավ էր, Իր հիշատակը թողլով անմոռանալի, մեր սրտերուն մեջ անգամ մրն ալ արծարծելով Մայր Աթոռի սերն ու Ս. Էջմիածնի լույսը»,— *գրում է «Մարմարա»-ն հուլիսի 21-ի իր համարում:*

Վեհափառ Հայրապետը, Ծիլգյուղի օդանավակայանից մեկնած պահուն, Թուրք Պետության և Կառավարության Նախագահ Նորին Վսեմություն զորավար Ջեմալ Գյուրսելին և Ստամբուլի նահանգապետ զորավար Ռեֆիկ Տուլգային ուղղում է հետևյալ հեռագրերը.

«ԹՈՒՐՔ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ԶՈՐԱՎԱՐ ՋԵՄԱԼ ԳՅՈՒՐՍԵԼԻՆ
ԱՆԳԱՐԱ

Ձեր գեղեցիկ երկրից բաժանվելիս, Ձերդ Վսեմության հետ անձամբ տեսակցելու առթիվ Մեր զգացած գոհունակությունը մի անգամ ևս հայտնելու բարեբախտությունն ունենք:

Հարգելի՛ Նախագահ, Ձեզանից բաժանվում ենք գեղեցիկ հիշատակներով:

Բարեմաղթում ենք, որ Աստված Ձերդ Վսեմության առողջություն և բարություն պարգևի և Ձեր երկրին՝ հաջողություններ խաղաղության մեջ:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

«ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԵՎ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ
ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՎԱՐ
ՌԵՖԻԿ ՏՈՒԼԳԱՅԻՆ
ՍՏԱՄԲՈՒԼ

Գեղեցիկ Ստամբուլից բաժանվելիս, Մեր այնտեղ անցկացրած ժամանակամիջոցում Մեր անձի հանդեպ ցուցաբերված հյուրասիրության և ուշադրության առթիվ, խնդրում ենք ընդունել Մեր ամենասրտագին շնորհակալությունները և բարեմաղթում ենք, որ երկնային Տերը Ձերդ Վսեմության պարգևի առողջություն, բարություն և հաջողություններ:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

«Ժամանակ» օրաթերթի խմբագիր և Ստամբուլի հայ մամուլի երիցագույն ներկայացուցիչ պր. Մարտիրոս Գոչը, «Բարյավ երթաք, Վեհափա՛ռ» խորագրով խմբագրականում գրում է.

«Սուգի օրով մը եկաք մեզի, Վեհափա՛ռ, և մխիթարություն ու սփոփանք պարգևեցիք։ Մեր սրտերը բերկրությամբ լեցուցիք և մեր հոգիներուն թռիչք տվիք։ Ձեր հեշտալուր ձայնը, Ձեր լուսաշող դեմքը և Ձեր հայրական խոսքը նոր ավյուն ու կենսունակություն ներարկեցին մեզի։ Եվ այժմ,

Բարյա՛վ երթաք Դուք Ս. Էջմիածին, ուրկե դարերու օրհնությունը, Փրկչի Իշման Ս. Սեղանին շնորհները, Ս. Գրիգոր Լուսավորչի լույսը, սեր, մխիթարություն և Ձերդ Վեհափառության գորովագին զգացումները բերիք մեզի, բարյա՛վ երթաք։

Վեհափա՛ռ, Դո՛ւք, որ կախարդեցիք մեր հոգիները, Դո՛ւք, որ հույզ դրիք մեր սրտերուն մեջ, Դո՛ւք, որ անտեղիտալի հարգանք մը և անվերապահ համակրություն ներշնչեցիք Թուրքիո իշխանավոր անձնավորությանց և բովանդակ հասարակության,

Դուք, իբր գերագույն խորհրդանիշը մեր Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո միասնականության, մեր այս պապենական եկեղեցվո և հավատքին բովանդակ վեհությունը և անխորտակելի կենսունակությունը, Ձեր բարձր անձին հմայքով և Ձեր մեղրածոր շրթներով ծանոթացուցիք բոլորին և մեր սրտերն ու հոգիները հպարտությամբ լեցուցիք, բարյա՛վ երթաք։

Դո՛ւք, Վեհափառ, բարյա՛վ երթաք Ս. Էջմիածին, ուր Փրկչի Իշման Ս. Սեղանին առջև, հիշեցե՛ք, թե Թուրքիո մեջ ունիք հարազատներ, որոնց սիրտը միշտ պիտի տրոփե Ձեզի համար և որոնք միշտ հավատարիմ պիտի մնան Մայր Աթոռին։

Վեհափա՛ռ Տեր, բարյա՛վ երթաք։

Ձեր մեկնումը, Ձեր գալուստին չափ անմոռանալի ու պատմական պիտի մնա մեզի համար, որովհետև մխիթարություն, օրհնություն և շնորհք բերիք մեզի, իսկ մյուս կողմե ալ ամրապնդեցիք մեր հավատքը ու խրախուսեցիք մեր հոգիները։

Վեհափա՛ռ Տեր, Դուք այցելեցիք մեր եկեղեցիները, մեր բարեսիրական հաստատությունները, մոտեն ու շատ մոտեն ծանոթացաք մեր բարեպաշտ ու հավատավոր ժողովուրդին ամեն դասակարգերուն հետ, և հիմա, երբ կմեկնիք Ս. Էջմիածին, գիտցե՛ք, որ Ձեզի հետ կտանիք նաև մեր ջերմեռանդ ու սրտաբուխ մաղթանքները՝ Ձերդ Վեհափառության արևշատության և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո անսասան պահպանման համար։

Վեհափա՛ռ Տեր, մենք հավատացած ենք, թե մեր պապերուն սուրբ հավատքը միշտ դեպի լավը և դեպի բարին առաջնորդած է մեզ։ Եվ այժմ, անդամ մը ևս այդ հավատքով ներշնչված ու տոգորված, ողջերթ և բարի ճանապարհ կմաղթենք Ձեզի։

Բարյա՛վ երթաք, Վեհափառ։

Տիկին Լիլի Գոչը, հանուն Ստամբուլի հայ կանանց, Վեհափառ Հայրապետի մեկնման առթիվ իր խորհրդածությունների մեջ, «ժամանակ» օրաթերթի նոմն համարում, Հրաժեշտի խոհերս Վեհափառին» խորագրի տակ գրում է.

«Ստամբուլ Ձեր այցելությունը քաղցր երազն էր բովանդակ համայնքիս։ Ձեր բարձր ներկայությունը վայելել, Ձեր Մեծ Հավատավորի շունչը զգալ մեր տաճարներուն մեջ ու մխիթարություն գտնել օրհնությամբ օծուն Ձեր իմաստուն խոսքերովը... և ահա իրականացավ այդ երազը այնքան փայփայված, ուանսպասելի պահու մը մեր մեջ, մեր մոտիկը գտանք Ձեզ, իբր արժանավոր առաքյալը Քրիստոսի։

Անչափ էր մեր ուրախությունը, անսահման էր մեր աղապատանքը հանդեպ այն Վեհափառ Եկեղեցականին, որ հեռավոր երկրե մը կհասնի մեզ, Իր հետ բերելով նոր խանդ, նոր ավյուն և բարձր ներշնչումը քրիստոնեական սիրո վարդապետության։

Արդարև, մարդկային ծովածավալ հորձանք մը ամեն ազգե ու կյանքե ընդառաջ փութաց, միմիայն տեսնելու Ամենայն Հայոց Հայրապետին սրբազնասուրբ դեմքը և խանդավառությամբ ողջունելու Անոր շնորհաբեր ներկայությունը։ Տաճարները արձագանք եղան Ձեր տիրապետող ձայնին և հավատացյալը երկյուղածությամբ լսեց հորդորներն ու մաղթանքները հայրական... բայց այսօր, արդեն իսկ վերջացավ այդ երազը, ինչպես ամեն գեղեցիկ բան, որ կարճատև է ու բաղձալի և Դուք, Վեհափա՛ռ, պիտի մեկնիք այլևս քանի մը ժամեն դեպի Ձեր գահակալության Աթոռը, որ Ձեզ կսպասե հոգևին։

Ստամբուլահայը երբեք պիտի չմոռնա այն քաղցր օրերն ու ժամերը, զորս ապրելու բարեբախտությունը ունեցավ Ձեզի հետ, Դուք, որ Ձեր հավատքի շունչովը պահ մը կերպարանափոխեցիք անոր ներաշխարհը և հավատավորի նոր կյանք ներշնչեցիք անոր էության ու կմեկնիք ահա, հայ համայնքին բովանդակ սերն ու գուրգուրանքը տանելով Ձեզի հետ։

Այս գեղեցիկ, այլ անցավոր կյանքին մեջ, երբ ամեն ինչ՝ պերճանք, փառք թե պատիվ չքանալու սահմանված ունայնություններ են, անաղարտ կմնա միայն անկեղծ սիրտը հավատացյալին, զոր Ձեզ կնվիրենք գուրգուրանքով։ Երանի, թե իբր հավերժական նվեր, ոսկյա սիրտ մը մատուցվեր Ձեզ, Վեհափա՛ռ, իբր խորհրդանիշ այն սրտին, զոր

կկրենք մեր լանջքին տակ և որ միշտ պիտի բարախե Ձեզ համար։

Վաղը առավոտ նորածագ արևին շողերուն հետ, երբ Նորին Վեհափառությունը փոխադրող օդանավը թռիչք առնե և անոր հետին մասնիկն ալ անհետանա կապույտ եթերին մեջ ու կորսվի մեր տեսողութենեն, տիպար եկեղեցականին, հազվագյուտ անհատականության և ջերմեռանդ հավատավորին գերազնիվ արժանիքները քանդակված պիտի մնան ստամբուլահայության խորքին մեջ իբր մշտարծարծ բոցը Ս. Էջմիածնա անշեջ կանթեղին, մաքուր ու լուսափայլ...»։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅՈՒՄ

Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով, հուլիսի 20-ին, հինգշաբթի երեկոյան, սկանդինավյան «SAS» ինքնաթիռով ժամանում է Վիեննա, ուր դիմավորվում է բազմաթիվ ազգայիններ կողմից, իրենց գլուխն ունենալով հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Գրիգորյանին և գաղութի Ազգային վարչության նախագահ պր. Սարգիս Կարապետյանին։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին դիմավորում են նաև Վիեննայի Մխիթարյան արքեպիսկոպոս Հ. Մեսրոպ վարդապետ Հապոզյանը և միաբանության անդամներ։

Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վիեննայի հայոց մատուռը, ուր մուտք է գործում «Հրաշափառ»-ով, և օրհնելով գաղութի փոքրաթիվ բայց սրտով մեծ հայ համայնքին, ողջունում է բոլորին։

Աջահամբույրից և սիրալիր տեսակցությունից հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է մայրաքաղաքի «Իմպերիալ» հյուրանոցը, ուր ավելի ուշ նրա բարձր պատվին կազմակերպվում է ընդունելություն Վիեննայի հայ համայնքի Ազգային վարչության կողմից։

Վիեննայի հայ գաղութի անունից պր. Ս. Կարապետյանը ողջունում է Վեհափառ Հայրապետի շնորհաբեր այցելությունը հետևյալ ուղերձով.

«Վեհափա՛ռ Հայրապետ.

Այսօր բախտը ինձի կժպտի Վիեննայի հայ գաղութի թարգմանը ըլլալու, Ձերդ Ս. Օծության բարի գալուստ և բարի ժամանում մաղթելու։ Երախտագիտության խոր զգացումներով շնորհակալություն կհայտնենք Ձեզի, Վեհափա՛ռ Հայրապետ, որ բարյացակամությունը ունեցաք չմերժելու մեր ամենուս ջերմ փափագը և խնդրանքը ընդունելու և Ձեր այս այցելությամբը Ձեր այս պզտիկ հոտն ալ Ձեր օրհնություններուն արժանացնելու։ Այս օրը մեր ամենուն սրտին մեջ և մեր բոլոր կյանքին համար պատմական, նշանակելի և անջնջելի հիշատակ մը պիտի մնա։ Ճիշտ է, երբ կհիշեմ մեր պզտիկ գաղութը, այո, ան պզտիկ է թիվով, բայց հպարտորեն կրնամ Ձերդ Վեհափառության տեղեկացնել, թե ան կորսված չէ և իր գոյությունը միշտ պիտի պահպանե Ձեր բարձր հովանիին տակ։ Ինչպես անցյալին մեր գաղութին վարիչները հասկցած են ազգապահպանման հեռատեսությամբ մը հաստատել մեր համեստ մատուռը, որ այսօր տեսաք, և անոր շուրջը հավաքելու հայության բեկորները, զանոնք չկորսնցնելու համար, մենք ալ պիտի հետևինք այդ ճամբուն այն նվիրական նպատակին, համերաշխությամբ և սիրով իրարու մեջ և մեր եկեղեցիին կապված պահելու։ Երջանիկ ենք այսօր, որ Հ. Մեսրոպ վարդապետը մեր լուսահոգի եղիշե ծայրագույն վարդապետի արժանավոր հաջորդը կըլլա և Ձեր բարձր կարգադրությամբ և հավանությամբ հովվությունը կստանձնե գաղութիս։ Բարեսիրաբար, կուզեմ Ձեզ վստահեցնել, Վեհափա՛ռ Հայր, որ մեր մեջ չունինք երկպառակիչ տարրեր, ինչպես ուրիշ գաղութներու մեջ դժբախտաբար։ Մենք ամենքս հոգվով սրտով կապված ենք Մայր Աթոռին, մեր ամենուն աչքերը հառած կմնան դեպի Ս. Էջմիածին։ Մեր աղոթքներուն մեջ միշտ կմիացնենք արևշատության մաղթանքներ մեր Վեհափառ Հայրապետին համար։ Տերը անսասան պահե Մայր Աթոռը»։

Հուլիսի 21-ին, ուրբաթ առավոտ, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Վիեննայի կուլտուրայի և կրոնից մինիստրին։

Երեկոյան Վեհափառ Հայրապետը բարեհաճում է պատվել գաղութի Ազգային վարչության նախագահ պր. Սարգիս Կարապետյանի ընտանեկան օջախը և օրհնել նրա սեղանի աղն ու հացը։

Հուլիսի 22-ին, շաբաթ առավոտյան, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ավստրիայի վարչապետ դոկտ. Կորբախին։ Լինում է ջերմ ընդունելություն։ Կեսօրին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Վիեննայի Մխիթարյան միաբանության վանքը, ուր ընդունվում է ջերմորեն և պատշաճ հարգանքներով։

Վեհափառ Հայրապետը, դերապայծառ աբբահոր առաջնորդությամբ, ծանոթանում է վանքին, այցելում է մատենադարանը, ձեռագրատունը, տպարանը։

Կեսօրին, վանական սեղանատանը, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին սիրալիր ընդունելություն են կազմակերպում Վիեննայի Մխիթարյան վարդապետները աբբահոր գլխավորությամբ։ Ընդունելությունն անցնում է շատ սրտագին և ջերմ մթնոլորտում։

Վիեննայի Մխիթարյան ուխտի միաբան Հ. Կոմիտաս վարդապետը հետևյալ գեղեցիկ գրաբար քերթվածով ողջունում է Վեհափառ Հայրապետի երջանկաբեր այցը Մխիթարյանների այս հյուրընկալ հարկի տակ.

Ի ԲԱՐԵՆԵԱՆ ԱՌՈՒՐ
ԴԱԼՍՏԵԱՆ Ի ՄԱՅՐ ՎԱՆՍ
ՄԵԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԻԵՆՆԱՅ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ,
ՍԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.
ԵՐԳԵՆ ՈՐԴԻՔ ՄԵԻԹԱՐԱՅ
Ջ Ն Ո Ւ Ա Գ Ս

Ամս բազումս եհարց ի մեզ սիրտ մեր
վառեալ զօրէն կրակի.
Թէ ե՞րբ և մեք տեսցուք զՔեզ,
ո՛ Հայրապետ քաղցրաբարբառ.
եւ ցնծասցուք ամենեքին ի ցնծութիւն
քաղցր, անբաւ,
Յասելոյ քում. «Ահա եկիջ, եկիջ առ ձեզ
վաղվաղակի:

Ողջո՛յն, ողջո՛յն, որ մեզ բերեր
զՀայաստան վարդ աշխարհի.
Ձերգս մանկանց, զկեանս աղքերց,
զեառագայթս արեգական,
Ողջոյն. ողջոյն, որ մեզ բերեր
զէջմիածին և զՕշական
եւ զՄասիս, ուր համօրէն խորհուրդ
հայոց ծածկեալ պահի:

Բաց է Քեզ արդ սիրտ ժառանգաց
Մխիթարայ որպէս մատեան,
Ո՜հ, ընթերցի՛ր և հաշակեա՛ զաշխարհ
Հայոց Քեզ հարազատ.
Զի աստ շնչեն էջմիածին և Օշական և
Արտաշատ,
Դարուց ի դարս ի մեզ պահի խորհուրդ
խորին Արարատեան:

Քոց աղօթիւ արդ աղաչեմք զՏէր
Յիսուս միահամուռ,
Ընդ հանապարհ քո՝ Սիրելոյդ՝ սփռել
ծաղիկս ազգիս ազգիս.
Քև յաւելցի պայծառութիւն, նոր
օրհնութիւն՝ Հայոց Ազգիս,
Արդ Վեհիդ հանգոյն Մասեաց
յանդորրութիւն կացցէ ամուր:
Նաև ի Բէն խնդրել ունիմք ի ցնծալից
ժամուս յայսմիկ,
Ընկա՛լ ի մէնջ զրղձից բաժակս, և
հասեալ Քոյ՝ ուստի եկիր,
Թափեսջի՛ր զայն— և խառնեսցի մերով
սիրով Հայոց երկիր.
Եւ եղիցուք մինչ ի վախճան ի միասին,
որպէս այժմիկ:

Ի Վիեննա,
ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի.
ի Ի՞Ր աւուր յուլիս ամսոյ 1961 ամին:

Ճաշի ժամանակ Վեհափառ Հայրապետը երկարորեն և սիրալիր կերպով խոսում է Իր մոտ նստած անվանի Մխիթարյան ծերունազարդ Հ. Ներսես Ակինյանի հետ։

Երեկոյան ժամը 4-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Ավստրիայի Կարդինալ Նորին Ամենապատվություն Քյոնիգի միջև տեղի է ունենում հանդիպում ջերմ մթնոլորտում։ Այս տեսակցության ներկա են լինում Վեհափառ Հայրապետի շքախմբի անդամները, ինչպես նաև հոգեշնորհ Տ. Մեսրոպ՝ վարդապետ Գրիգորյանը և պր. Սարգիս Կարապետյանը։

Հուլիսի 23-ին, կիրակի, Վիեննայի հայոց մատռան մեջ, եպիսկոպոսական սուրբ պատարագ է մատուցում գերաշնորհ Տ. Կոմիտաս սրբազանը և քարոզում է Վեհափառ Հայրապետը, հոգեպես մխիթարելով Վիեննայի հայոց Իր հոգևոր զավակներին։

Երեկոյան, Հ. Բ. Ը. Միության տեղական մասնաճյուղի նախագահը, Վեհափառ Հայրապետի բարձր պատվին, կազմակերպում է ընդունելություն, որին մասնակցում է ամբողջ գաղութը։

Հուլիսի 24-ին, երկուշաբթի, Վեհափառ Հայրապետը այցելում է Վիեննայի մի քանի պատմական թանգարաններ։

Հետմիջօրեին, հյուրանոցի Իր հարկաբաժնում, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել այցելությունը Բաղդատի թեմական խորհրդի նախագահ դոկտ. Վ. Ալեքսանյանի, որը մասնավորաբար Վիեննա էր եկել ողջունելու Վեհափառ Հայրապետին։

Վիեննայում Վեհափառ Հայրապետին ողջունում է նաև Ժընևի հայ համայնքի Ազգային վարչության նախագահ պր. Հակոբյանը։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Հուլիսի 25-ին, երեքշաբթի, Վեհափառ Հայրապետը «ՏՈՒ—104» ինքնաթիռով վերադառնում է Մոսկվա։

Վիեննայի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհում են գաղութի բոլոր հայերը, գլխավորությամբ հոգեշնորհ

Տ. Մեսրոպ վարդապետի և պր. Ս. Կարապետյանի։ Օդանավակայանում են նաև Մխիթարյան հայրեր, գլխավորությամբ գերապայծառ Հ. Հապոզյանի։

Նորին Ս. Օծությունը Վիեննայի փոքրաթիվ սակայն պատվական հայ գաղութից իր հետ բերում է լավագույն տպավորություններ և հիշատակներ։

Հուլիսի 27-ին, հինգշաբթի, Վեհափառ Հայրապետը ողջամբ ժամանում է Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Նորին Ս. Օծությունը «Հրաշափառ»-ով առաջնորդվում է Մայր Տաճար, ուր աղոթելուց հետո, ողջունում է միաբանությանը և պաշտոնեությանը ու հաղորդում Ստամբուլի հայ համայնքի եղբայրական ողջույնները և համառոտակի պատմելով Իր հայրապետական ուղևորության տպավորություններն ու հուշերը, «Պահպանիչ»-ով արձակում է Մայր Տաճարում ներկա եղողներին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, ուր «Հոգւոց» է արտասանում երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի հիշատակին և միաբանության հաղորդում Ստամբուլի հոգևորականների ողջույնները։

Բարի գալո՜ւստ մեր սիրելի Վեհափառ Հայրապետին։

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱԵՊՏԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻՑ

Օգոստոսի 6-ին, կիրակի, Երևանի ռադիոկայանը ձայնասփռում է երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի մահվան առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Թուրքիայի հայ համայնքին տված հովվապետական այցելությունից ստացած հետևյալ տպավորությունները.

«Թուրքիայեն Մայր Աթոռ Ս. Էջմիածին կվերադառնանք լավագույն տպավորություններով և մանավանդ հոգեպես մխիթարված, որ Մեր խղճի պարտքը կատարեցինք Թուրքիոյ հայոց հանգուցյալ երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքին հանդեպ, որուն վերջին օծումը անձամբ կատարեցինք։

Հանգուցյալ Պատրիարքի թաղումը տեղի ունեցավ շատ սրտառուչ, շատ հանդիսավոր և փառաշուք իրադրության մեջ։ Բացի Մեզ ուղեկցող Կոմիտաս եպիսկոպոսեն և Պարգև վարդապետեն, թաղման արարողության մասնակցելու եկեր էին Բեյրութեն խադ արքեպիսկոպոս Աջապահյան՝ հանուն Մեծի Տանն Կիլիկիո Աթոռին, երկու վարդապետներու ընկերակցությամբ, Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան Եգիպտոսեն, Տիրան արքեպիսկոպոս Ներսոյան Նյու-Յորքեն և Սերովբե եպիսկոպոս Մանուկյան Փարիզեն։ Մասնակցեցավ նաև Պոլսո հոգևորականությունը ամբողջությամբ— Շնորհք եպիսկոպոս Գալուստյան, պատրիարքական փոխանորդ Տեր Արամ քահանան, Սահակ և Շահան վարդապետները և ավելի քան երեսուն քահանաներ։

Հարգանքի բարձր արտահայտություններ եղան նաև պետական իշխանության կողմե, հանուն Թուրքիոյ Հանրապետության Վսեմաշուք Նախագահին։ Ստամբուլի նահանգապետը անձամբ ներկա եղավ օծման արարողության։

Քրիստոնեական բոլոր եկեղեցիները՝ ամբողջ մասնակցեցան թաղման արարողության, իրենց գլուխը ունենալով Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորաս Հայրապետը։ Ներկա էին նաև բազմաթիվ պետության դեսպանությանց ներկայացուցիչները։

Խորապես հուզիչ և տպավորիչ էին բազմահազար հավատացյալ ժողովուրդի վշտի և երկյուղած հարգանքի արտահայտությունները։

Իրապես պատմական պիտի մնա երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի փառաշուք թաղման հիշատակը, որ տեղի ունեցավ հուլիսի 7-ին։

Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատուրյանի վախճանումով Հայաստանյայց Եկեղեցին կորսնցուց ներշնչված, անբասիր ու գրական հարուստ վաստակով մեծ հոգևորական մը, իսկ Թուրքիոյ հայ ժողովուրդը՝ սիրված ու հարգված, դժվար փոխարինելի Պատրիարք մը։

Հուսով ենք սակայն և աղոթող, որ Տիրոջ ողորմությամբ, շուտով կվերնա սգո քողը Թուրքիոյ հայոց Պատրիարքական Աթոռին վրայեն՝ բարեհաճող և արժանավոր ընտրությամբ նոր Պատրիարքի, սիրո և միասնության մթնոլորտի մը մեջ։

Համաձայն մեր եկեղեցվո կանոններուն, պատրիարքները, ինչպես նաև կաթողիկոսները և թեմական առաջնորդները կընտրվին ժողովուրդի աշխարհական և հոգևորական ներկայացուցիչներուն կողմե։ Ապա ընտրությունը կհաստատվի տեղական պետական իշխանության կողմե, համաձայն պետական օրենքներուն։ Այս բոլորեն հետո, Պատրիարքի ընտրության մասին կհաղորդվի Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Մենք սիրով կսպասենք այդ օրվան, որպեսզի շնորհավորենք և Մեր օրհնությունը տանք նորընտիր Պատրիարքին հայոց Թուրքիոյ։

Մենք խորապես մխիթարված ենք նաև, որ այս տխուր առիթով Մեր կենդանի աչքերով

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻ ՀԵՏ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է Հ. ՆԵՐՍԵՍ ԱԿԻՆՅԱՆԸ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՎԱՆՔՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ Է ՄԱՂԹՈՒՄ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ԱԲԲԱՀԱՅՐ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ Հ. ՄԵՍՐՈՊ ՎԱՐԻԱՊԵՏ ՀԱՊՈՂՅԱՆԸ

տեսանք Ստամբուլի մեր եկեղեցիները և մոտ իսկ օր շարունակ ապրեցանք Մեր հավատացյալ զավակներուն ծոցին մեջ:

Ստամբուլի հայոց եկեղեցական կյանքը Մենք գտանք շատ գոհացուցիչ: Մեր բոլոր հոգևոր զավակները կապրին կազմակերպված եկեղեցական համայնքային կյանքով, սրբությամբ պահելով իրենց քրիստոնեական հավատքը և ավանդությունները: Լավ կազմակերպված են դպրաց դասերը, որոնք բացառիկ փայլ կուտան եկեղեցական արարողությանց:

Մխիթարական էր Մեզ համար նաև հաստատել, թե Թուրքիոյ պետական իշխանությունը հայ եկեղեցիներու հանդեպ բարյացակամ և ուշադիր վերաբերմունք ունի: Մենք համոզվեցանք, թե Հայ եկեղեցվո հարցերը պիտի լուծվին լայնախոհ և ազատամիտ վերաբերմունքով վերին իշխանությանց, մանավանդ Վսեմաշուք Նախագահ զորավար Ջեմալ Գյուրսելի հետ Մեր ունեցած տեսակցութենեն հետո:

Այդ տեսակցութենեն Մենք լավագույն տպավորություններ ունեցանք: Առաջին իսկ վայրկյանեն մտերմիկ, ջերմ մթնոլորտ մը ստեղծվեցավ Մեր միջև և Մեր խոսակցությունը ընթացավ շատ սիրալիր: Նորին Վսեմությունը խոսեցավ ժողովուրդներու միջև խաղաղության և տեսական բարեկամության մասին, փափագ հայտնելով, որ կրոնները և հոգևորականները աշխատին այդ նպատակի իրագործման համար: Մեզ համար, որ տարիներե ի վեր այդ ոգիով կգործենք ու կգործենք, մեծապես մխիթարական էր լսել նման վեհ գաղափարներ պետական բարձր դեկավարի մը բերանեն: Մենք հավատացած ենք, թե իրապես այդ է ճշմարիտ ուղին ժողովուրդներու երջանկության:

Ստամբուլի մեջ Մենք երջանիկ առիթն ունեցանք անձամբ ճանչնալու Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասը, որ բարձրորեն վեհ ու ազնիվ անձնավորություն մըն է, իրական հայրապետ մը: Նորին Սրբության հետ քանի մը հանդիպումներ ունեցանք և խաղցր է Մեզ համար հաստատել, թե այս առիթներով առավել ամրացան դարավոր կապերը մեր հույր եկեղեցիներու միջև:

Վերջացնելե առաջ, անգամ մը ևս կհայտնենք Մեր հոգեկան մխիթարության զգացումը, որ անձամբ նախագահեցինք մեծանուն Կարեգին Սրբազան Պատրիարքի թաղման և անձամբ տեսանք, ճանչցանք և սիրեցինք Մեր հավատացյալ զավակները, որ կապրին Թուրքիա: Վերադարձանք անմոռանալի հիշատակներով այդ բարեպաշտ, եկեղեցասեր ժողովուրդեն, որ այնքան անսահման սիրո և պաշտամունքի արտահայտություններով շրջապատեց Մեզ, հոգևոր հավատարմության զմայլելի ապրումներով գեղուն դեպի ամենայն հայոց Մայր Աթոռ աստվածակառույց Ս. Էջմիածինը:

Թուրքիոյ Մեր հայ հավատացյալ զավակներուն կմաղթենք, որ Աստուծո օգնությամբ շեն ու պայծառ պահեն իրենց եկեղեցիները, ամուր մնան մեր նախնյաց լույս հավատի վեմին վրա, ապրին ու գործեն սիրով միաբան և խաղաղ, նույն սիրով ու նույն եռանդով մնան հավատարիմ և շինարար քաղաքացիներ իրենց բնակած երկրին ու պետության:

Ս. Էջմիածնեն, Մեր հայրական սրտեն բխած ամենաջերմ օրհնություններ Մեր բոլոր հավատացյալ զավակներուն, այժմ և հավիտյան:

Ամեն»:



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

5. ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ՇՐՋԱՊԱՏԸ

Օրմանյան շատ ալ դժգոհ չի թվիր, որ իր օրով կիրարկության մեջ չէր Ազգային Սահմանադրությունը։ Հնարավորությունները, զորս ան կուտար ժողովրդական ղանգվածներուն միջամուխ ըլլալու ազգային խնդիրներու, և իրավասությունները, որոնցմով ան կօժտեր ազգային մարմինները հարցերը վճռելու ատեն, կրնային պատուհաս դառնալ փափուկ այն տարիներուն մեջ, երբ Օրմանյան կվարեր պատրիարքությունը։ Աղետ մը կրնար ըլլալ իրեն համար մանավանդ Ազգային երեսփոխանական ժողովը, եթե արտոնված ըլլար կանոնավոր նիստեր գումարել այն տարիներուն, ոչ միայն կաշկանդելով իր ամեն մեկ քայլը, այլև ամեն վայրկյան սրտնեղություն պատճառելով պետական իշխանությանց, ու մասնավորաբար Պալատին։ Որովհետև որքան ալ մշտական սարսափի տակ կապրեին մարդիկ, և ստիպված էին կշռել բառերուն նույնիսկ վանկերը, այնուամենայնիվ վանկերն անգամ կրնային մատի փաթթոց դառնալ Համիդի այդ վարչակարգին տակ։

Եվ արդեն Օրմանյան առհասարակ համակարծիք չերևիր, որ Ազգային Երեսփոխանական ժողովը նիստ գումարե տարին տասներկու ամիս, նույնիսկ համեմատաբար ավելի ազատ շրջաններու։ Անոր կարծիքով Ազգային ժողովը պետք է գումարվի տարին անգամ մը միայն, Ազգային վարչությունը ընտրելու կամ անոր հաշվետվությունը լսելու համար, ի հարկին իր տեսակետները բանաձևելով հիմնական հարցերու մասին։ Այլապես մշտապես նիստ գումարող Ազգային ժողով մը, Օրմանյանի կարծիքով, գործադիր իշխանություն կդառնա ինքն ալ և կխանգարե Ազգային վարչության գործունեությունը, միջամտելով անոր ամեն մեկ քայլին, և ջլատելով ամեն մեկ նախաձեռնություն, ինչպես ըրած է Ներսես պատրիարքի օրով։ Օրմանյան հանգիստ էր այդ տեսակետով. իր քայլերը կաշկանդող մը չուներ։

Եվ այնուամենայնիվ Օրմանյան որոշ կետեր հարգեց Ազգային Սահմանադրության տրամադրություններեն։ Ան հոգ տարավ, օրինակ, որ Ազգային վարչության կողքին գոյություն ունենան Ազգային Սահմանադրության նախատեսած օժանդակ մարմիններն ալ, և առաջին հերթին երեք տեսուչ խորհուրդները,— Ուսումնական, Տնտեսական և Դատաստանական, որոնք միշտ գոյություն ունեցան լրիվ կազմով։ Գոյություն ունեին նաև զանազան ազգային մարմիններ՝ հոգաբարձության, խնամակալության կամ հանձնաժողովի անվան տակ։

Շատ չխաբվինք սակայն մեծ-մեծ անուններեն, որոնք մաս կազմեցին իր նախագահած վարչության կամ անոր ենթակա տեսուչ-խորհուրդներուն։ Անոնց մեծ մասը ժողովականի համեստ դերեն դուրս չելավ, և ազգային իրենց պարտականությունները լիովին կատարած ըլլալ կարծեցին նիստերե չբացակայելով։ Մարդիկ կան արդարև, որոնք Ազգին մասին կմտածեն միայն ժողովի ժողով, և այդքանով Ազգը փրկած ըլլալ կկարծեն։

Իր շրջապատին մասին խոսած ատեն, չենք կրնար չառանձնացնել սակայն քանի

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվականի № № 6-ից և 8-ից։

մը դեմքեր, որոնք պարզ խամաճիկներ կամ խրտվիլակներ չեղան մյուսներուն պես, այլ տեսակ մը հեղինակավոր և սրտցավ գործակիցները օրվան պատրիարքին։ Անոնք եղեր էին, որ զինքը բերեր էին պատրիարքական Աթոռը՝ Ազգին ճակատագիրը շհանձնելու համար կարգ մը կասկածելի մարդոց, որոնք, իրենք իսկ արդեն օտարացած, ավելի ևս պիտի լրճեին հայ կյանքը։ Անոնք եղեր էին դարձյալ, որ հոժարեր էին մնալ իր կողքին և Ազգային վարչության ատենապետությունը վարեր էին մեկը մյուսին մահեն հետո։ Եվ վերջապես, անոնք եղեր էին, որ պետության մեջ վայելած իրենց բացառիկ հեղինակությամբ, վարկ պիտի բանային իրեն համար ալ։ Արդարև աղոնցմե շորսն ալ, Հարություն Տատյան և Ստեփան Ասլանյան փաշաները, Տիգրան Յուսուֆյան և Գաբրիել Նորատունկյան, նախախնամություն մը եղան Օրմանյանի համար այդ դժնդակ տարիներուն։

***

Հնարավոր չէ Օրմանյանի շուրջի մարդիկը հիշել և կանգ չառնել նախ, բացառիկ կերպով, մարդու մը վրա, որ անոր պատրիարքության առաջին հինգ տարիներուն սերտորեն գործակցեցավ անոր։ Հարություն փաշա Տատյանն էր ան։

Այս բացառությունը անոր համար նախ, որովհետև Արթին փաշան էր, որ մեծ դեր խաղաց Օրմանյանի պատրիարք ընտրության մեջ, և եթե կարելի է ըսել, ուղղակի ինքն էր, որ կազմակերպեց այդ ընտրությունը։ Հետո, Օրմանյանի ընտրութենեն մինչև իր մահը, Արթին փաշան էր, որ վարեց Ազգային վարչության ատենապետությունը։ Եվ վերջապես, շնորհիվ արքունիքին մոտ ունեցած իր վարկին, Արթին փաշա վարկ ստեղծեց Օրմանյանի համար ալ և հեղինակություն, ինչպես ստեղծեր էր հայ հասարակության մեջ ալ, իր անոր ընծայած հովանավորությամբ։

Արթին փաշա շառավիղն էր Տատյանց համբավավոր ընտանիքին, որոնց վստահեր էին սուլթանները իրենց վառոդարանը և որոնք, սերունդե սերունդ, վարեր էին զայն անստգյուտ ձեռնհասությամբ մը։ Հարություն Տատյան շեղեցավ իր նախնիքներու նախասիրութենեն։ Ծնած 1830-ին և ուսումը ստացած Փարիզի Սենտ-Բարբ լիսեին մեջ, Պոլիս դարձին մտավ դիվանագիտական ասպարեզ, և զանազան պաշտոններ վարելե հետո, 1875-ին անվանվեցավ արտաքին գործերու խորհրդական, պաշտոն, զոր մեկ քանի ընդմիջումներով, պահեց մինչև կյանքին վերջը, 1901 թվականը։

Խորապես տեղյակ հայ լեզվին և նախանձախնդիր հայ ավանդությանց, իր խորքին մեջ ջերմ ազգասեր հայ պահպանողականի տիպարն էր Արթին փաշա, որ գիտեր պետական գործերու մեջ պահանջված հավատարմությունը ազգային շահերու հետ հաշտեցնելու փափուկ արվեստը։ Պետական ինչ պաշտոն ալ վարեց, մտքեն երբեք չհանեց հայ ժողովուրդը, նույնիսկ այն պահուն, երբ, արտաքին գործերու խորհրդական, ինք կվարեր կերպով մը Թուրքիո արտաքին քաղաքականությունը, և երբ, ազգային գործերու գլուխն ալ անցավ, որքան թույլ կուտային անշուշտ իր ժամանակն ու պայմանները։ Հլու արքունիքին և շահած անոր վրստահությունը, այն հավատքն ուներ, թե ավելի լավ կրնա ծառայել այդ կերպով նաև Ազգին շահերուն, և իր միամտությունը պահ մը հոն հասցուց, որ հուսաց հայ հեղափոխականները հաշտեցնել սուլթանական արքունիքին հետ, 1897—1899 տարիներուն, որպեսզի նոր աղետներ խնայե Ազգին, և այդ առթիվ նույնիսկ բանակցություններ ալ վարեց։

Օրմանյան սապես կբնութագրե Տատյանը. «Ազգային գործերու շարունակ մասնակցած, պետական պաշտամանց մեջ վարժված և հառաջացած մինչև վեզիրության աստիճան, և քաղաքագիտական բարձր հանճարով օժտված, դիվանագիտական գրությանց քաջավարժ հեղինակ, և կայսերական իշխանութենեն հարգված ու համակրված։ Տատյան մեծ հարգ ու վարկ և բարձր անուն ու պատիվ վայելեց ոչ միայն ազգային, այլև արքունական, պետական, դեսպանական և եվրոպական շրջանակներու մեջ... Վերջին անգամ Իզմիրլյանի հրաժարելեն և անոր վարչության ցրվելեն ետքը՝ ազգային ձևի վերածելու մեջ տարած ջանքը ու ստացած հաջողությունը յուր գիտելյաց երախտիքն եղավ։ Վախճանեցավ 1901 հոկտեմբեր 7/20-ին, դրամական ոչ ընդարձակ վիճակի մեջ. արդեն երբեք այդ մասին հաստատուն դիրք չէր ունեցած»[101]։

Իր դիվանագիտական համբավին մարդ դժվար կհաշտեցնե սակայն իր միամտությունը՝ հասկացողության եզր մը գտնելու Համիդի և հայ հեղափոխականներու միջև։ Թեև մեծ չափով արյունոտ Սուլթանին ուղղակի պարտադրանքն էին փորձերը, զորս 1897—1899 տարիներուն կատարեց հայ հեղափոխականներու մոտ, սակայն չափազանց միամտության տարած պիտի ըլլա զայն իր ազգասիրությունը հուսալու համար, որ եթե խռովություններե հրաժարին հայերը և Համիդը քանի մը բանտարկյալ

101 «Խոհք և խոսք», էջ 430։

ազատե կամ երթևեկի ազատություն տա երկրին մեջ, փորձեր, որոնք չէին կրնար ի վերջո չվիժիլ, բավական երկար տևելե հետո սակայն, այսինքն նույն այդ միամտությունը քաշկռտելե հետո երեք տարի տևող թղթակցությանց մեջ։

Մարդ կշվարի նաև տեսնելով Եվրոպա ուղղած իր նամակներուն մեջ այդքան փաղաքշանք Համիդի հասցեին,— ինչ որ շատ տխուր պիտի ըլլար, եթե իր նամակներուն ձեռք անցնելե վախնալուն հետևանքը չըլլար,— և միևնույն ատեն այդքան նողկանք Բարթողիմեոս Ջամիչյանի և անոր աշխարհական արբանյակներուն հանդեպ, անոնց ստորնաքարշ գալարումներուն համար Համիդի գարշապարներուն առջև։ Պետք է հոգեկան բացառիկ ուժ ունենալ չթերանալու համար Համիդի հանդեպ պարտականություններուդ մեջ, որոնք երբեմն իսկապես ստրկության կհասցնեն պաշտոնյան, և միևնույն ատեն գարշանք զգալու համար այնպիսիներու նկատմամբ, որոնք ստրկությունը կհասցնեն իր աներևակայելի չափին, այսինքն ազգային շահերու դավաճանության։

Ասկե զատ, մարդուս ուժերեն վեր է հավատալ այն ամբաստանություններուն, զորս Արթին փաշա կընե իր նամակներուն մեջ ինչ-ինչ դեմքերու հասցեին, մատնանշելով զանոնք ուղղակի գործակալները Համիդի լրտեսապետներուն։ Եթե Տիրան Քելեկյանի մասին նման կասկածներ հետագային արձագանք գտան ուրիշ աղբյուրներու մեջ ևս, ինչպես Բեհաէդդին Շաքիրի հիշատակներուն մեջ, ուր «Սաբահ»-ի նախկին խմբագրապետը կներկայանա իբրև գործակալ համբավավոր Ջեմալէդդին փաշայի, մարդ ուղղակի կփշաքաղի կարդալով Արթին փաշայի վերագրումները արևմտահայ գրականության ամենեն պանծալի դեմքերեն մեկուն՝ Արփիար Արփիարյանի մասին, մարդու մը, որ, ճիշտ է, տկար պահ մը ունեցավ Համիդյան բանտեն արձակված ատեն, բայց որուն գրական երկը, ջերմ հայրենասիրությամբ բաբախուն, կըմբոստացնե քեզ նման կասկածներու դեմ, և կարտմտիս դուն քեզի հանդեպ՝ ի վիճակի չըլլալուդ համար զանոնք փարատել։

Օրմանյան լրիվ կվայելեր Արթին փաշայի համակրանքն ու վստահությունը։ 1896-ի դեպքերեն առաջ ալ անծանոթ չէին անոնք իրարու, և Օրմանյանի մասին նախապես գոյացուցած իր նպաստավոր կարծիքն էր, որ Տատյանը մղած էր անոր թեկնածությունը ջերմորեն պաշտպանելու արքունիքին մոտ։ Բայց անոնց մտերմությունը ամրացավ իրենց գործակցության տարիներուն՝ երբ զիրար համախոհ գտան երկուստեք հայ կյանքը հուզող գրեթե բոլոր խնդիրներուն շուրջ։ Օրմանյանի հանդեպ իր սնուցած ամբողջական վստահությունն էր, որ Տատյանը համարձակ կդարձներ պալատին առջև, և զինք կդրդեր զորավիգ կանգնիլ անոր բոլոր դիմումներուն առթիվ։

Արթին փաշա իր կարգին մեծ ազդեցություն ուներ Օրմանյանի վրա, ըլլա պալատին մեջ իր վայելած վարկին, ըլլա իր իսկ հեղինակության բերմամբ։ Տատյան իր նամակներուն մեջ բազմիցս կզգացնե, որ ինքն է եղած զայն պալատ ղրկողը հաճախ, այս կամ այն պահանջը ներկայացնելու համար։

Միակ մղձավանջ մը հետապնդած է Տատյանը՝ ամուլ դարձնել որևէ քսություն պալատին մոտ, թուրքերու կողմե գան անոնք թե հայերու, և կանխել որևէ նոր աղետ, որքան ատեն որ Ազգին գլուխն է ինքը։ Այդ հիմնական մտահոգութենեն կուգան նաև իր ձեռնարկները, որոնց ակնարկեցինք։

Ավելի իրատես ըլլալ կթվեր այդ մասին Օրմանյան, ոչ միայն չբաժնելով Տատյանի միամտությունը՝ հասկացողության մը բերելու Համիդն ու հայ հեղափոխականները, այլ պատեհ չգտնելով նույնիսկ բանակցություններ վարել այդ առթիվ։

Տատյան իր նամակներուն մեջ հաճախ կակնարկե իր զգացած սրտնեղության՝ ամուլ մնացած դիմումներու առթիվ, և իր փորձերուն՝ ազգային գործերե ձեռնթափ ըլլալու։ Ամեն անգամուն ալ, ինչպես կզգացնե ինքն իսկ, պալատը բռնադատած է զինք պաշտոնը շարունակելու։

***

Ռոբեր Ցազըճյան, որ մոտեն տեղյակ էր պալատի և Պատրիարքարանի հետ կապված անցուդարձերուն, իր հիշատակները ինձի պատմելու առթիվ, հիշած է շատ շահեկան դրվագ մը Արթին փաշայի կյանքեն, դրվագ, որուն կապված է Օրմանյան ալ։ Միջադեպը կվերաբերի տեղեկագրի մը, զոր պատրիարքը գաղտնի պիտի տար դեսպաններուն, և որուն խմբագրությունը կատարած էր Արթին փաշան Օրմանյանի խնդրանքով, առանց որ Քաղաքական ժողովի մյուս անդամները անկե տեղեկություն ունենային։ Բայց դեպքը գաղտնի չի մնար։ Ռոբեր էֆենդիի կարծիքով, Պատրիարքարանեն պաշտոնյա մըն է, որ որևէ կերպով իմացած լուրը, զայն կհասցրնե պալատ։ Լուրը, բնականաբար, կհասնի Համիդի ականջը, որ կհրամայե առաջին քարտուղար Թահսին փաշային՝ Արթին փաշան պալատ կանչել գիշերանց։

Կարելի է կռահել սարսափը պետական պաշտոնյայի մը, որ կկանչվի պալատ այսպես գիշերանց։ Բայց Արթին փաշան, տաքե ու պաղե անցած մարդ, Թահսին փաշայի

մոտ կմտնե պաղարյուն, թեև կռահած կանչվելուն շարժառիթը։

— Արթին,— կմռնչե արարողապետը, զանց ընելով նույնիսկ փաշա մակդիրը,— ճի՞շտ է, որ թաքիր մը խմբագրած ես դեսպաններուն ուղղված։

Պաղարյունը դարձյալ չի կորսնցներ Արթին փաշան ու կըսե.

— Շատ ճիշտ է։

— Ճի՞շտ է...

— Ի՞նչ կուզեիք։ Հայոց վերաբերյալ թաքրիր մը ձգեի, որ Նորին Վեհափառության թշնամինե՞րը խմբագրեն...

Համիդ կպոռա հանկարծ վարագույրին ետևեն.

— Մեմնուն օլդում. Թահսի՛ն, իշերի կել։ («Գոհ մնացի. Թահսին, նե՛րս եկուր»)։

Թահսին փաշա կմտնե Սուլթանին մոտ, որ կրհամայե Արթին փաշային տալ անոր չունեցած մեկ պատվանշանը և զայն տունը ճամբել պալատական կառքով։

***

Օրմանյանի անմիջական գործակիցներուն մեջ շահեկան դեմք մը եղած է նաև Ասլանյան Ստեփան փաշան, զինվորական բժիշկ, որ ազգային երկար կյանք մը ունեցեր էր արդեն, 1896-ին Քաղաքական ժողովի անդամ ընտրվելե առաջ։ Օրմանյան կգրե անոր մասին. «Ազգային շրջանակի մեջ խոհական գործիչներու կարգին առաջնակարգ դիրք և ջանք և արդյունք և հաջողություն ունեցած, այն աստիճան, որ կրնաք համարձակ հավաստել, թե չէ եղած ազգային խնդիր մը, որուն մեջ Ասլանյան գործոն դեր և խոհական արժանիք ունեցած չըլլա։ Մանրամասնությանց մեջ մտնել դժվար կըլլա, զի պետք կըլլար 1851—ե ասդին անցած ազգային կյանքը ամբողջաբար քաղել և Ազգային Սահմանադրության սկզբնավորության անցքերը պատմել։ Ասլանյանի ազգային գործոց մեջ կատարելապես սուզվիլը զինքն ալ պահ մը կասկածելի ցուցուցին, այլ շուտով իսկությունը հայտնվեցավ, և յուր նախնական դիրքը կատարելապես վերանորոգեցավ»[102]։

Օրմանյան այլուր կգրե Ստեփան փաշայի մասին. «Ասլանյան յուր գործունեության մեջ ազատական ձգտումներու զուլգ կպահեր շափավոր ուղղությունը, վերացական սկզբունքներե շէր հեռացներ գործնական տեսությունները, և ամեն դասակարգե և ամեն կուսակցությենե հավասարապես հարգված էր. տարաձայնությունները համաձայնության բերելու ձիրքն ուներ»[103]։

Օրմանյան անխառն գոհունակությամբ կհիշե նաև գործակցությունը պատվական հայու մը, Տիգրան Յուսուֆյանի, վճռաբեկ ատյանի անդամ և ազգային փորձառու գործիչ, որ ջերմորեն ողջուներ էր տարիներ առաջ իր դարձը դեպի Հայ Եկեղեցին և հետագային աջակցեր իր պատրիարք ընտրության, և որ, հիմա ալ, իր պատրիարքության ատեն, կօժանդակեր իրեն իբրև ժողովական։ Անաչառ, և վեճերու մեջ խաղաղարար իր դերով համբավված այս մարդը քաղաքացիական քաջության ժեստեր ալ ունեցած էր։

«Տիգրան Յուսուֆյան,—կգրե Օրմանյան,— առաջին երիտասարդությենե ազգային գործերով զբաղած, ամեն ժողովներու և հանձնաժողովներու և խորհուրդներու անդամակցած և ատենապետած, և բացարձակ վարչապետություն ալ վարած՝ երբոր ժողովական դրությունը տեսչական դրության վերածվեցավ Ներսեսի օրով։ Մասնակից գտնվեցավ ամեն ազգային նշանավոր խնդիրներու, և փայլեցավ իրեն սեփական հաշտարարի և համերաշխության աշխատողի ջանքերով։ Գլխավոր դեր ունեցավ 1896-ին ընտրված Վարչության մեջ, որուն ատենապետությունն ալ վարեց Տատյանի և Ասլանյանի մահերեն ետքը։ Պետական պաշտոնեության մեջ դատական ճյուղին ծառայեց մինչև վերջը, և մինչև վճռաբեկ ատյանի անդամակցության բարձրացավ։ Շատ նշանավոր դատերու դատավոր նստեցավ, և հիշատակելի է յուր նախաձեռնությունը, երբոր նախկին կայսր Մուրադի և մայր կայսրուհվույն դեմ հարուցված ամբաստանության ընթացքը խափանեց, Միդհատ փաշայի և ընկերաց դեմ Աբդուլ Ազիզի անունով վարած դատին մեջ»[104], և, ինչպես կգրե այլուր, «որչափ ալ բարձրագույն հաճույքը հակառակը կփափագեր»[105], այսինքն հակառակ Սուլթանի կամքին։

Կարկառուն դեմքերու կարգին, որոնք Օրմանյանի ժողովականներն եղան, Գաբրիել էֆենդի Նորատունկյանն ալ կար, որ այն օրերուն Բարձրագույն դռան իրավագետ խորհրդականն էր, և որ, «Հուրրիեթ»-ի շրջանին, Սայիդ և Քյամիլ փաշաներու դահլիճներուն ալ պիտի մասնակցեր իբր հանրօգուտ շինությանց և արտաքին գործերու նախարար։ Լուրջ, խոհեմ և զգուշավոր մարդ էր Նորատունկյան, հեռու վեճերե և ելույթներե, ու կրնար հարմարիլ ամեն վարչակարգի։ Օրմանյան որևէ ակնարկություն չունի անոր կատարած դերին իբրև ժողովական կամ գործակից, թեև Արթին փաշայի մահեն հետո ատենապետած ըլլա Քաղաքական ժողովին։ Եթե

102 «Հոհք և խոսք», էջ 430։

103 «Ազգապատում», Դ, էջ 5149։

104 Անդ, էջ 5366։

105 «Հոհք և խոսք», էջ 433։

Օրմանյանի նախագահության տակ գործող ազգային վարչություններուն մեջ աչքառու դեր չունեցավ, սակայն զգալի եղավ իր գործունեությունը իբրև ատենապետ զանազան ազգային հաստատությանց, որպիսիներն էին Սանասարյան վարժարանի խնամակալությունը և Հովսեփ Իզմիրյանց գրական մրցանակի հանձնաժողովը։ Ինչպես հայտնի է, «Հուրրիեթ»-են հետո Ազգային երեսփոխանական ժողովի ատենապետությունը վարեց պահ մը, առանց գործոն մաս առնելու ազգային գործերու մեջ, և տարիներ ետքն էր միայն, երբ արդեն Թուրքիայեն ստիպված էր հեռանալ և Թուրքերեն հոգեպես խզվիլ վերջնականորեն, գործոն մասնակցություն պիտի բերեր հայ կյանքին, ըլլա Ազգային պատվիրակության, ըլլա Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության մեջ։

Օրմանյանի շրջանի մարդոց մասին խոսած ատեն չենք կրնար բացառություն շընել ուրիշ անձնավորության մը ալ, Աբիկ Ունճյանին, ժողովուրդին «Աբիկ էֆենդի»-ն, որ ամբողջ կյանք մը, իր երիտասարդութենեն մինչև իր սպանությունը 1905-ին, տքներ էր կարկառուն դիրքի մը հասնելու համար գործի ասպարեզին մեջ, իր մտքեն ու սրտեն պահիկ մը չհեռացնելով սակայն իր ժողովուրդը։ Ամենեն ժրաջան անդամներեն մեկն էր եղեր Սովելոց հանձնաժողովին, տալով ու տալ տալով հայ ժողովուրդի բացառիկ կարիքներուն համար, մեկն էր եղեր հիմնադիրներեն և երկար տարիներ հոգին իսկ Արմաշի դպրեվանքին, իսկ Օրմանյանի պատրիարքության տարիներուն, հակառակ նոր ազատված ըլլալուն բանտեն, Արմաշի հոգին մնացեր էր միշտ։ Բայց ինչ որ Աբիկ էֆենդին հատկանշեց իր բովանդակ կյանքին մեջ, իր համեստությունն էր ու մութին մեջ մնալու տենչը, նույնիսկ երբ ինք ստանձնած կըլլար գործի մը ամբողջ նյութական ու բարոյական բեռը։

Օրմանյան սապես կընութագրե Աբիկ էֆենդին. «Առանձին հիշատակության արժանի է Աբիկ Ունճյան, նշանակալից տիպար մը, կարողությամբը, բարերարությամբը, վարչականությամբը, նախանձահուզությամբը և եկեղեցասիրությամբը։ Ազգային ամեն ծառայությանց մասնակցեցավ, սիրեց ամեն գործոց միջամտել, բայց խորշելով խորշեցավ վարիչ և գլխավոր երևնալե, բավականացավ պարզ անդամակցության անունով, թեպետ աշխատությանց առաջնակարգ բեռը սիրով ստանձնեց։ Կրնանք համարձակ ըսել, թե չեղավ Ազգին մեջ գլխավոր գործ մը, որուն Ունճյան մասնակցած չըլլա. բայց իր մեծամեծ արդյունքներն եղան 1879-ին սովելոց նպաստող հանձնաժողովը, 1889-ին սկսած Արմաշու դպրեվանքը, և Սկյուտարի Ս. Կարապետ եկեղեցվո հրկիզութենե ետքի շինությունը, սակայն հանձնաժողովներուն մեջ պարզ անդամակիցն ավելի անուն չուներ, թեպետ ձեռնարկներուն հոգին էր, անխոնջ աշխատող, ժամանակը զոհող, և առատաձեռն նպաստող։ Ազգային կացության և ապագային բարվոքման խնդիրն ալ զինքն անտարբեր չգըտավ, այնպես որ այդ երեսեն բանտարկության և դատապարտության ալ ենթարկվեցավ հալածանաց ժամանակ»[106]։ «Միայն անխոհեմ ձեռնարկներե զգուշավորությունը և կուսակցական բռնադատությանց չհպատակիլը դավաճան ձեռքեր քաջալերեցին իրեն կյանքին չխնայելու և սպանության հանդգնեցան 1905 օգոստոս 13/26-ին, Ղալաթիոյ հրապարակին վրա»[107]։

***

Օրմանյան, բացի ժողովականներեն, իր շուրջը ուներ մարդիկ ալ, որոնք անհրաժեշտ էին իրեն պետական շրջանակներու տրամադրությանց տեղյակ մնալու և ըստ այնմ իր դիրքը ճշտելու համար իր պաշտոնական դիմումներուն առթիվ։ Այդ անձերեն մեկը Ռոբերտ Յաղբճյանն էր, որուն մասին Օրմանյան հատուկ հատված իսկ կնվիրե իր «Խոհք և խոսք»-ին մեջ։ Ըսեմ անմիջապես, որ «Ռոբերտ էֆենդի»-ն ես ալ ճանչցած եմ մոտեն, նախ երբ Սսայան դպրոցը կհաճախեի ես և ինք Բերայի թաղականության ատենապետն էր, այսինքն երբ «աղա»-ն էր Բերայի, դիրք, զոր այնքան կվայելեցներ, մանավանդ շնորհիվ պետության մեջ իր ունեցած պաշտոնին, «բալա»-յի աստիճանին և իր կապերուն Համիդի առաջին քարտուղար Թահսին փաշայի հետ։ Օսմանյան «Հուրրիեթ»-ը զինքն ալ իր գահեն ձգեց 1908-ին, ինչպես Համիդի շուրջը հածող բոլոր դեմքերը։ Խույս տվավ ան Բեռլին, ի բացակայության դատվեցավ և դատապարտվեցավ, բայց ի վերջո ներման արժանացավ 1911-ին։ Ավելցնեմ, որ իր ոչ մեկ հայավնաս քայլը ապացուցվեցավ, երբ «Հուրրիեթ»-են հետո մաղե անցան համիդականները. ընդհակառակը, Ռոբերտ էֆենդին կրցավ հավաստել, թե հաճախ օգտակար ալ եղած է Օրմանյան պատրիարքին, իր փափսացած լուրերով ու թելադրություններով։ Հետո ես իրեն հանդիպեցա Բուրքրեշ, ուր եկեր էր քաշկրտտել իր ծերությունը. այդ առթիվ էր, որ ան ինձ իր հուշերը թելադրեց։

Օրմանյան ինքն ալ կըսե, թե Ռոբերտ էֆենդին թեև շատերու աչքին կասկածելի կթվեր իր ունեցած կապերուն համար, բայց ան «կանուխեն տնական բարեկամ ու ինձի անկեղծ

[106] «Ազգապատում», Գ, էջ 5369։

[107] «Խոհք և խոսք», էջ 432։

տարյացակամ մը եղած ըլլալով, օգտակար ըլլալու իրձ ու կամք ուներ, որով յուր տեղեկութիւններեն ու փափագված տեղեկութիւններեն մեծապես կօգտվեի ես՝ իմ ձեռնարկներու ատենն ու կապը ճշտելու, և կամ կարևոր տեղեր թելադրութիւններ հաղորդելու համար։ Օրմանյան կհավատամ ի վերջո, թե Ռոբերտ Յազրճյան Ազգին վնասակար ձեռնարկ մը երբեք ըրած չէ, իսկ իրեն, իր պաշտոնին ու իր գործերուն համար «հավատարիմ և անկեղծ օգնական մը եղած է»[108]։

***

Քանիներ կային սակայն Դռան մարդոց մեջ, որոնք շատ ավելի հայրենասեր էին և շատ ավելի հավատարիմ հայ ժողովուրդի շահերուն, քան շատերը գիշեր ցերեկ «Ազգին համար» կուրծք ծեծողներեն։ Ճիշտ է, անոնցմե շատերը համառ պահպանողականներ էին, իրենց ազգասիրությունը հաճախ դուրս չէր գալեր ժամուն բակեն, բայց հոգիով միշտ հեռու կմնային անկե, միշտ վերապահ և զգույշ, և նույնիսկ զայն չէին մտցներ իրենց հարկեն ներս։ Շատերը պետական հայ մարդոցմեն ազգային մարմիններու անդամ ալ էին, իբրև երեսփոխան կամ ժողովական։

Ճիշտ է, որ Դռան հայ պաշտոնյաներեն բոլորը միևնույն զգացումներով չէին կապված իրենց Ազգին հետ։ Տատյան Արթին փաշայի կողքին, որ տասնյակ տարիներ Թուրքիո արտաքին քաղաքականությունն էր վարած, Յըլդըզի վստահությունը առանց օր մը կորսնցնելու, և որ սակայն պահ մը մտքեն չէր հեռացուցած Ազգին շահերը ևս, կար Գազազյան Հակոբ փաշան ալ, ելևմտական նախարար, որ Թուրքիո շահեն զատ բան մը մտածելու ատեն իսկ չէր թողուր իրեն։ Միքայել փաշայի կողքին, որ կայսեր անձնական գանձին նախարարությունը կվարեր և որ հայրենասիրության ամբողջ թափը պարպեց «Եղիշեի Վարդանանց պատերազմ»-ին նվիրված այնքան թանկագին ուսումնասիրության մը մեջ, Հովհաննես Նուրյանն ալ կար, որ հայ ժողովուրդը ապերախտ կհռչակեր Համիդի շնորհներուն։

Բարձրագույն դռան մարդոցմեն անցնելով հայ աղաներուն, անոնց, որ իրենց դրամին ուժով դիրք գրաված էին Ազգին մեջ, պատկերը նույնն էր։ Անոնց մեջ ալ կային անշուշտ իրենց ժողովուրդին սրտով կապված մարդիկ, որոնք հաճախ վիհանձնության վայրկյաններ ալ կունենային բացառիկ կարիքներու առջև. բայց ադոնց կողքին մեծ թիվ մը կկազմեին նաև անոնք, որոնք պարարտացած փորով ու դրամարկղով, «զոհողությունը» կընեին կիրակիե կիրակի եկեղեցի գալու ու վարելու ժամուն գործերը, վախնալով իրենց դրամարկղը բանալ, բայց Ազգին ծառայած ըլլալու միամիտ գոհունակությամբ, ուրիշ փառք չունենալով, բայց եթե թերթերու մեջ հիշատակվիլ և իրենց դիմացը բարև կեցնել թաղին տիրացուն ու վարժապետը։ Երբեմնի հայ ամիրաներն էին, իրենց տարազը փոխած։

Հայ հարուստին հետ խոսելու համար մասնավոր ճարտարություն պետք էր, իսկ Օրմանյան կերևի թե ուներ այդ ճարտարությունը։ Ճիշտ է, որ բացառիկ կտակներ և նվիրատվություններ չեղան իր պատրիարքության տարիներուն. բայց եղածներն ալ մեծ մասամբ իր նախաձեռնության արդյունքն էին։ Իր օրով էր, օրինակ, որ Պոլսո Ազգային հիվանդանոցը օժտվեցավ երկհարկանի երեք թևերով,— երեք հարկաբաժիններ, որոնք կառուցվեցան Մաթոս և Աբիկ Ունճյան, Միքայել և Հովհաննես Հակոբյան, և Պատրիկ ու Գալուստ Կյուլպենկյան հարազատներու կողմե, ու կրեցին անոնց անունը։

Օրմանյան չկրցավ միայն ծունկի բերել «Օրհնյալ գերդաստան»-ը։ Կակնարկենք Գարակյոզյան կտակին, որուն տասնյակ տարիներ չկրցավ տեր կանգնիլ Ազգը, որովհետև կտակարարին ժառանգորդները չկամ դուրս եկան, և տարիներով չհոժարեցան Ազգին տրամադրել կտակված գումարը, բարեբարի տիտղոսը կորզած պահելով սակայն, այսինքն ուզելով միշտ մնալ «Օրհնյալ գերդաստան»-ը, ինչպես կանմահացնե Արփիար Արփիարյան դասական դառնալու սահմանված երգիծական գեղեցիկ կտորի մը մեջ, ուր Օրմանյան ևս կերևա այն պատրիարքներու շարքին, որոնց օրով Ազգը չէ հաջողած տեր դառնալ կտակին, մինչ «Օրհնյալ գերդաստան»-ը շարունակած է տեր մնալ իր հավիտենական տիտղոսին։ Ճիշտ է իսկապես, որ Օրմանյան ևս չկրցավ Գարակյոզյաններու համառության հաղթել, չնայելով, որ իր նախագահած Ազգային վարչության անդամներուն մեջն էր անոնց ամենեն կամակորը՝ Գրիգոր Գարակյոզյան։ Արփիարյան չէր կրնար գուշակել սակայն, որ նույնինքն Օրմանյանի պիտի վիճակեր տարիներ հետո, երբ այլևս պատրիարք չէր, Գարակյոզյաններեն բան մը փրցնել Ազգին, ու անոնց կանգնել տալ Գարակյոզյան որբանոցը Շիշլիի բարձունքին վրա։ Ազգին ակնկալություններեն դուզն մաս մըն էր միայն, որ Ազգին կուգար։

***

Հոգևորականները, որոնք կշրջապատեին Օրմանյանը իր պատրիարքության օրերուն,

108 «Խոհք և խոսք», էջ 183։

Կրոնական ժողովի անդամներն էին առավելապես, թեև Պոլսո մեջ իր օրով բարձրաստիճան հոգևորականներու պատկառելի թիվ մը կար։ Կրոնական ժողովի անդամները, գոնե անոնք, որ Պոլիս կմնային, բացառիկ հեղինակություններ չէին սակայն Օրմանյանի օրով, և անոնցմե շատերը միայն թիվ կլրացնեին։ Իսկ այդ թիվն անգամ տակավ կպակսեր, որովհետև մեռնողներ և երկրեն մեկնողներ կըլլային, իսկ անոնց տեղ նորեր ընտրելու հրաման չկար։

Պոլիսը, ինչպես ըսինք, լեցուն էր սակայն հոգևորականներով։ Անոնց մեկ մասը Պոլիս կմնար հարկադրանքի տակ։ Համիդ չէր ուզեր, որ գավառները պտտին իր կասկածած մարդիկը։ Եթե Իզմիրլյան ու Խարախանյան Երուսաղեմ կապրեին իբրև աքսորական, Պոլիսն ալ ուներ իր աքսորական եպիսկոպոսները, ինչպես Գրիգորիս Ալեքթճյանը, Մկրտիչ Վեհապետյանը և Եզնիկ Ապահունին։ Տեսակ մը աքսորական ալ Բաբգեն Կյուլեսերյան, Հակոբ Շահպաղլյան և Ներսես Դանիելյան վարդապետներն էին։

Եվ սակայն որևէ բարձրաստիճան հոգևորական չկար Պոլսո մեջ, որ կարենար շուք ձգել որևէ կերպով օրվան պատրիարքին վրա։ Հին օրերու իր հմայքը շալկած՝ Մելքիսեդեկ Մուրադյան Իզմիր քաշված էր, ուր և պիտի մեռներ քիչ հետո, Դուրյան Արմաշ կմնար և անկե ի վերջո Իզմիր պիտի անցներ ուղղակի, առանց Պոլսո մեջ որևէ դեր ունենալու, Խորեն Աշըգյան և Բարթողիմեոս Զամիշյան, ստվեր մը առանձնացած, կաշխատեին մոռցվիլ, Գրիգորիս Ալեքթճյան ծվարած էր Սկյուտար, Համիդին վախեն, ինչպես որ մեյ-մեկ կողմ ծվարած էին Եզնիկ Ապահունին և Մկրտիչ Վեհապետյանը, իրենք ևս վախնալով լույսին երևալե։ Անդին, խոր ծերության մեջ, հաշվի չէր առնվեր այլևս Մեսրոպ արքեպիսկոպոս Սուքիասյանը, իսկ Տիմոթեոս Սափրիչյան, հերոսը ատենին Եթովպիա ղրկված առաքելության, իր ծերությունը քարշ կուտար Ազգային հիվանդանոցին մեջ։ Հրապարակին վրա կտեսնվեին Վահրամ Մամկունին և Հմայակ Դիմաքսյանը միայն, որոնք սակայն վաղուց կորսնցուցած էին իրենց հմայքը և Գրիգորիս Հովհաննեսյանը, որ հմայք երբեք ունեցած չէր։ Կար ու չկար Գեորգ Երեցյանը կար միայն, որ իր արտաքինով ու խոսքի ճարտարությամբ կփորձեր ավելի շատ Նարպեյը հիշեցնել, և որ իր շուրջը համբավ ալ կրցած էր ստեղծել։

Արտասովոր դեմքեր չկային Պոլիս մնացած վարդապետներուն մեջ ալ։ Բացի անոնցմե, որոնք ստիպված էին պատյանը մնալ, ինչպես էին Բաբգեն Կյուլեսերյանը, Հակոբ Շահպաղլյանն ու Ներսես Դանիելյանը իբրև արքունիքին աչքին փուշ, ինչպես հիշեցինք, հին օրերեն մնացած խլյակներու թիվ մըն ալ կար, ինչպես Վահան Պարտիզակցին, ծանոթ իր բանասիրական երկերով և երգիծական առակներով։

Փոխարեն՝ քահանաներու մեջ պատկառելիները կային։ Այդ կարգեն էր Հովհաննես Մկրյանը, հմուտ ու բանասեր, որ պատրիարքական փոխանորդությունն էր վարած Խրիմյան ու Վարժապետյան պատրիարքներու օրով և որուն ետևեն շուք մը կքալեր երբ եկեղեցի կմտներ. Սահակ Տեր Սարգիսյանը, որ հեղինակն էր «Քննական կրոնագիտության» մը և որ ուսուցիչ էր հիմա Կեդրոնականի մեջ. Խորեն Փեհլիվանյանը, որ նույնպես հեղինակ էր կրոնական գրքերու, առանց հիշելու այն պատվական քահանաները՝ Հուսիկ Քաջունին և Վահան Խոյանը, զորս Համիդ գավառեն ձերբակալեր Պոլիս էր բերեր։

Բարեբախտ էր Օրմանյան, որ ատեն-ատեն իր սաներով կլեցվեին պահ մը Պոլսո հայ եկեղեցիները։ Արմաշականներ միշտ ալ կըլլային Պոլսո մեջ և զանոնք թաղերը քարոզիչ կղրկեր Օրմանյան։ Ամեն անգամ, որ անոնք Արմաշեն կմեկնեին գավառ, կամ Պոլսեն կանցնեին մեկ թեմեն մյուսը փոխադրվելու համար, պատրիարքը ատեն մը քովը կպահեր զանոնք, որպեսզի քիչ մը թարմություն մտնե եկեղեցիներու մեջ։ Անոնցմե երկուքը մշտապես մոտն էին արդեն իբր քարտուղար, և միևնույն ատեն քարոզչության պաշտոն ունեին տարբեր եկեղեցիներու մեջ։

***

Ամբողջացնելու համար Օրմանյանի շրջապատը, պահ մը մտնենք Պատրիարքարան ալ։ Օրմանյանը, ասան ձեռք առած ատեն, հմտաստ մարդիկ գտեր էր շուրջը. ոմանք փորձառությամբ օժտված, բայց մգլոտած էին ա՛լ. ուրիշներ զուրկ էին որևէ ձեռնհասությենե. կային այ, որոնց վրա ուղղակի հսկել պետք էր։ Հրաշք պիտի ըլլար, այս կազմով, կառքը քշել։ Օրմանյանի ձեռնհասությունը և կորովը պետք էր ունենալ, որպեսզի շարժման մեջ մտնեին այս բոլորը, ոմանց ծերությունը զգալի չըլլար, ուրիշներու ապիկարությունը։ Այնպիսի մեկը պետք էր գործի գլուխ դար, որ ինքը տեսներ շատերուն գործը և աշխատանք մը հնարեր ամեն մեկուն համար, մինչև որ օր մը հաջողեր թարմություն մտցնել շուրջը։

Գաբրիել եպիսկոպոս Ճեվահիրճյանը, զոր Օրմանյան իբր պատրիարքական փոխանորդ ժառանգեց իր նախորդներեն և զոր քովը պահեց միշտ իր պատրիարքության ամբողջ

տեղողությանը, պարզ խրտվիլակ մըն էր դերականին մեջ, ճիշտ Եղրաս վարդապետին պես, որ «ժամօրհնող» տիտղոսը կկրեր և դուրիշ պարտականություն չուներ, բայց եթե Ալի հեծած երթալ Օրմանյանի կառքին առջևին պատրիարքական ասան ի ձեռին։ Պոլոր թաղերը կճանչային զինք, բայց ոչ ոք ձայնը լսած էր։

***

Իսկ պետական պաշտոնատուներու հետ հարաբերություն պահելու համար Պատրիարքարանը իր հատուկ պաշտոնյան ուներ, իր գործակատարը կամ գործակատարները, կամ, Թուրքերեն իրենց կոչումով «Քափու-օղլանի»-ն։ Քիչերը միայն սակայն իրենց պաշտոնին մարդն էին եղեր, ոմանք ապիկար եղեր էին, ուրիշներու ներսը պակսած էր հայը։ Օրմանյան իր հուշերը գրած ատեն, Արիս Ֆեսճյանին միայն բացառություն կընե. անոր վրա միայն վստահություն ունեցեր էր։

Հիմա, որ քիչ թե շատ ճանչցաք Օրմանյանի շրջապատը, համարձակեցեք դեռ ըսել, թե ինքնագլուխ գործեց ան հաճախ պատրիարքության իր տասներկու տարիներուն...։

6. ԵՐԲՈՐ ՀՈԳԻՆ ԿԽԱՄՐԻ

Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիները այլապես ալ դժնդակ պահեր էին հայ ժողովուրդին համար։ Համիդի 32 տարվան միահեծան իշխանության ամենեն արգահրուելի շրջանն էր, և բովանդակ երկիրը խամրած էր հոգեպես։ Հայ կյանքը, որոր ոգևորության շրջան մը կրցեր էր ապրիլ քանի մը տասնյակ տարի, հիմա ինքն լաալ կհեծեր գալանի մը ճիրաններուն մեջ։

Հայ թատրոնը չքացեր էր իսպառ. հայ գրաբառը շատոնց չէր լսվեր բեմեն. ով որ կըրցեր էր Կովկաս անցնիլ, բախտավոր էր եղեր, ինչպես Սիրանուշը. ով որ մնացեր էր, ստիպված էր խամրիլ թուրք բեմին վրա, Մնակյանին պես։

Հայ մշակութային ընկերություններ վաղուց է չկային. հողն էին մտեր Միացյալը, Ազգանվերն ու Դպրոցասերը։

Հայ հոգին շնչելու տեղ մը չուներ, և թաղերը դպրոցական հանդեսներուն կոպասեին տարին անգամ մը, որպեսզի պահ մը թարմանան։

Պոլսո հայ մամուլը ևս փայլուն մակարդակի մը վրա չէր Օրմանյանի պատրիարքության տասներկու տարիներուն։ Ի՞նչ, մակարդակ կարելի էր սպասել մամուլի մը, որուն վրա աչքը չորս բացած կհսկեր գրաքննությունը, և որ ստիպված էր առիթը չփախցնել աղոթելու «Վեհափառ Սուլթանին արևշատության համար»։

Օրմանյանի շրջանին չորս հայերեն օրաթերթեր լույս կտեսնեին Պոլսո մեջ՝ «Մանզումեի էֆքյար»-ն ու «Սուրհանդակ»-ը՝ առտուները, «Բյուզանդիոն»-ն ու «Արևելք»-ը՝ իրրև երեկոյան թերթ, առանց հաշվելու «Ճերիտեի շարքիե»-ն, որ լույս կտեսներ հայատառ Թուրքերեն։ Պետք է ըսել, որ ասոնցմե «Բյուզանդիոն»-ն էր միայն, որուն տերն ու խմբագիրը միևնույն անձն էին. մյուս թերթերը կհրատարակվեին հայ գիրին հետ հեռվին կամ մոտեն կապ չունեցող մարդոց կողմե, իսկ իրենց խմբագիրները պատահական դեմքեր էին, որոնք միշտ կփոխվեին, հաճախ դիպվածով մամուլին մեջ իջած մարդիկ ըլլալով անոնք և։ Խմբագրությանց ծոցին մեջ կային անշուշտ իրենց խիղճը պահած մարդիկ ալ, բայց անոնց վիճակված էր առավելապես սև աշխատանքը, և իրենց ստորագրությունը չէր տեսնվեր ամիսներով, և ան ալ բոլորովին անվնաս նյութերու տակ։

Ճիշտ է, Կեդրոնական վարժարանի գրասեղաններեն դեռ նոր բաժնված խանդավառ տղոց խումբ մը ևս լրագրության ասպարեզ իջած էր արդեն և տեղ մը ճարած չորս օրաթերթերեն ամեն մեկուն մեջ, բայց դեռ ան ի վիճակի չէր իր դերը զգացնելու, զբաղած, ավելի շատ, գրական մարդանքներով կամ առօրյա պզտիկ նյութերով։

Եթե չհաշվենք «Բյուզանդիոն»-ը, ուր կհասկնային Օրմանյանը, և «Արևելք»-ի վերջին քանի մը տարին, երբ զայն կխմբագրեր դոկտ. Հակոբ Թոփճյան, մամուլը բարյացակամ չէր առհասարակ դեպի Օրմանյանը, թեև բոլոր թերթերն ալ անոր պատարագներուն ու քարոզներուն կվազցնեին իրենց խմբագիրները։ Իրենց այդ անբարյացակամ վերաբերմունքը կերևար անուղղակի խայթերու և հեռավոր ակնարկությանց մեջ միայն, ապա թե ոչ այն օրերու մամուլին կպակսեր պատրիարք մը քննադատելու ուժը։ Փոխարեն՝ թերթերե ոմանց անբարյացակամությունը ավելի որոշ կերևար օրմանյանական կարծված հոգևորականներու մասին անոնց գրածներուն մեջ։ Իր ձեռնասուններր խծրծելով կկարծեին պատրիարքն իսկ թիրախ առած ըլլալ։ Բարգեն վարդապետ, օրինակ, որ Մուշեն Պոլիս բերել տված էր Համիդ իբրև տեսակ մը աքսոր և որ Օրմանյանի ձեռնասունը կկարծվեր, հաճախ նշավակ էր խայթերու։ Մուշի առաջնորդարանին հետ կապված քանի մը

հարյուր տսկիի հարցը, որ «Հուրրիեթ»-են հետո միայն պիտի պարզվեր, ակնարկութիւններու առարկա էր հաճախ։ Այդ ակնարկութիւններով Բաբգենը կկարծեին հարվածել և հանձին Բաբգենի՝ նույնինքն Օրմանյանը։

Հայ գրականությունը, այնքան անուշ ճիգեր փորձելե հետո պահ մը, կասած էր իր հուսատու թափին մեջ։ «Հայրենիք»-ի սերունդը փախած էր երկրեն, իր շունչն ալ առնելով տանելով մեկտեղ։ Արտասահման էին Արփիարյան, Բաշալյան, Օտյան, Զոպանյան։ Հետզհետե երկրեն մեկնած էին Զարդարյան, Որբերյան, Զապել Եսայան ևս։ Եվ արտասահմանի մեջ է, որ ծիլ կարձակեր արևմտահայ գրականությունը։ Հայ կյանքեն հեռու կհասուննային արևմտահայ քերթողության երեք փառքերը՝ Թեքեյան, Սիամանթո, Վարուժան, և արձակի երկու վարպետներ ալ՝ Պարթևյանն ու Երուխանը։ Ասդին, Մելքոն Կյուրճյան աքսորի մեջ էր, իսկ հին սերունդեն անոնք, որ մնացեր էին փշալարերեն ներս, ինչպես Զոհրապ, Դուրյան, Սիպիլ, Եղիա, Թլկատինցի, Մրմրյան, Պերպերյան, հաղիվ երբեմն կերևային պարբերականներու մեջ։ Երիտասարդ սերունդը, ճիշտ է, ճիգեր կփորձեր, բայց ոմանք խամրելու համար շուտ մը, ուրիշներ անդոր՝ իրենց հուզումները պոռթկալու լրիվ։ Այդ սերունդին մեջ հաղվադեպ եղան բախտավորները, ինչպես Զրաքյանն ու Մեծարենցը, որոնք կրցան, ցմիշտ խամրելե առաջ, իրենց ներսեն հնչ մը թողուլ։

Գրական համեստ թերթեր անշուշտ կային, ինչպես «Մասիս»-ը Պոլսո և «Արևելյան մամուլ»-ը Իզմիրի մեջ, և թերթեր ալ, որոնք ատեն-ատեն գրական կերպարանք կառնեին, ինչպես «Մաղիկ»-ն ու «Լույս»-ը, և մասամբ ալ «Բյուրակն»-ը և «Հանրագիտակ»-ը. բայց բոլոր ասոնք պզտիկ օվասիսներ էին միայն տոթակեզ անապատին մեջ, ուր ամեն ինչ կխամրեցներ խորշակը։

Գրքեր դիպվածով միայն լույս կտեսնեին։ Թերթերու բացառիկ թիվերն էին լոկ, որ տարին անգամ մը քանի մը գրական էջ կհրամցնեին։

Տարին անգամ մը բերանփոխ կփորձեին դառնալ տարեգիրքերն ալ՝ գրական էջեր ևս տալով։

***

Առավելապես Օրմանյանի նախաձեռնության արդյունքն եղան Ազգային հիվանդանոցի «Ընդարձակ օրացույց»-ները, որոնք տեսակ մը տարեգիրք հանդիսացան 1900-են սկսյալ, և որոնց ինք ևս իր գործոն աշխատակցությունը բերավ ամեն տարի մեյ-մեկ մաս հրատարակելով իր «Միսական բառարան»-են և նաև վիճակագրական այլազան նյութեր։

Նմանապես իր դերը ևս կար քարոզներու մրցումին մեջ ալ, որ տեղի ունեցավ Հովհաննես Թավշանճյանի նյութական ձեռնտվությամբ և հատորին մեջ, ուր ամփոփվեցան մրցանակի արժանացած քարոզները։ Այդ մրցումին պիտի հաջորդեր իր տեսակին մեջ եղական մրցություն մը ևս դարձյալ միևնույն անձնավորության նպաստով,— հակալքոլական մրցումը։

Եվ վերջապես Օրմանյան ինքն իսկ նախաձեռնեց «Լույս» կրոնաթերթը, որ լույս տեսավ Պոլսո մեջ 1905—1906-ին, Բարգեն ծայրագույն վարդապետ Կյուլեսերյանի խմբագրությամբ, և որուն ինք ևս լայն մասնակցություն բերավ, Եղիշե եպիսկոպոս Դուրյանի և արմաշական վարդապետներու կողքին, հոն հրատարակելով, ի միջի այլոց, կարևոր մասեր իր «Համապատում»-են։

Օրմանյանի փորձերը՝ ավիշ ներարկելու համար գոսանալ սկսող կոճղին, ընդունայն ճիգեր էին միայն։

Պզտիկ կայծկլտուքներ էին այն մեծ խավարին մեջ, ուր ապրեցավ հայ միտքը Համիդի տիրապետության վերջին տասնամյակին, ջլատվելով ու չքանալով տակավ։ Քանի մը կաթիլ, անծայրածիր անապատի մը մեջ։

***

Կրթական գործը, Օրմանյանի օրով, համեմատաբար նվազ տխուր էր։ Այդ շրջանին միջնակարգ երեք հայ վարժարաններ կային Թուրքիո մեջ, Կեդրոնականն ու Պերպերյանը՝ Պոլիս, Սանասարյանը՝ Կարին, առանց հիշելու անշուշտ հայ կաթոլիկ կրթարանները, ինպես և ամերիկյան կոլեջները, ուր առավելապես կուսանեին հայ տղաք։

Հրաշքի պես բան մըն էր ոտրի վրա պահել Կեդրոնականը։ 1896-ի արյունալի դեպքերեն հետո, կարճ ընդհատում մը միայն ունեցեր էր և կրցեր էր բացվիլ իսկապես բանիբուն խնամակալության մը ջանքերով, պաշտոնական շրջանակներու կասկածը սակայն միշտ իր վրա, և լրտեսներու անմիջական հսկողության տակ։ Օրմանյան, որ անոր դասախոսներեն մեկն էր նշած ատենին, և դպսախոսական իր այդ կարճ շրջանը միշտ կհիշատակե Ճեմարանի և Արմաշի տարիներուն հետ մեկտեղ, իր գուրգուրանքեն չհեռացուց Կեդրոնականը սյատրիարքության տարիներուն ալ, ինչպես պիտի չհեռացներ Ղալաթիո եկեղեցին ալ, ուր քարոզչություն էր ըրեր Հայ Եկեղեցվո գիրկը դառնալեն անմիջապես հետո։ Կեդրոնականը Օրմանյանի նախաձեռնության կպար-

...ի, օրինակ, դոկտ. Հակոբ Թոփճյանի ու-...ցչության քանի մը տարին։ Պետք է ըսել, ...որ լուրջ պատրաստությամբ այս մարդը, որ ...մանանշան բան մը պիտի դառնար «Հուր-...»-ի տարիներուն, Կեդրոնականի մեր ...ուշակերտության ատեն իսկապես նոր շունչ ...մը բերավ հայ մատենագրության իր դաս-...ընթացքով,— գիտական նոր հետազոտու-...ության շունչը հայ անցյալին մասին։

Այնպես որ, 1896-ի դեպքերեն հետո որևէ ...մոնդհատում չկրեց Կեդրոնականը, բայց բա-...ուրդաւոր ճիգեր պետք եղան, որպեսզի դայն ...դաշարունակել կարելի ըլլա, ինչ որ Օրմանյա-...ի նախագահած վարչության հաղթանակ-...ներեն մեկը պետք է համարել, այնպիսի ...պահու մը, երբ Կեդրոնականը աչքի փուշն ...էր դարձած համիդյան տխրահռչակ վարչա-...կարգին։

Պերպերյան վարժարանի հանդեպ նա բա-...ուրդաւոր եղավ իր ցույց տված հոգածությու-...ները։ Համոզված այն բարերար դերին, զոր Մեթեոս Պերպերյանի անհատական նախա-...ձեռնությամբը ստեղծված այս կրթարանը ...ունեցած էր և կշարունակեր ունենալ հայ ...կյանքի մեջ, ազգային զույգ կրթական հաս-...տատությանց՝ Կեդրոնականի և Սանասար-...յանի կողքին, Օրմանյան իր գուրգուրանքը ...մանապես ըրավ նաև Պերպերյան վարժա-...նարանի վրայեն. նախ՝ անոր ծընև գտնված ...ջրջանին, 1896-ի դեպքերեն հետո, երբ ...հարմարություններ ստեղծեց, որպեսզի Պոլ-...սո մեջ վարժարանը չփակվի. հետո՝ հո-...դրելյան մը կազմակերպելով անոր 1901-ին, ...հոբելյան, որ առաջին մեծարանքն էր արև-...ելյան մըտահայության մեջ կրթական վաստակ-...ավորի մը հանդեպ. վերջապես՝ մեծ դաս-...տիարակին մահեն հետո 1907-ին, երբ ա-...մենեն ճիգ ըրավ, որպեսզի կանգուն մնա ...դպրոցը, մինչև որ անոր զավակներն ի վի-...ճակի ըլլան դպրոցին ղեկն ստանձնելու ...իրենց ձեռքը։

Սանասարյանը բավական հեռուն էր իր ...անմիջական հոգածության առարկա դառ-...նալու համար։ Բայց հաստատություն մը, ...որուն ստեղծման և բարգավաճման զորա-...վիգ էր եղած Կարնո իր առաջնորդության ...ատեն, և որուն առաջին տարիներու կեն-...սունակության ինքն իսկ աջակցած էր, չէր ...կրնար իր պատրիարքության տարիներուն ...ևս աչքե հեռու պահել, մանավանդ որ Պոլ-...սո մեջ էր անոր խնամակալությունը իր իսկ ...անմիջական հսկողության տակ։ Այդ հոգա-...ծությունը այնքան ալ դյուրին չէր ցույց ...տալ հեռվեն, երբ մանավանդ դպրոցը թա-...տերաբեմ սկսած էր դառնալ ներքին վե-...ճերու, իր բնականոն ղեկավարությունը ան-...հնար դարձած ըլլալով եռապետության պայմաններուն մեջ, այսինքն երեք տնօրեն-ներու՝ Հովսեփ Մատաթյանի, Գևորգ Արոզ-յանի և Կարապետ Սողիկյանի, որոնք թեև բարերարին կտակովն իսկ նվիրագործված, երկու տասնյակ տարիներու գործակցութե-նե մը հետո, անընդունակ սկսած էին դառ-նալ դպրոցը իր վարկին մեջ պահել համե-րաշխ գործակցությամբ մը։ Այնպես որ կեդրոնը ստիպված էր ինք միջամտել բնա-կան պայմաններ ստեղծելու համար Սանա-սարյանի մեջ, Պոլսեն ղրկելով նոր տնօրեն մը հանձին Զաքարյանի, որ իր աչքերը կփակեր 1907-ին, Կարնո մեջ, հազիվ սկսած իր առաքելության։ Դպրոցը պիտի քաշքշ-վեր այսպես թե այնպես մինչև «Հուրրիեթ», այս անգամ թատր հանդիսանալով տար-բեր վեճերու և հուզումներու, որոնք, սակայն, այս էջերուն սահմանեն դուրս կմնան բնա-կանաբար։

Բացի Կեդրոնականեն, որ 1907-ին 106 աշակերտ ուներ և 25 ուսուցիչ, Օրմանյանի օրով 40 ազգային վարժարաններ կային Պոլսո 40 թաղերուն մեջ։ Այդ վարժարան-ները հաճախող աշակերտության թիվը, որ 3765 էր 1897-ին, 1907-ին բարձրացած էր արդեն 5617-ի։ Թաղային այդ վարժարան-ներու ամբողջ ուսուցիչներուն թիվը, որ 199 էր 1897-ին, հետզհետե աճելով բարձրացած էր 283-ի։

Ազգային վարժարաններ հաճախող սույն աշակերտներեն զատ, շուրջ 1500 հայ տղա-ալ կհաճախեին պետական, օտար և մաս-նավոր հայ վարժարաններ, ինչպես նաև հայ կաթոլիկներու և հայ բողոքականներու դպրոցները։

Բացի դպրոցական թաղային հանդեսներ-ներեն, որոնց անպատճառ ներկա ըլլալու կեր-թար Օրմանյան, ի հարկին ուղերձ մըն ալ ընելու համար աշակերտներուն, երբեմն Պատրիարքարանի մեջ ալ հանդեսի կոչ-ներ աշակերտները։ Այդ հանդեսներեն ա-մենեն հանդիսավորը թաղային վարժարան-ներու շրջանավարտներուն վկայականներուն բաշխումն էր, զոր իր ձեռքովը կկատարեր Օրմանյան, տեսակ մը ոգևորություն ստեղ-ծելու համար, ինչպես ինքը կրսե, հայ կյան-քի մեջ։

Հոգեկան այս ամայության առջև, որքան խոր պետք է ըլլար կսկիծը պատրիարքի մը, որ առաջին գիտնական հոգևորականն էր եղեր Պոլսո Աթոռին վրա Նալյանեն ի վեր, և որուն օրով, տարբեր պայմաններու տակ, տարբեր զարկ կրնար ստանալ մտավոր շարժումը հայ ժողովուրդի ծոցին մեջ։ Օր-մանյանի նման պատրիարքի մը օրով, որ մտավորական աշխատանքի համար իսկ ստեղծված մարդն էր, Պոլիսը դատարկ էր հողվով։

7. ԿՅԱՆՔԸ ԵԿԵՂԵՑՎՈ ՇՈՒՐՋ

Օրմանյան, անկարող օվասիսներ ստեղծելու դուրսի կյանքին մեջ, հոգեկան կյանքը ամփոփեց եկեղեցիներու հովանիին տակ։ Ամբողջ իր պատրիարքության օրով, եկեղեցվո շրջապատեն ալ դուրս չկրցավ երբեք ելլել հայ ժողովուրդի ազգային բովանդակ կյանքը։

Հոգևոր իշխանության հովանիին տակ էին ամենեն առաջ բարեսիրական հաստատությունները, և անոնց ամենուն գլուխը՝ Ս. Փրկչյան ազգային հիվանդանոցը։ Հիմնված 1832-ին Պեզճյան Հարությունամիրայի կողմե,— մեծագույնը բարերարներուն, որ երբևիցե հայտնված ըլլա հայ հորիզոնին վրա, և որ իր կենդանությունն իսկ ըրավ իր այլազան բարերարությունները և ինքը աղքատ մեռավ,— Ազգային հիվանդանոցը կշարունակվեր երեք քառորդ դարե ի վեր, զանազան հոգաբարձությանց հոգածութենեն անցնելով հաջորդաբար, բայց միշտ մնալով գուրգուրանքին ու հոգածությանը տակ ավելի մեծ պաշտպանի մը, որ հայ ժողովուրդն էր և որ, գիտակից անոր կատարելիք դերին, իր տասնոցներով պահեց ու հոգաց զայն այնքան տարիներ։

Պոլսո հայ կյանքին մեջ հոգեկան օվասիս մըն էր նաև այն պատվական հաստատությունը, որ Գալֆայան որբանոց կկոչվեր։ Համեստ հայ կնոջ մը՝ Սրբուհի մայրապետ Գալֆայանի նախաձեռնությամբ հիմնված 1866-ին, աղջկանց այս որբանոցը, թառած Խասգյուղի բարձունքին վրա, հայ որբուհիներ խնամեց ու դաստիարակեց այնքան տարիներ, ժողովուրդին լումաներուն ապավինած առավելապես։

Հոգևոր իշխանության շուրջ ամփոփված էին կտակներն ալ, մեծ մասամբ պատրիարքին անմիջական հսկողության տակ։ Բացի Սանասարյան և Իզմիրյանց կտակներեն, որոնց մասին հիշեցինք այլուր, մեծ ու պզտիկ շատ մը կտակներ ևս կային, որոնցմե ոմանք իրենց ուրույն հանձնաժողովներն ունեին, միշտ ազգային իշխանությանց մականին ներքև։

Եթե Ազգային հիվանդանոցն ու Գալֆայան որբանոցը համազգային հաստատություններ էին և կպահպանվեին Ազգին հավաքական գուրգուրանքովը, ամեն թաղ, իր սեփական եկեղեցվո շուքին տակ կծկված իր տեղական աղքատախնամներն ուներ։ Շողոջուն անուններ և շողոջուն գումարներ չէին պճներ անոնց ալ նվիրատվությանց ցուցակները։ Զանոնք պահողը միշտ հայ համեստ ժողովուրդն էր, մեծագույնը բարերարներուն, որովհետև ան է միայն, որ գիտե սրտանց տալ։

***

Հեռվեն դիտողի մը համար ծիծաղելի էր անշուշտ տեսնել պատրիարք մը, որ թաղե թաղ պատարագի կվազե, դպրոցական հանդեսներեն պակաս չէ, հասած տեղը քարոզ ու ճառ կխոսի։ Պետք էր ապրած ըլլալ Համիդի այդ վերջին տասներկու տարին, զգալու համար, որ ադոնք ևս բան մըն էին այդ մռայլ տարիներուն, երբ այլապես քով-քովի գալու հնարավորություն չուներ հայ ժողովուրդը, ու պատրիարքը, ինչպես ինքը կըսե, առիթներ կուզեր ստեղծել հոգևոր ժամանցներու։

Արդարև հանդեսի, տոնի, պատարագի խենդ էր Օրմանյան և առիթ կստեղծեր թաղերը պտտելու համար։ Ու հիմա զինքը մտիկ ընենք. «Պատրիարքական գործունեությանս նշանակալից մաս մը կկազմե եկեղեցական հանդեսներու ուժ տալս, դպրաց դասերու շատնալուն հետամուտ ըլլալս, եռաձայն և բառաձայն օրերուն հանդիսադիր ըլլալս, տոնախմբություններ սարքելու առիթ ստեղծելս։ Ոմանք այնպես ենթադրեցին, թե այս պարագաներով փառավորվելու ունայնասիրությենե շարժած ըլլամ, սակայն իմ դիտումս այս չէր։ Ազգային հանդեսներ բացարձակապես արգիլված էին, մինչ իմ համոզմամբ, այս տեսակ հանդեսներ զգացումներ բարձրացնելու, գաղափարներ մշակելու, հոգիներ սրտապնդելու մեծապես օգտակար են, և հարկավ ասոնք արգիլելու համար արձակված էր ընդհանուր արգելքը։ Եկեղեցիները այդ արգելքեն դուրս մնացեր էին,... պատրիարքին անձը սեղմումներե ազատ էր և անոր ներկայությամբ կշափավորվեր կամ կխափանվեր ոստիկանության ներկայությունը։ Ահա գաղտնիքը, որ զիս կհորդորեր եկեղեցական հանդիսությանց ուժ տալ և ամեն հանդիսությանց անձամբ ներկա ըլլալ»[109]։

Դպրաց դասերու իր տված զարկը ուրիշ բանի համար չէր ուրեմն, բայց եթե կերպով մը հոգեկան զբաղում հայթայթել հայ երիտասարդության։ Տարբեր խնդիր, թե հոգիները ժամուն բակեն երբեք դուրս չէին կրնար ելլել այդ կերպով ու թոթափել մռայլը, զոր իրենց կպարտադրեր վարչակարգը։ Տիրացու տիտղոսը, որմե հաճախ կամշնանք, ժամուն բակեն կուգա մեզ։

Օրմանյան կզգացնե նաև այլուր իր նպատակը դպրաց դասերու կազմության մղում տալուն։ Այնպիսի օրերու, երբ հայ համախմբումներն իսպառ արգիլված էին, դպրաց դասերը առիթներ էին քով-քովի գա-

109 «Հոգի և խոսք», էջ 252։

...ություն «Ասոնք շատցնելու մեջ ոչ միայն ...կտիրեր եկեղեցական պաշտամանց կարգադրությունն ու պայծառացումը, այլև ընդհանրական դրության օգուտը չկորսնցնելը. ...ի թեպետ ընկերություններ արգիլված էին, ...բայց դպրաց դասերը եկեղեցիներու հովանավորության ներքև դիտողութենե զերծ մնալնային»[110]։

Մեծ պահքը նույնպես կոգևորեր այն օրերու Պոլիսը։ «Արևագալ»-ի օրերը եկեղեցիները բազմությամբ կլեցվեին։ Օրմանյան ...ինքն ալ կպտտեր թաղե թաղ՝ Արևագալ ընելու։ Մեծ պահքի մեջ հինգշաբթի մըն ալ ...վերապահած էր Ղալաթիո եկեղեցին. ...ադարարողութենեն հետո Կեդրոնական ալ ...կբարձրանար ու դասարանները կայցելեր ...զատ-զատ։ Հետո շաքար կբաժներ աշակերտներուն։

Եռաձայն երգեցողության ներմուծումը Պոլսո հայ եկեղեցիներուն մեջ լավագույն առիթներեն մեկն եղավ Օրմանյանի համար ...ոգևորության պահ մը ստեղծելու, հոգիներու կոնծած այդ շրջանին։ Մենք ականատեսներն եղանք, և ինչո՞ւ չէ, նաև մասնակիցները այդ ոգևորության, որովհետև ան մեր իսկ ծոցեն սկսավ՝ Կեդրոնականեն։ Համեստ պատրաստությամբ, բայց մեծ կորովի տեր երաժշտագետ մը, Լևոն Չիլինկիրյան,— որուն անունը թող չմոռնա գուրգուրանքով պահել հայ երաժշտության պատմությունը,— երաժշտության ուսուցիչ կարգված էր Կեդրոնականի։ Հրաշքի պես բան մը եղավ երգչախումբի մը կազմությունը այդքան արագ Կեդրոնականի իսկ տղոցմեն, և եռաձայն պատարագը, զոր Չիլինկիրյան հորիներ էր և զոր խումբը սորվեցավ նույնքան արագ, երգելու համար Ղալաթիո եկեղեցվո մեջ։ Խումբը, որուն միացեր էին տասնյակ մը արվեստասերներ ալ դուրսեն, դարձավ խկույն հանրային գուրգուրանքի առարկա, և պիտի դառնար, քանի մը տարի հետո, կորիզն իսկ Կոմիտաս վարդապետի մեծ երգչախումբին։ Անհո՞ւն էր կեդրոնականցիներուս ոգևորությունը այդ օրերուն. ամեն աշակերտ կերպով մը մաս կկազմեր խումբին, մեզ նման խեղճ բաղաձայններն անգամ։ Նվաստս,— այն ատեն բանաստեղծ, ավա՜ղ,— բառեր կհորինեի եղանակներուն համար, զորս երգչախումբը պիտի երգեր իր մոտակա համերգներուն մեջ, և եռաձայնի օրերուն քշո՞ց կշարժեի սեղանին վրա, ինչպես քշոց շարժելու եկավ քանի մը անգամ Մեծարենցն ալ, որ հիվանդության համար դպրոցեն մեկնած, բայց հաճախ կհանդիպեր դպրոց, և խումբին մասնակցող բաղաձայններեն մեկն էր Ռափայել Շիշմանյանի հետ մեկտեղ, մինչ իր ընկերներեն ավելի բախտավորները, ինչպես Գառնիկ Թուղլաճյանը, Կարո Քյուրքճյանը, Պողոս Գևորգյանը և այլն, խումբին մեջ կերգեին արձակհամարձակ։

Կերևակայեք Օրմանյանի հրճվանքը ի տես եռաձայնի հաղթանակին, որ հաղթանակ մըն էր իրեն համար ալ. ան ստիպվեր էր մաքառիլ բարձրաստիճան կամ մանրուկ տիրացուներու դեմ, որոնք Հայ Եկեղեցվո ավանդությանց հակառակ կգտնեին բազմաձայն երգեցողությունը և որոնց գլուխը, թեև հարդին տակեն, Վահրամ արքեպիսկոպոս Մանկունին էր, և միևնույն ատեն անվնաս դարձնել մատնության թուղթերը, որոնք կտեղային Յելդեզ՝ Համիդը զգուշացնելով այս նորութենեն, որ կոչված էր բազմություն համախմբելու եկեղեցիները, «ով գիտե ինչու»։

Ազգային հիվանդանոցի տոնախմբությունը ևս, ամեն տարի Համբարձման օրը, մեծ շուքով տոնել կուտար Օրմանյան, պատրանքը տալով կարծես Ազգային Սահմանադրության տարեդարձներուն, որոնք նույնպես նույն օրերուն կտոնվեին երբեմն, նախ Բեյքոզի պուրակներուն, և հետո Ազգային Հիվանդանոցի պարտեզին մեջ։

Օրմանյան հոբելյաններ ևս կփնտռեր, քիչ մը ոգևորություն մտցնելու համար այս կամ այն թաղին մեջ։ Այս կարգի հոբելյաններեն մեկն էր Բերայի Ս. Երրորդություն եկեղեցվո հարյուրամյակը, զոր Օրմանյան տոնել տվավ բացառիկ շուքով 1903-ին։ Տոն մը, ինչ առթիվ ալ ըլլա, միշտ կստեղծե խանդավառություն մը, ու խանդավառության ամեն վայրկյան սփոփանքի կաթիլ մըն է տառապող սրտերուն համար։ Բայց հայ ժողովուրդի ապրած դժնդակ օրերուն համար իսկապես հեգնություն մըն էր արձանագրությունը, զոր զետեղեցին Ս. Երրորդության ճակատը իր տոնախմբության առթիվ, և որ կըսեր, թե հոբելյանի այս հանդիսության Հայ Ազգը «տօնէ ու ցնծայ»։ Օրմանյանը երբ տապալեցին, «տօնէ ու ցնծայ» բառերը սրբեցին քարին վրայեն։

Օրմանյանի ներմուծած նորություններեն մեկն ալ «կանանց հատուկ պատարագ»-ն էր, որ, Օրմանյանի կարծիքով, իբր թե կիները ավելի ևս պիտի տաքցներ դեպի իրենց եկեղեցին, և հետևաբար՝ դեպի հայ ավանդությունները։

Օրմանյան իրեն համար պարծանք կսեպե դարձյալ իր մասնակցությունը բերած ըլլալ սուգի ինչ-ինչ արտահայտությանց, որոնք ազգային ցույցի մը բնույթն ունեին ինքնին։ Իր կազմակերպած հուղարկավորությունը նախ Գրիգորիս Ալեաթճյան եպիս-

110 «Ազգապատում», Գ. էջ 5109։

կոպոսին, զոր Համիդ տարիներե ի վեր աքսորական Պոլիս կպահեր իր «վտանգավոր» անցյալին համար, և որ ճիշտ այդ պատճառով չկրցավ Կիլիկիո կաթողիկոս ընտրվիլ հակառակ Ազգին կամքին։ Քաջություն էր բացառիկ պատիվներով թաղել զայն, և «վայելուչ և փառավոր ընել իր հուղարկավորությունը», ինչպես կըսե Օրմանյան։

Քաջություն էր նույնպես Խրիմյանի մահվան առթիվ Օրմանյանի կազմակերպած փառաշուք Հոգեհանգիստը Մայր Եկեղեցվո մեջ, դեսպաններու իսկ ներկայությամբ։ և խոսած քարոզը մարդու մը մասին, զոր Համիդ թշնամի նկատած էր և կնկատեր միշտ թուրք պետության և որուն Պոլսեն անցքը թույլ չէր տված, երբ ան կաթողիկոս ընտրվելե հետո, Երուսաղեմի իր աքսորեն էջմիածին պիտի մեկներ։

Հետմահու կազմակերպած հարգանքի բացառիկ ցույցերուն կարգին, Օրմանյան կհիշե Աբիկ Ունճյանի հուղարկավորությունը ևս, մարդու մը, որ թեև մեծատուն, բայց հայու սիրտ կրեց և ոչինչ չխնայեց հայուն համար, և որ սակայն զոհ գնաց հայու մը գնդակին։ Աբիկ ունճյան իր ազգային զգացումներուն համար բանտ ալ նստած էր տագնապի տարիներուն, և Օրմանյան իր դամբանականին մեջ հանդգնությունն ունեցավ ադոր ալ ակնարկելու, բանի տեղ չդնելով հանգուցյալին կտակը՝ անշուք թաղվելու և անոր պարագաներուն թախանձանքներ։

Քանի մը տարին անգամ մը Սահակ-Մեսրոպի տոնը ևս ոգևորության պահ մը կստեղծեր Պոլսո մեջ. այդ օրն էր, որ տեղի կունենար Հովսեփ Իզմիրյանց գրական մրցանակի մրցանակաբաշխությունը։

Հովսեփ Իզմիրյանց, ղզլարցի, 10 000 ռուբլիի կտակ մը ըրեր էր 1884-ին, կտակված գումարին տոկոսով վարձատրելու համար գրականության և պատմության վերաբերյալ լավագույն երկասիրությանց հեղինակները։

Կտակին նախատեսած մնայուն հանձնաժողովը Պոլիս կմնար և նախագահն էր ինքը պատրիարքը։ Պոլսո մեջ տեղի կունենային մրցանակներու բաշխման հանդեսներն ալ, և ընթերցումը քննիչներու տեղեկագիրներուն, որոնք երբեմն բանասիրական ուսումնասիրությանց ընտիր էջեր կըլլային։

Հոգեկան կյանքը, Օրմանյանի օրով, կծկըտած էր այսպես Եկեղեցվո հովանիին տակ։ Եվ այնուամենայնիվ ան կռնծած կմնար։ Շատ հզոր էր խորշակը, որպեսզի պզտիկ օվասիսներով ան թարմանալ կարենար։

8. ԳԱՎԱՌԸ ԵՎ ԻՐ ՑԱՎԵՐԸ

Հին պատմություն է։ Գավառը միշտ դժգոհ եղած է Պոլսեն։ Զայն մեղադրած է միշտ, թե անտարբեր գտնված է իր ցավերուն ու կարիքներուն։

Ու տրտունջքը, շատ ալ անտեղի չէր։ Հայկական Բյուզանդիոնը տաք չէր դեպի գավառը։ Ան իր տարբեր հոգերը, ինչպես և իր սեփական զբոսանքներն ուներ, որպեսզի կարենար գավառը ևս մտքեն անցնել։

(Պոլիս ըսելով մենք այստեղ այն այլասերած դասը կհասկնանք, որ լրիվ քաղքենի դարձած, Եվրոպան կկապվեր, առանց ներսեն բան մը փոխած ըլլալու։ Այլապես բուն Պոլիսը գավառ մըն էր ինքն ալ, ուր կուգային ձուլվիլ բոլոր գավառները, ամեն մեկը բան մը բերելով հետը)։

Օրմանյանի օրով շատ ավելի ճնշված էր գավառը։ Համիդ և իր արբանյակները կոսոկային գավառեն. կկարծեին, թե ամեն շարիք և ամեն վտանգ հոնկե կմտնե Պոլիս։ Պոլսո դռները փակած էին հետևաբար գավառին առջև, և ամեն գավառացի, որ կասկած կներշնչեր իրենց Պոլսո մեջ, կքշեին իր տեղը, երբեմն ավելի հեռուները։

Դրություն մըն էր այս, որ առաջին հերթին կանդամալուծեր գավառի հայ առևտուրը, որովհետև հայ վաճառականներն ալ ենթակա էին հաճախ միևնույն սեղմումներուն։ Ասկե զատ, փակ էր դուռը ապրուստ ճարելու համար գավառեն եկող հայ պանդուխտներուն. «խաներուն մեջ ղարիբ ա՛լ մնացած չէր», ու քարափին վրա հայ բեռնակիր այլևս չկար, մանավանդ Համիդի վերջին տարիներուն։ Պոլիսը փակ էր նաև ուսում առնելու համար Պոլիս գալ ուզող հայ պատանիներուն։ Որոշ բախտավորություն մոտակա գավառներու հայերն ունեին, որոնք երբեմն կհաջողեին ներս սպրդիլ Պոլսո դռներեն։ Հաճախ բացառություն էին հայ կաթոլիկներն ալ, որոնք հայ չէին կոչվեր այլևս, այլ... «կաթոլիկ միլեթի»։

Արդ, հայ գավառը դժգոհ էր Ազգեն և իր պատրիարքեն, ու միշտ կտրտնջար, թե անոնք լքած են զինք իր բախտին։ Ինքզինք զրկված կզգար ան որևէ պաշտպանութենե բոլոր այն կեղեքումներուն, ճնշումներուն և սեղմումներուն դեմ, որոնց ենթակա էր տեղական իշխանությանց կողմե, և որոնք կասատկանային քանի կերկարեր վարչակարգը։

Օրմանյան իր դեմ ուղղված այն մեղադրանքներուն, թե խուլ մնացած է գավառի ցավերուն հանդեպ, կսիրե պատասխանել, թե ոչ մեկը իրեն չափ սիրած է գավառը։ Թե, երբ օրվան եպիսկոպոսներեն շատերը խույս կուտային գավառեն, ինք Կարինեն սկսած է իր գործունեությունը, հոն մնացած է ամբողջ յո-

Թը տարի, և անկե բաժնված է ոչ իր բաղձանքովը։ Թե, ասկե զատ, սորվեցուցած է իր աշակերտներուն ալ գավառը սիրել, և աշխատած է, որևէ թեմ թափուր չթողուլ։

Եթե Օրմանյան չէ կրցած գավառի բոլոր ցավերուն դարմանը գտնել, ան կըսե, թե մեղքը իրենը չէր։ Երբ Համիդ գավառ բառեն կսոսկար, ուրիշ ի՞նչ կրնար ընել հայոց պատրիարքը, եթե ոչ բողոքել ու ողոքել։ Ճիշտ է, արդարև, որ ան դիմումներ ըրած էր, որպեսզի գավառի մեջ տիրող ճնշումները մեղմանան, տուրքերու առթիվ կիրարկվող կեղեքումները վերցվին, ինչպես և ճամբորդության սեղմումները թեթևնան։ Բայց ճիշտ է և այն, որ Օրմանյան բաղձացող չէր, որ հայերուն թույլ տրվի զանգվածորեն հեռանալ գավառեն։

Օրմանյան ինքն է, որ կխոստովանի. «Գավառացվոց մայրաքաղաք գալու արգելքին դեմ մասնավոր պաշտպանություններ ըրած եմ, բայց ընդհանուր ազատության չեմ աշխատած, վասնզի ուզած եմ, որ ազգային գավառներ ազգայիններով բազմամարդանան, և հայաբնակ նահանգները անհայացնելու վտանգը հեռանա»[111]։

Փշոտ խնդիր էր եղեր սկիզբեն ի վեր հայ գավառները շամայացնելու հարցը։ Շատերայն համոզման էին, որ ինչ ալ ըլլան ցավերը զորս կկրեր իր օջախին մեջ, հայը պետք չէր իր բույնը լքեր։ Օրմանյան ևս այդ կարծիքեն եղած է առաջին օրեն։

Ահա թե ինչ կգրե ինքն իսկ այդ մասին. «Համարձակ պետք է ըսենք, թե Օրմանյան Ղալաթիո քարոզչության և Կարնո առաջնորդության օրերեն սկսելով հայտնի հակառակորդ եղած էր գավառացիներու պանդխտության, որ հայաբնակ գավառներու հայաբնակությունը կնվազեցներ, լքյալ ընտանիքները խեղճության կմատներ, և քաղաքներու ու նավահանգիստներու մեջ պանդուխտ բազմության կենցաղականն ու բարոյականը կապականեր։ Նա հայերուն իրենց ծննդավայրին մեջ մնալուն և աճելուն մեծ քարոզիչը եղած էր, որ եթե գավառացին տեղական դժվարություններու դիմաց կգտնվեր, այն ալ օգտակար կսեպեր անոր միտքը սրելու և սիրտը մրելու և յուր բնագավառին մեջ յուր բարությունը պատրաստելու։ Այդ ձևը նպաստավոր կգտներ նաև Հայկական խնդիրին տեսակետով. զի հայկական տարրին նվազելովը Հայկական խնդիրին գետինն ալ կվնասվեր, կալլածն ալ կվտանգվեր։ Այս վնասեն ազատելու համար հարկ էր հայ տարրը աճեցնել, ընդարձակել, դաստիարակել, հարստացնել, հողատեր ընել և հոգալ, Հայկական խնդիրին ամրանալուն ծառայել։ Ահա Օրմանյանի և Վարչության տեսակետը, անպատրաստ և ապաժամանակ և անբանական փորձերե և ցույցերե խուսափիլ, որոնք Ազգը ևս քան զևս տկարացնելու և վտանգելու կառաջնորդեին։ Այս նպատակով էր, որ շաշխատեցան հայուն տեղեն ելնելը դյուրացնելու, այլ մանավանդ աշխատեցան դուրս ելլողներուն անպայմանն և համարձակ վերադարձին, և բոլոր փախչոտական հայերուն իրենց տեղերը դառնալուն»[112]։

Բայց չէր բավեր պնդել, որ հայը իր հայրենական օջախին կապված մնա միշտ։ Պետք էր ամոքել իր վիշտերն ու կարիքները։ Իսկ Պատրիարքարանը զուրկ էր այդ հնարավորութենեն։ Ինչ որ կփորձեր ան, հեռու էր աղետը դարմանելե, ոչ իսկ սփոփելե զայն։ Այդ փորձերը ձևական մխիթարութենե մը անդին չէին կրնար անցնիլ հաճախ։

«Գավառներու և վիճակներու հետ,— կըսե Օրմանյան,— տևական և հաստատուն հարաբերություն եմ պահած, ամեն գիրերու պատասխանած եմ [Պատրիարքարանի] դիվանները ձանձրացնելու չափ, փորձով գիտնալով, որ խնդրանքին գոհացնել անհնարին եղած պարագային իսկ, գավառացվոց մեծ մխիթարություն է գոնե երկտող պատասխան մը առնել, որով կհուսադրվին, թե լքված և երեսե թողված չեն»[113]։

Պզտիկ սպեղանիներով մեծ վերք մը կարելի չէր ամոքել։ Շատ մեծ էր ժողովուրդի մը տանջանքը իր անզորության մեջ, և շատ խորունկ իր հուսահատությունը, որպեսզի սփոփիչ քանի մը խոսքով մեղմանար ահավոր վիշտը։

Ու մանավանդ նյութական կարիքներն ալ կային, ու տեղ-տեղ կարոտը նաև օրվան պատառ մը հացին։

Օրմանյան, երբ պատրիարքության կոչվեցավ, ինքզինք գտավ ահավոր պատկերի մը առջև։ Ազգային կյանքը կազմալուծված էր, մարդիկ, սարսափահար, քաշված էին իրենց պատյանը, ու գազան մը կար, որ կհսկեր քիչ հեռուն, ճիրանները միշտ բացած։ Ու փոխարեն, կարիքներու ծով մը առջին, ու գավառ մը, որ ճար ու դարման կաղերսեր։

Օրմանյան այդ գավառը կճանչնար, ու անոր ցավերը գիտեր որևէ մեկեն ավելի։ Յոթը տարիներ ապրած էր ինք անոր ծոցին մեջ, ու մոտեն տեսած անոր կարոտությունները։ Այն օրերուն սովն էր, որ կլլկեր զայն, ու պետք էր եղած սովին դեմը կռվիլ։ Սովելոց հանձնաժողովը, որուն աշխատակցած էր Օրմանյան իր եռանդին բոլոր թափովը, հրաշք էր գործած ատենին։

111 «Հոհք և խոսք», էջ 30։

112 «Ազգապատում», Գ, էջ 5085։

113 «Հոհք և խոսք», էջ 32։

(Շարունակելի)

ՀԱՆԳԻՍ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆԻ
(1894—1961)

Ամերիկայի Միացյալ Նահանգների Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսը «սրտի խորունկ վշտով» Վեհափառ Հայրապետին ուղղված իր հուլիս 17 թվակիր հեռագրով հաղորդում էր գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի մահը, որը տեղի է ունեցել հուլիսի 17-ին, երկուշաբթի, Մայամիում (Ֆլորիդա, ԱՄՆ)։

Վեհափառ Հայրապետը, որը հովվապետական այցելությամբ գտնվում էր Ստամբուլում, հետևյալ ցավակցական հեռագիրն էր ուղղում Տ. Սիոն արքեպիսկոպոսին.

«Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանի մահվան գույժը Մեր սիրտը լեցուց կսկիծով։ Մեր վերջին ողջույնը և օրհնությունը հանգուցյալին, որ երկար տարիներ նվիրումով և հավատարմությամբ ծառայեց Ս. Եկեղեցիին և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին։

Աստվածային ողորմություն, խաղաղություն և լույս իր բարի ու արդար հոգիին»։

Վեհափառ Հայրապետի հրահանգով, հուլիսի 23-ին Մայր Տաճարում կատարվում է Հոգեհանգստյան պաշտոն։

Հանգուցյալ սրբազանը ծնվել էր Թուրքիայի Զմյուռնիա քաղաքում 1893 թվականին։ Ավազանի անունը եղել է Արամ։ Նախնական կրթությունը ստացել է տեղի ազգային վարժարանում։

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին անցնում է Կահիրե, ուր աշխատում է ֆրանսիական դրամատան մեջ։ Այնուհետև արձանագրվում է ֆրանսիական լեգեոնի մեջ որպես կամավոր։

1920 թվականին մտնում է Երուսաղեմի հայոց Ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանը՝ կուսակրոն հոգևորական դառնալու մտադրությամբ։

1921 թվականին սարկավագ է ձեռնադրվում, իսկ 1923 թվականին՝ աբեղա, օծակից ունենալով Տ. Կյուրեղ արքեպիսկոպոս Իսրայելյանին, ձեռամբ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Աղավնունու։

1923 թվականին նորընծա աբեղա՝ նշանակվում է Յաֆայի հայոց Ս. Նիկողայոս վանքի ժամարար, ուր պաշտոնավարում է մինչև 1925 թվականը։

Այնուհետև 1925—1927 տարիներին պաշտոնավարում է Մարսելում, որպես հոգևոր հովիվ, գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի ձեռքի տակ, ուր և ստանում է մասնավոր վարդապետության աստիճանը։

1927 թվականին հրավիրվում է ԱՄՆ, որպես Յունիրն Սիտիի Ս. Խաչ եկեղեցու հովիվ։

1932 թվականին ծայրագույն վարդապետության աստիճան է ստանում Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանից, և ապա, վերջինի սպանությունից հետո, նշանակվում է առաջնորդական փոխանորդ ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմին։

21 1935 թվականին եպիսկոպոս է ձեռնադրվում Ս. Էջմիածնում Տ. Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսից։

21 1942 թվականին ընտրվում է Կալիֆոռնիայի հայոց թեմի առաջնորդ և պաշտոնավարում է մինչև 1946 թվականը։

21 1947 թվականին հրավիրվում է Լոս Անջելոսի Ս. Խաչ եկեղեցու հովվության։

1 1952 թվականին նշանակվում է Կենեկտիկուտի և Պետերսոնի եկեղեցիների հոգևոր հովիվ։

1 1954—1958 թվականներին ընտրվում է ՄԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի առաջնորդ։

2 Հուլիսի 22-ին, շաբաթ օրը, եպիսկոպոսական Սեյնտ Ջան դը Դիվայն եկեղեցում կատարվում է հանգուցյալ սրբազանի վերջին օծման ու թաղման արարողությունը առաջնորդ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոսի նախագահությամբ, որն իր դամբանականում անդրադառնում է հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի կյանքի և գործունեության վրա։

Դամբանական է խոսում նաև գերաշնորհ Տ. Սկեյֆ եպիսկոպոսը։

Հանգուցյալ սրբազանի աճյունը ամփոփվում է Ֆրոնքլիֆի գերեզմանատանը։

Հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Գալֆայանը Հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից մեկն էր, սիրված իր ժողովրդից, հարգված օտար եկեղեցական շրջանակներից և գնահատված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետից։

Հանգի՜ստ նրա ոսկորներին։

Խաղաղությո՜ւն նրա հոգուն։